ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ելակետային հետազոտություն

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում

Վխուրյան բազմաբնակավայր համայնք

«Քաղաքացիության ինդեքս» ելակետային հետազոտությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով, «CapSLoc. կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագրի շրջանակներում:

Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագիրն իրականացվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով:

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագիրն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական եւ խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ:

Տարբերակ՝	1.2	Հեղինակներ՝ Հասմիկ Թամամյան Պաոլո Կրունյոլա
Ամսաթիվ՝	11 սեպտեմբերի 2023թ.	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 1

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 8

2. ՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ 12

2.1. ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ 12

2.2. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ 14

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 19

3.1. ԸՆՏՐԱՆՔ 19

3.2. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ 22

4. ՀԱՐՑՈՒՄ 25

4.1. ԸՆՏՐԱՆՔ 25

4.2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ 28

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 39

5.1. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» Ո՞Ր ԸՆԿԱԼՈՒՄՆ Է ԳԵՐԱԿՇՌՈՒՄ 39

5.2. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՄԱՐԴԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՈՐՍ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 47

5.3. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՆ ԵՆ ԱՌԱՎԵԼ ՈՐՈՇԻՉ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 69

5.4. Ո՞Ր ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Է ՊԵՏՔ ԲԱՐԵԼԱՎԵԼ 74

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 81

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 87

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ 89

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ 91

ՀԱՎԵԼՎԱԾ Ա Տվյալների հավաքագրման գործիքի օրինակ 92

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կարողությունների զարգացում հանրակրթության մակարդակում

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան բազմաբնակավայր համայնք

«Քաղաքացիության ինդեքս» ելակետային հետազոտությունն իրականացվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության/ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտությունն իրականացվել է Ախուրյան բազմաբնակավայր համայնքում իրականացվող եռամյա «CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագրի շրջանակներում: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

«CapSLoc. Կարողունակ և կայուն համայնքահեն զարգացում» ծրագիրն իրականացվում է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից՝ «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի, «Կանայք հանուն զարգացման» ՀԿ-ի, «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի և «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ:

CapSLoc ծրագիրը նպատակ ունի ուղղորդել համայնքահեն զարգացման գործընթացներն ու էկոհամակարգը՝ ծառայելով որպես հարթակ, որտեղ Ախուրյան համայնքի բնակչությունը և տեղական իշխանությունները, ծրագիրն իրականացնող ՀԿ-ները և դոնոր կազմակերպությունները, մասնավոր ընկերությունները և այլ շահագրգիռ կողմեր կարող են հանդիպել, փոխշահավետ գործընկերություն հաստատել և կայուն լուծումներ գտնել իրենց տեղական կարիքների համար:

Հետազոտությունն իրականացվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից: Այն Հայաստանում գործող շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակն է նպաստել հայաստանյան համայնքների կայուն ու ներդաշնակ զարգացմանը՝ տեղական ժողովրդավարության խթանման, մարդկային ներուժի դրսևորման և տարածաշրջանային համագործակցության զարգացման միջոցով: Այս զեկույցի հեղինակները՝ Հասմիկ Թամամյանը (հետազոտական խմբի ղեկավար/ազգային փորձագետ) և Պաոլո Կռունյոլան (միջազգային փորձագետ) իրենց երախտագիտությունն են հայտնում բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել Քաղաքացիության ինդեքսի հետազոտությանը, մասնավորապես.

- Արաքս Միքայելյանին, CapSLoc ծրագրի թիմի ղեկավար (ՈՒԿԶՀ),
- Շուշան Մելիքյանին, CapSLoc ծրագրի օգնական (ՈՒԿԶՀ),
- Լիլիթ Մինասյանին, ԱՏՀ և հեռակառավարման փորձագետ,
- Անահիտ Հակոբյանին, դաշտային աշխատանքների համակարգող,
- Հարցազրուցավարների թիմին՝ Անահիտ Հարությունյանին, Ջուլիետա Պետրոսյանին, Քնարիկ Մանուկյանին, Մանյա Պետրոսյանին, Արևիկ Տոնոյանին, Մարիամ Իսրայելյանին, Հռիփսիմե Պետրոսյանին:

Հեղինակներն առանձնահատուկ շնորհակալություն են հայտնում Տաթևիկ Մարգարյանին՝ իրեն բնորոշ սահուն և դիպուկ հայերենով Քաղաքացիության ինդեքսի ելակետային հետազոտության զեկույցը թարգմանելու համար:

CapSLoc

Գալով հարաբերությունների չորս տիրույթներինՔաղաքացիության ինդեքսի ելակետային հետազոտությունը ներկայացնում է «քաղաքացիության զգացողության» պատկերը Ախուրյան համայնքում: Մենք «քաղաքացիության զգացողությունը» մեկնաբանում ենք որպես զգացմունքների և սոցիալական նորմերի խառնուրդ, որը ներառում է համայնքին պատկանելու զգացումը, դրա պատշաճ գործառնության և ապագա զարգացման համար պատասխանատվության զգացումը, ինչպես նաև համայնքի անդամների և հաստատությունների վստահելիությունը և դրանց նկատմամբ վստահությունը՝ որպես համագործակցության նախապայման:

Գիտական հետազոտությունները ցույց են տվել, որ քաղաքացիության զգացողությունը սոցիալական և տնտեսական զարգացման, ինչպես նաև լավ հանրային կառավարման առանցքային գործոն է:

Քաղաքացիության ինդեքսի ելակետային հետազոտությունը նպատակ ունի չափել քաղաքացիության զգացողությունը Ախուրյան համայնքում: Դա օգտակար կլինի տեղական իշխանության և շահագրգիռ կողմերի համար՝ աշխատանքի առաջնահերթությունները ավելի լավ հասկանալու և գործողությունների այնպիսի ծրագրեր ու նախագծեր մշակելու համար, որոնք կարող են առավել արդյունավետ լինել համայնքահեն զարգացումը խթանելու գործում:

Չափումը հիմնված է քաղաքացիության զգացողության 4 համապատասխան տիրույթների վրա: Ենթադրվում է, որ փոխհարաբերությունների այս չորս ոլորտներն են մարդկանց մոտ ձևավորում համայնքում ներգրավված լինելու զգացողությունը.

- հարաբերություններ հանրային տարածքի հետ,
- հարաբերություններ մյուսների հետ,
- հարաբերություններ հանրային կառույցների հետ,
- հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ:

Փոխհարաբերությունների այս չորս տիրույթների վերաբերյալ ախուրյանցիների գնահատականն ուսումնասիրվել է հարցման միջոցով, որը մշակվել և իրականացվել է գիտականորեն հիմնավորված մեթոդաբանության և ընտրանքի հիման վրա: 2023 թվականի հունիսի 10-ից 21-ն ընկած ժամանակահատվածում լրացվել է 610 հարցաթերթ: Ընտրանքային համախմբությունը կազմվել է ընտրանքի նորարարական «Աշխարհագրական տեղեկատվական համակարգի» (ԱՏՀ) օգնությամբ՝ Ախուրյան խոշորացված համայնքը կազմող բնակավայրերի պատահական ընտրանքից պատահականության սկզբունքով տնային տնտեսություններ ընտրելու միջոցով: Ըստ բնակավայրերի՝ հարցվողները խմբավորվել են 3 ստրատաների՝ երկու կենտրոնական և համեմատաբար մեծ (5000-ից ավելի բնակչությամբ) Ախուրյան և Ազատան բնակավայրերի բնակիչներ (Ստրատա 1), միջին չափի՝ 1000-ից մինչև 5000 բնակչությամբ բնակավայրերի բնակիչներ (Ստրատա 2) և ավելի փոքր (1000-ից պակաս բնակչությամբ) ու ծայրամասային բնակավայրերի բնակիչներ (Ստրատա 3): Տվյալների հավաքագրման փուլի ընթացքում և դրանից հետո իրականացվել են տվյալների որակի խիստ ստուգումներ՝ տվյալների լիարժեք հուսալիությունն ապահովելու համար:

Առաջին հարցադրումը վերաբերում է համայնքային ինքնությանը: Ախուրյանցիների մոտ խոշորացված համայնքի հետ առնչության ընկալումը ընդհանուր առմամբ ավելի թույլ է, քան համայնքային պատկանելիության այլ

ստրատաների հետ՝ «բնակավայր» և «երկիր» հասկացությունները ամենաբարձրն են գնահատվել այս առումով: Բացահայտվել է «սկեպտիկների» մի խումբ՝ մարդիկ, որոնք հարազատ են համարում իրենց բնակավայրը, բայց ոչ խոշորացված համայնքը: Այս խումբն ավելի մեծ է Ստրատա 3-ում, որտեղ, ըստ երևույթին, մարդիկ այնքան էլ կողմ չեն խոշորացմանը, բայց բավականին հետաքրքրված են համայնքի ծրագրերով: Ավելի մեծ բնակավայրերում լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի մեկ այլ խումբ՝ մարդիկ, որոնք իրենց առնչությունը չեն զգում ոչ խոշորացված համայնքի, ոչ էլ բնակավայրի նկատմամբ՝ հաշվարկվել է համադրական գնահատական (համաթիվ), որտեղ ներառվել են հարցման տարբեր բաղադրիչները: «Հարաբերություններ մյուսների հետ» ոլորտի համաթիվը ստացել է ամենաբարձր գնահատականը (77/100): Այն վերաբերում է Ախուրյան խոշորացված համայնքում ապրող մարդկանց ընդհանուր գնահատանքին, նրանց վստահելիությանը և մյուսներին օգնելու պատրաստակամությանը: Այս հարթությունը, ըստ երևույթին, ամենակարևորն է Ախուրյան համայնքում ապրելու հարցում գոհունակության տեսանկյունից:

Երկրորդ տեղում (74/100) «հանրային տարածքի հետ հարաբերություններն» են: Տեղանքի, բնական և մարդակերտ միջավայրի գեղեցկությունը մեծ դեր է խաղում տվյալ համայնքի անդամների մոտ հպարտության զգացում ձևավորելու գործում և բարոյական արժեքները արտահայտում է ֆիզիկական, տեսանելի ձևով: Ախուրյանցիները դա գնահատում են և կարևոր են համարում նաև այստեղ ապրելու հետ կապված գոհունակության տեսանկյունից:

«Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտի համաթիվը զբաղեցնում է երրորդ տեղը: Համայնքում բնակվելը իր հետ նաև որոշ խնդիրներ է բերում, որոնք հնարավոր է հաղթահարել ինչպես որակյալ հանրային ծառայությունների, այնպես էլ բնակիչների քաղաքացիական վարքագծի շնորհիվ: Ակնառու օրինակ է համայնքի մաքրությունը: Համատեղ բնակության հետ կապված խնդիրները հաղթահարելու՝ համայնքի կարողության ընդհանուր գնահատականը լավ է (69/100), թեև բարելավման որոշակի տեղ կա:

Վերջին տեղում «հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտն է: Սա կարծես թե հարաբերությունների ամենաբարդ ոլորտն է: Այս ոլորտի համաթվի ցածր միավորը (53/100) գալիս է քաղաքացիների կողմից հարկերի արդարացի վճարման վերաբերյալ համեմատաբար ցածր գնահատականներից, տեղական քաղաքականության նկատմամբ հետաքրքրության պակասից, հանրային պաշտոնյաների արդարացի չլինելու վերաբերյալ հանրային ընկալումից և, ամենից առաջ, տեղական քաղաքականության մշակմանը ակտիվ մասնակցելու ցանկության պակասից: Այսինքն, քաղաքական մասնակցությունն ընդհանրապես ազդեցիկ չի համարվում համայնքում ապրելիս երջանիկ զգալու համար:

Այս գնահատումը («Քաղաքացիության զգացողություն» = 68) կարող է օգտակար լինել հետագա գործողությունների համար առաջնահերթություններ ընտրելիս: Անշուշտ, հարկավոր է ավելի մանրամասն ուսումնասիրել հանրային կառույցների հետ հարաբերությունները: Բացի այդ, այս տվյալներից որոշակի առաջարկություններ են բխում.

1. Հարցման ընթացքում արտահայտված՝ մյուսների հանդեպ ախուրյանցիների դրական վերաբերմունքը արժեքավոր առավելություն է, որը պետք է պահպանել և զարգացնել ապագայում:

Միաժամանակ, պետք է հաշվի առնել, որ դժվարին տնտեսական վիճակում գտնվող անձինք հակված են ավելի քննադատաբար վերաբերվել մյուսներին: Ավելին, երիտասարդները կարծես թե ավելի քիչ են ցանկանում վստահել ուրիշներին, քան տարեցները:

2. Ախուրյան համայնքը հիմնականում ընկալվում է որպես հարգայից և կարգապահ համայնք: Ավելի բարձր կրթական աստիճան ունեցող քաղաքացիները համեմատաբար ավելի քննադատորեն են մոտենում այս հարցին, և նրանց կարծիքը պետք է հաշվի առնել, քանի որ այս մարդիկ կարող են առանցքային դերակատար լինել զարգացման ապագա ռազմավարություններում:

3. Գեղեցկությունը պետք է ընդունվի որպես քաղաքացիության զգացողության կարևոր պայման: Իրականում այս գնահատականը բարձր է, և դա շատ դրական է: Իհարկե, սա նաև զգացմունքային կողմ ունի, քանի որ այստեղ ծնված մարդիկ ավելի շատ են հակված իրենց համայնքը գեղեցիկ համարել: Միևնույն ժամանակ, տեղանքի և շրջակա միջավայրի հետ կապված հարցերում որոշումներ կայացնելիս գեղեցկությունը պետք է ընդունվի որպես կարևոր չափանիշ:

4. Քաղաքացիների անհատական փորձառության և քաղաքական ինստիտուտների միջև անջրպետը պետք է վերացվի: Իրական վտանգ կա, որ քաղաքացիները սահմանագիծ են դնում «մեր՝ քաղաքացիներիս», իրենց դիտարկելով ուղղակի որպես հանրային ծառայությունների օգտատեր կամ հաճախորդ, և «նրանց՝ պաշտոնյաների» միջև, որոնք հիմնականում ընկալվում են որպես անարդար և իրենց դերին չհամապատասխանող: Քաղաքացիները պետք է պատասխանատվություն զգան Ախուրյան համայնքում լավ կառավարման համար:

5. Քաղաքականության մշակման գործընթացում ուղղակի մասնակցությունը կարող է ուսուցման հնարավորություն լինել բնակիչների շրջանում քաղաքացիական պատասխանատվությունը խթանելու համար: Այդ մասին է վկայում փոքր ու մեծ բնակավայրերի բնակիչների տեսակետների տարբերությունը: Ավելի փոքր բնակավայրերի բնակիչները կարծես թե ավելի շատ են մտածում հանրային բարօրության մասին: Դա գուցե գալիս է իրենց համայնքում խնդիրների լուծմանն անմիջապես ներգրավվելու ավելի լայն հնարավորություններից: Նման մոտեցում պետք է փորձարկել նաև ավելի մեծ բնակավայրերում:

6. Կանայք թաքնված ռեսուրս են հանդիսանում, որը պետք է օգտագործել հօգուտ համայնքի: Նրանք կարծես լիարժեք ինտեգրված չեն համայնքում, բայց քաղաքականության մշակման գործընթացում պոտենցիալ հետաքրքրություն ունեն: Նրանք կարող են ավելի հավասարակշռված վերաբերմունք ցուցաբերել քաղաքական բանավեճերում և արդյունքներին միտված մոտեցում՝ որոշումներ կայացնելիս:

Այս առաջարկությունները պարզապես նախանշում են ապագա անելիքների շուրջ հնարավոր քննարկումների և մտագրոհի շրջանակները: Ինչպես նշվեց, տեղական ղեկավարներից և շահագրգիռ կողմերից է կախված, թե ինչ աշխատանք կտարվի այս ուղղություններով և ինչ անելիքներ կսահմանվեն համայնքի կայուն և ներքևից դեպի վերև զարգացումը խթանելու համա

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կայուն տեղային զարգացման հնարավորությունների զարգացում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան բազմաբնակավայր համայնք

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Որքանո՞վ է ամուր համայնքին պատկանելու զգացողությունը: Ինչպիսի՞ պատասխանատվություն են քաղաքացիները զգում համայնքի նկատմամբ՝ որպես մեկ ամբողջություն: Արդյոք նրանք վստահու՞մ են մյուսներին և մյուսների համար վստահելի համարու՞մ են իրենց:

Այս հարցերը էական նշանակություն ունեն համայնքում համախմբման մակարդակը որոշելու համար և կարևորագույն արժեք են ներկայացնում համայնքի զարգացման կարողությունների ձևավորման տեսանկյունից:

Բազմաթիվ հեղինակներ ընդգծել են «քաղաքացիության զգացողության» և տնտեսական զարգացման, լավ կառավարման, երջանկության միջև սերտ փոխկապվածությունը:

Քաղաքացիության զգացողություն

«Քաղաքացիության զգացողություն» հավաքական հասկացության ներքո նկատի ունենք մի շարք արժեքներ, որոնք ոգեշնչում են մարդկանց միասին ապրել: Կարելի է ասել, որ քաղաքացիության զգացողությունը համայնքի յուրատեսակ «բնավորության գիծն» է: Ի տարբերություն անհատների՝ համայնքի բնավորության գծերը համեմատաբար ավելի արագ են փոխվում: Դրանք զարգանում են համայնքի պատմությանը զուգընթաց, ուստի որոշ պահերին նպաստավոր են զարգացման համար, երբեմն էլ հետընթաց են բերում: Դա տեղի է ունենում հիմնականում այն պատճառով, որ հենց արժեքներն են ընկած վարքագծի հիմքում: Օրինակ, հանրային հարցերում համատարած կոռուպցիայի շապիկի տակ միշտ լայնորեն ընդունված արժեքների խնդիր կա՝ «քաղաքացիության զգացողությունը» հիմնականում ցածր է:

Քաղաքացիություն և արժեքներ

Արժեքները համայնքային մշակույթի հիմնասյուներն են: Մշակույթը զարգանում է կոլեկտիվ ուսուցման շարունակական գործընթացի միջոցով: Առաջնային փորձառությունը (և դրան հաջորդող դրական կամ բացասական արձագանքները), մյուսների՝ հատկապես տեսադաշտում ավելի շատ գտնվող մարդկանց կողմից առաջարկվող վարքագծի մոդելները, ինչպես նաև գերակշռող վարքագծի, ակնկալիքների և այլ հարցերի վերաբերյալ ինքնահայեցողությունը հանրային բանավեճերում՝ բոլորն էլ կարևոր դեր ունեն:

Կոլեկտիվ իրադարձությունները այսպիսի ուսուցողական գործընթացի համար առավել տիպիկ հիմք են հանդիսանում: Խոշորացման գործընթացները լիովին կարելի է համարել կոլեկտիվ իրադարձություններ: Այսպես, Ախուրյան համայնքի խոշորացման գործընթացը, որի արդյունքում նոր տեղական ինքնակառավարման մարմին ստեղծվեց՝ նոր սահմաններով, նույնպես բազմաթիվ առիթներ է տվել արժեքների և վարքագծի ուսուցման համար:

«Քաղաքացիության ինդեքս» հետազոտության ներդրումը

Հայաստանում իրականացված հանրային կառավարման բարեփոխումների արդյունքում 2017 և 2021 թվականներին՝ երկու փուլով, Ախուրյան խոշորացված համայնքի մեջ է միավորվել 35 բնակավայր: Ստորև քարտեզը ներկայացնում է բնակավայրերի նախկին սահմանների պատկերը և ցույց է տալիս այս բնակավայրերի՝ Ախուրյան կենտրոնական բնակավայրի և Շիրակի մարզի մարզկենտրոն Գյումրի քաղաքի շուրջ տարածական աշխարհագրությունը:

Գծապատկեր 1՝ Ախուրյան համայնքի բնակավայրերի նախկին սահմանների պատկերը և աշխարհագրությունը



Չնայած խոշորացման երկու ալիքներին՝ աշխարհագրորեն մասնատված տեղանքի, բնակավայրերի և բնակիչների միջև բավականին հաճախ ընդհատվող հաղորդակցության ուղիների պատճառով ընդհանուր համայնքին պատկանելու զգացումը դեռևս լիարժեք չի հաստատվել: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող՝ «CapSLoc Ախուրյան խոշորացված համայնքի համար» ծրագիրը նպատակ ունի երեք տարվա ընթացքում աշխատել համայնքի հետ՝ իրավիճակը բարելավելու նպատակով, իսկ մասնավորապես «Քաղաքացիության ինդեքս» բաղադրիչը ծրագրի համապատասխան գործողությունների և նպատակների համար փաստերի վրա հիմնված և կարիքներին հարմարեցված մոտեցում կտրամադրի: Մասնավորապես, ակնկալվում է, որ «Քաղաքացիության ինդեքսի» հետազոտությունը ծրագրին կօժանդակի մի շարք առումներով:

Քաղաքացիների գնահատականը

Նախ, այն պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես են մարդիկ տվյալ պահին գնահատում համայնքի քաղաքացի լինելը: Բավականին հետաքրքիր է դա անել խոշորացումից մի քանի տարի անց և գաղափար կազմել առկա վիճակի մասին: Այս գնահատումը պետք է շատ օգտակար լինի հատկապես քաղաքականություն մշակողների և տեղական առաջնորդների համար, քանի որ այն կարող է թե՛ նկարագրական պատկեր տալ, թե՛ ծառայել որպես հետագա քայլերի ուղեցույց: Ստացած արդյունքները կարող են ցույց տալ, թե ինչը առավելագույնս կնպաստի քաղաքացիության զգացողության ամրապնդմանը՝ դիտարկելով նաև համայնքի քաղաքացիների առանձին խմբերը:

Ուսուցողական գործընթաց

Երկրորդ՝ հարցումն ինքնին կոլեկտիվ իրադարձություն է: Ի սկզբանե հարցումն իր ազդեցությունն է թողնում՝ որպես նոր դասերի յուրացման խթան: Մարդիկ տեսնում են, որ հարցազրուցավարներն իրենց որոշակի հարցեր են տալիս՝ հետաքրքրվելով նրանց տեսակետներով: Այդ ամենի ազդեցության և իմաստի վերաբերյալ արդեն սպասելիքներ են ձևավորվում: Ամենայն հավանականությամբ, տարբեր մարդիկ սկսել են դա քննարկել. հավանաբար, ինքնահայեցողական հանրային բանավեճ է արդեն ձևավորվել: Սրանք ավելի քան ողջունելի արդյունքներ են, քանի որ անհրաժեշտ ելակետ են դառնում համայնքի զարգացման ուղղությամբ որևէ փոփոխության համար:

Շատ առումներով այս մոտեցումը ոգեշնչված է կազմակերպչական գիտություններից փոխառված հասկացություններից, մեթոդներից ու

գործիքներից: Կամ, ավելի ճիշտ, դրանք վերադառնում են հետ, քանի որ ի սկզբանե մշակվել են առավելապես համայնքների, այլ ոչ թե կազմակերպությունների համար: Կազմակերպչական ուսումնասիրություններում վերլուծությունը ընդհանուր առմամբ ոչ թե պարզապես երևույթների մասին գիտելիքները զարգացնելու, այլ նախ և առաջ որոշումների կայացմանը աջակցելու և բարելավման խոստումնալից ուղիներ հայտնաբերելու նպատակ ունի: Կարիք չկա հերքելու, որ այստեղ էլ նույն նպատակն ենք հետապնդում:

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կայուն տեղային զարգացման հնարավորությունների զարգացում

2. ՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան բազմաբնակավայր համայնք

2. ՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Մի շարք գիտական ուղղությունների բազմաթիվ հետազոտություններում ուսումնասիրվել է տարբեր համայնքների մշակութային որոշ առանձնահատկությունների կապը տնտեսական զարգացման և լավ կառավարման ոլորտներում այդ համայնքների կատարողականի հետ:

Սոցիալական կապիտալ և վստահություն

Այս առումով օգտագործվող հիմնական հասկացություններն են եղել «սոցիալական կապիտալը» և «վստահությունը»: 1990-ական թվականներին Ռոբերտ Պատնամը[1] և Ֆրենսիս Ֆուկույաման[2] հրատարակեցին մի քանի գրքեր, որոնք մեծապես ընդգծեցին սոցիալական կապիտալի և վստահության դերը բարեկեցության և ժողովրդավարության մակարդակները որոշելու գործում: Այդ ժամանակվանից ի վեր հսկայական քանակությամբ ուսումնասիրություններ են հրապարակվել:

2.1. ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԵՐ

2.1.1. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Արժեքներ և տնտեսական աճ

Հիմնվելով հարցումների և սոցիալական գիտափորձի վրա՝ հետազոտողները ցույց են տվել, թե ինչպես է փոխվում վստահության զգացումը ըստ համատեքստի, որտեղ այն չափվում է՝ ներառյալ թե՛ պետությունները, թե՛ առանձին տարածաշրջանները: Ըստ երևույթին, ուղիղ հարաբերակցություն կա համայնքում սոցիալական վստահության և տնտեսական աճի տեմպի միջև՝ որքան բարձր է վստահության մակարդակը, այնքան ՀՆԱ-ի աճի տեմպը ավելի մեծ է (Algan & Cahuc, 2013; Knack & Keefer, 1997): Որպես եզրակացություն՝ արձանագրվել է, որ սերտ կապ կա համայնքի մշակութային արժեքների և այդ նույն համայնքի տնտեսական գործունեության միջև (Tabellini, 2010):

Վարքագծային տնտեսագիտություն

Տնտեսական զարգացման գործում վստահության կարևորումը հետագայում վարքագծային տնտեսագիտության ուժեղ կողմերից դարձավ: Մշակույթը, պատմությունը, աշխարհագրական առանձնահատկությունները, եղանակը, կոլեկտիվ իրադարձությունները, քաղաքականությունները ավելի մանրամասն սկսեցին ուսումնասիրվել որպես տնտեսական կատարողականի որոշիչ գործոններ (Acemoglu, Johnson, & Robinson, 2001): Տնտեսագիտությունը կենտրոնացավ սոցիալական ինստիտուտների վրա, որոնք սահմանվում են որպես.

> *կառուցվածքային միավորներ՝ ներկայացված վարքագծային կանոնների տեսքով, որոնք ուղղորդում են անհատական և կոլեկտիվ գործողությունները (Գիդենս, 1984):*

Ավելին, բացահայտվեց, օրինակ, կապը կրթության ու վստահության միջև (Helliwell & Putnam, 2007), կամ այն միտումը, ըստ որի ավելի ամուր ընտանեկան հարաբերությունները հիմնականում համապատասխանում են սոցիալական վստահության ավելի թույլ մակարդակներին (Ermisch &

---

[1] Putnam, R. (2000). *Bowling Alone: The Collapse and Revival of American Community.* New York: Simon & Schuster

[2] Fukuyama, F. (1995). *Trust: The Social Virtue and the Creation of Prosperity. New York: Free press*

Gambetta, 2010): Այդ միտումն արդեն սահմանվել է որպես «վնասարար ընտանիքապաշտություն» (amoral familism) (Banfield, 1958):

2.1.2. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երջանկության տնտեսագիտություն

Այսպես կոչված «երջանկության տնտեսագիտության» հեղինակները կասկածի տակ են դնում, որ ՀՆԱ-ն կարող է բարեկեցության իրական չափանիշ լինել: 2009 թվականին Ֆրանսիայի կառավարությունը, նպատակ ունենալով բարեկեցության և զարգացման մակարդակի չափման ավելի լավ եղանակներ գտնել, ստեղծեց հանձնաժողով, որը կազմված էր այնպիսի ականավոր գիտնականներից, ինչպիսիք էին, օրինակ, Ջոզեֆ Ստիգլիցը, Ամարտյա Սենը և Ժան-Պոլ Ֆիտուսին: Այդ հանձնաժողովի աշխատանքից ոգեշնչում ստացան Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) «Ավելի լավ կյանք նախաձեռնության» և «Ինչպե՞ս է կյանքը» պարբերական զեկույցները: Զեկույցներում բարեկեցությունը չափվում է ոչ միայն տնտեսական բարգավաճման ցուցանիշով, այլ նաև հաշվի առնելով քաղաքացիների ընկալումները: Պարզվում է, որ հարստությունը կարող է երջանկության աղբյուր լինել, երբ հիմնական կարիքները բավարարված չեն, բայց հետո դրա ազդեցությունը բարեկեցության ընկալման վրա աստիճանաբար պակասում է (Diener, Diener, & Diener, 1995) (Diener & Seligman, 2004):

Երջանկությունը և մյուսների հետ հարաբերությունները

Մյուս ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երջանկությունը կարծես թե ավելի շատ կախված է մյուսների հետ հարաբերությունների որակից, քան հասանելի գումարի քանակից (Robert Waldinger, 2015[3]; Helliwell, 2002; Jasielska, 2020): Այս մտքերը օգնում են վերաարժեքավորել «քաղաքացիական տնտեսությունը»՝ մի գաղափարախոսություն, որը որպես տնտեսության հիմնական գործոն է դիտարկում այնպիսի արժեքները, ինչպիսիք են վստահությունը, ընկերությունը, համերաշխությունը, եղբայրությունը (Bruni, Zamagni, 2015):

2.1.1. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մարդկանց միջև հարաբերությունները սերտ փոխկապակցված են քաղաքական ինստիտուտների հետ հարաբերությունների հետ և հակառակը:

Հաստատությունների նկատմամբ վստահություն

Գիտական բանավեճ է ծավալվել սոցիալական վստահության և քաղաքական միավորների ու քաղաքական ներկայացուցիչների նկատմամբ վստահության միջև առկա կապի վերաբերյալ (Levi & Stoker, 2000): Որոշ հեղինակներ ասում են, որ մարդկանց միջև վստահությունը կախված է վստահության այն ընդհանուր զգացումից, որը նրանք ունեն իրենց կառավարության նկատմամբ (Brehm & Rahn, 1997): Այդ առումով հանրային կառույցների հետ հարաբերությունները կարող են ներազդել համայնքի ներսում վստահության մակարդակի և բարեկեցության բարելավման հնարավորությունների վրա:

Քաղաքացիների և հանրային կառույցների միջև հարաբերությունը խրթին է. կարծիք կա, որ հանրային հաստատության հետ հարաբերվելու անհաջող փորձն ավելի մեծ բացասական ազդեցություն ունի, քան հաջող փորձառության արդյունքում ստացած դրական ազդեցությունը (Kampen,

[3] TED Talks: https://www.youtube.com/watch?v=8KkKuTCFvzI

Van de Walle, & Boukaert, 2006): Անգամ եթե հանրային կառույցների գործունեության թափանցիկությունը բարելավվի, պարզ չէ, թե դա կազդի արդյոք վստահության զգացողության վրա (Grimmelikhuijsen, 2012): Ենթադրությունները և կողմնակալ վերաբերմունքը կարող են խանգարող հանգամանք լինել և ամրապնդել անվստահությունը նույնիսկ դրական արդյունքների առկայության դեպքում (Etzioni, 2010; Kampen, Van de Walle, & Boukaert, 2006): Ենթադրությունների և կողմնակալության ձևավորման գործում համայնքային մշակույթը, իհարկե, կարևոր դեր է խաղում (Grimmelikhuijsen, Porumbescu, & Im, 2013):

2.1.2. ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ... ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

Վստահությունը որպես բազմաչափ հասկացություն

Վստահության հասկացությունը մեծ ուշադրության է արժանացել տարբեր հասարակական գիտությունների և, այդ թվում, մասնավորապես տնտեսագիտության և քաղաքագիտության կողմից: Այնուամենայնիվ, վստահությունը մնում է բարդ կառուցվածք ունեցող մի գաղափար՝ այն սոցիալական փոխազդեցության համար միաժամանակ թե՛ պայման է, և թե՛ արդյունք: Վստահությունը ուսումնասիրելու համար հարկավոր է հաշվի առնել միկրո մակարդակի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են անձնական փորձը, անձի արժեքները, կրթությունը, կրոնը, ինչպես նաև մակրո մակարդակի այնպիսի հարցեր, ինչպիսիք են հանրային կառույցների նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը, համընդհանուր արժեքները, համայնքային մշակույթը:

Քաղաքացիության զգացողություն

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչն է ավելի մոտ համայնքի կարիքներին՝ իր անդամների համար բարեկեցության բարելավման ուղիներ որոնելիս, առաջարկվում է օգտագործել «քաղաքացիության զգացողություն» հասկացությունը: Այն հիշեցնում է, մի կողմից, երախտագիտության զգացումը, իսկ մյուս կողմից՝ համայնքի հանդեպ անձնական պատասխանատվության զգացումը: Այս զգացողությունը անխուսափելիորեն հիմնված է համայնքի անդամների և համայնքը ղեկավարող հանրային կառույցների նկատմամբ վստահության վրա: Այն փոփոխվում է ժամանակի ընթացքում՝ ըստ անհատների սոցիալական փորձառության և դրանից քաղված դասերի: Մասնավորապես, նշված փորձառությունը կապված է քաղաքացիների փոխհարաբերությունների հետ՝ որպես համայնքի անդամ:

Որքան ամուր է քաղաքացիության զգացողությունը, այնքան մեծ է ընդհանուր վստահությունը և վստահությունը հաստատությունների նկատմամբ, համայնքում առկա սոցիալական կապիտալը, զարգացման հնարավորությունները:

2.2. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

4 որոշիչ գործոններ

Այս հետազոտության նպատակն է քաղաքացիներից գնահատական ստանալ համայնքի ներսում «քաղաքացիության զգացողության» վերաբերյալ՝ հաշվի առնելով դրա չորս որոշիչ գործոնները: Ենթադրվում է, որ քաղաքացիության զգացողությունը կախված է նրանից, թե որքանով է քաղաքացին բավարարված չորս տիպի փոխհարաբերություններում առկա փորձից: Այս չորս հարթությունները ընդհանուր առմամբ ձևավորում են համայնքի յուրաքանչյուր անդամի հարաբերությունները համայնքի հետ: Հարաբերությունների չորս տիրույթներն են.

- հարաբերություններ հանրային տարածքի հետ, քանի որ դրա խորհրդանշական արժեքը ձևավորում է «մենք»-ի զգացողությունը,
- մյուսների հետ հարաբերություններ՝ ամենօրյա մարդկային հարաբերություններ համայնքի մյուս անդամների հետ,
- հարաբերություններ հանրային կառույցների հետ՝ որպես ավելի ակնառու ոլորտ, որտեղ երևան են գալիս համագործակցության կարողությունները և կարող է դրսևորվել անհատական մասնակցությունը,
- հարաբերություններ համակեցության ու գերծանրաբեռնվածության խնդիրների հետ՝ որպես համայնքներում բնակվելու արդյունքում առաջացող մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարել:

Գծապատկեր 2՝ Տեսական շրջանակ

2.2.1. Հանրային տարածքի հետ հարաբերություններ

Հանրային տարածք

Այն տարածքը, որտեղ մարդիկ ապրում են, մեծ խորհրդանշական արժեք ունի: Այն կարևոր դեր է խաղում համայնքի ինքնության, համայնքային հպարտության և պատկանելության զգացողության ձևավորման գործում: Երբ մարդիկ իրենց բնակության վայրը տգեղ են համարում, նրանք հիմնականում դժգոհություն և զայրույթ են զգում իրենց համայնքի նկատմամբ: Տգեղ վայրն

ընդհանրապես խոսում է քաղաքային շահարկումների, համընդհանուր բարօրության նկատմամբ անձի անհատական շահի գերակայության մասին:

Ավելին, հանրային տարածքի խնամքը առաջին ընդհանուր մարտահրավերներից է, որ ստանձնում են համայնքի անդամները: Այդ խնամքը որոշակի սոցիալական երկընտրանք է դնում «մասնավորի» և «հանրայինի» հետ առնչության միջև: Հանրային տարածքի մաքրությունն ու գեղեցկությունը կարող են ցույց տալ, թե որքանով են քաղաքացիները իրենց համայնքի մասին հոգալու պատասխանատվություն զգում: Մյուս կողմից, կեղտոտ հանրային տարածքը կարող է սպառնալիք հանդիսանալ սոցիալական վստահության և համախմբման համար, քանի որ վկայում է, որ քաղաքացիների կողմից որդեգրվել է զուտ սպառողի վարքագիծը:

2.2.2. Հարաբերություններ մյուսների հետ

Մյուսներ

Սոցիալական համախմբվածությունը մեծապես կախված է նրանից, թե յուրաքանչյուր քաղաքացի որքանով կարող է վստահել մյուսներին: Խաբելն ընդհանուր սովորույթ է համայնքի ներսում, թե՞ բարությունն ու համերաշխությունը քաղաքացիների կողմից առավել հաճախ դրսևորվող մոտեցումներն են: Սա շատ կարևոր է:

Մեկ այլ վկայություն է հանրային միջոցառումներին մասնակցելը: Ավելի շատ մասնակցությունը նշանակում է, որ քաղաքացիները սիրում են միասին ժամանակ անցկացնել, ուստի կան սոցիալական կապեր, որոնք ամուր են պահում նրանց կապը համայնքի հետ:

2.2.3. Հարաբերություններ հանրային կառույցների հետ

Հանրային կառույցներ

Արդյոք հանրային կառույցներն ընկալվում են հիմնականում որպես անհատների դաշնակի՞ց, թե՞ մրցակից: Առավել հավանական պատասխանը կարելի է հասկանալ՝ դիտարկելով որոշակի գործընթացներ, ներառյալ՝ մասնակցությունը քաղաքական կյանքին, հարկերի վճարումը և պաշտոնյաների ենթադրյալ կոռումպացվածությունը: Մասնակցությունը քաղաքական կյանքին կարող է տարբեր ձևեր ունենալ՝ ընտրություններին քվեարկելը՝ անշուշտ, բայց նաև որոշ ընդհանուր նպատակների համար ոտքի կանգնելը և քաղաքականության մեջ ուղղակի մասնակցությունը, օրինակ՝ համայնքի ավագանու պաշտոնում թեկնածության առաջադրումը: Տեղական ինքնակառավարման մարմիններում անմիջական ներգրավվումը շատ արդյունավետ է համայնքի նկատմամբ «սեփականատիրության զգացում» զարգացնելու համար, և այդ իսկ պատճառով ավելի սերտ է դիտարկվում «քաղաքական մասնակցության» հասկացության շրջանակներում: Հարկերի վճարումը քաղաքացիական վարքագիծ է, որը միանգամայն հստակ ցույց է տալիս՝ արդյոք պետական կառույցներն ընկալվում են որպես դաշնակից, թե թշնամի: Հարկերից խուսափելու կամ մյուսների կողմից հարկերից խուսափելու ընկալման բարձր ցուցանիշները վկայում են հանրային կառույցների հետ համագործակցելու պատրաստակամության պակասի մասին: Պաշտոնյաների իրական կամ ընկալվող անարդարացիությունը խնդրահարույց է բազմաթիվ տեսանկյուններից, քանի որ այն սպառնում է հանրային հաստատությունների նկատմամբ վստահությանը, անջրպետ ստեղծում պաշտոնյաների և քաղաքացիների միջև, ավելի բարձր բարոյական չափանիշներ ունեցող քաղաքացիներին հետ պահում քաղաքականությամբ զբաղվելուց:

2.2.4. Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ

Գերծանրաբեռնվա-ծության խնդիրներ

Համայնքում ապրելը նաև արտաքին խնդիրներ է առաջացնում: Որպես օրինակ կարող է ծառայել երթևեկությունը քաղաքային վայրերում, ինչպես նաև էլեկտրաէներգիայի կամ խմելու ջրի սպառումը: Հանրային տարածքի խնամքը նույնպես կարելի է մեկնաբանել որպես ընդհանուր մարտահրավեր: Գերծանրաբեռնվածության խնդիրների դեպքում սպառողական վարքը կարող է գայթակղիչ լինել: Մյուս կողմից, առանցքային լուծում կարող է լինել պատասխանատու վարքագիծը՝ աղբի տեսակավորում, էլեկտրաէներգիայի կամ ջրի սպառման կրճատում, մասնավոր մեքենաների փոխարեն հանրային տրանսպորտի օգտագործում: Անշուշտ, տեղական հանրային ծառայությունները նույնպես կարևոր են գերծանրաբեռնվածության խնդիրները լուծելու համար, օրինակ՝ որակյալ ջրամատակարարումը հնարավոր է դարձնում բոլորի համար բավարար ջուր ունենալը: Այդ իսկ պատճառով այս ոլորտը կարող է վերլուծության հետաքրքիր առարկա լինել:

2.2.5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հաշվի առնելով վերը ներկայացված վերլուծական շրջանակը և մասնավորապես անդրադառնալով Ախուրյան համայնքին՝ կարևորվել են հետևյալ հետազոտական հարցերը.

Համայնքային ինքնություն

1. Եթե դիտարկենք բնակավայրը, խոշորացված համայնքը, մարզը և երկիրը՝ ո՞ր «համայնքային ինքնությունն» է գերակշռում մարդկանց ընկալումներում:
   - ա. Ինչպե՞ս են մարդիկ գնահատում համայնքի խոշորացումը դրա իրականացումից մի քանի տարի անց:
   - բ. Արդյո՞ք նրանք արժեքներով և քաղաքացիական վարքագծով իրենց տարբեր են համարում մյուս բնակավայրերի մարդկանցից:

Քաղաքացիության գնահատում

2. Ինչպե՞ս են մարդիկ գնահատում իրավիճակը Ախուրյան համայնքում՝ փոխհարաբերությունների սահմանված չորս տիրույթներում:
   - ա) Որևէ տարբերություն կա՞ բնակչության ենթախմբերի միջև (դիտարկելով տարիքը, կրթությունը, սեռը, զբաղվածության ոլորտը և բնակավայրը):

Գոհունակություն

3. Հարաբերությունների ո՞ր ոլորտներն են առավել որոշիչ Ախուրյան համայնքում ապրելու վերաբերյալ ընդհանուր գոհունակության համար:

Անելիքներ

4. Հարաբերությունների ո՞ր ոլորտներում է բարելավման անհրաժեշտություն բացահայտվել:
   - ա) Մասնավորապես ո՞ր ենթաոլորտներում:

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կայուն տեղային զարգացման հնարավորությունների զարգացում

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան բազմաբնակավայր համայնք

3. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը նախագծված է այնպես, որպեսզի համատեղվեն «գրասեղանային» կամ գրականության ուսումնասիրության և գլխավորապես քանակական մեթոդի միջոցով առաջնային տվյալների հավաքագրման բաղադրիչները:

Տնային տնտեսություններում հարցմանը զուգահեռ կկիրառվեն որակական մեթոդները (շահագրգիռ կողմերի հետագա հետադարձ կապը/ֆոկուս խմբային քննարկումները)՝ վերլուծության և արդյունքների հնարավոր մեկնաբանություններ և կամ բացատրություններ մշակելու նպատակով:

Տնային տնտեսությունների հարցում

Քանակական տվյալների հավաքագրման հիմնական մեթոդը տնային տնտեսությունների հետազոտությունն է: Հաշվի առնելով Ախուրյան համայնքի բնակչության փոքր քանակը՝ կիրառվել է տնային տնտեսության հասանելի բոլոր անդամներից տվյալների հավաքագրման հատուկ մոտեցում՝ հարցմանը մասնակցող հարցվողների թիվը առավելագույնի հասցնելու համար: Ընտրանքի նախագիծը և տնային տնտեսությունների ընտրության ռազմավարությունը հաշվարկվել են՝ հիմքում ունենալով հետազոտվող տնային տնտեսությունների թիրախային քանակը: Այնուամենայնիվ, այս դեպքում մենք չկիրառեցինք «մեկ տնային տնտեսություն՝ մեկ հարցվող» սկզբունքը, որպեսզի ավելացնենք հարցման մասնակիցների թիվը և դիտարկված պատահույթների նշանակալի քանակ ունենանք հետագա տարանջատված վերլուծության համար:

3.1. ԸՆՏՐԱՆՔ

ԱՏՀ տեխնիկայով ընտրանք

Հարցումն իրականացվել է ստրատիֆիկացված և կլաստերային ընտրանքային մոտեցումների ու հաշվարկների համադրմամբ: Տնային տնտեսությունների ընտրության համար կիրառվել է ԱՏՀ-ի (աշխարհագրական տեղեկատվական համակարգի) վրա հիմնված պատահական ընտրանքի մոտեցումը:

ԱՏՀ-ի և մարդահամարի տվյալների նախնական ուսումնասիրության արդյունքում հետազոտողների թիմը որոշեց համայնքը բաժանել 3 ստրատայի՝ ըստ բնակավայրերի բնակչության թվաքանակի և աշխարհագրական տեղակայման:

Ստրատա 1՝ 5000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրեր: Այս կատեգորիային են պատկանում միայն Ախուրյան և Ազատան բնակավայրերը, որոնք գտնվում են խոշորացված համայնքի կենտրոնում:

Ստրատա 2՝ 1000-ից 5000 բնակիչ ունեցող բնակավայրեր: Դրանք որպես կանոն շրջապատում են Գյումրի քաղաքը և խոշորացված Ախուրյան համայնքի Ախուրյան ու Ազատան բնակավայրը:

Ստրատա 3՝ 1000-ից պակաս բնակիչ ունեցող բնակավայրեր: Աշխարհագրորեն դրանք գտնվում են վերոնշյալ կենտրոնական համայնքը/բնակավայրերը շրջապատող երկրորդ օղակում:

Ստորև քարտեզում պատկերված են Ախուրյան խոշորացված համայնքը և երեք ստրատաների դասակարգված բնակավայրերը:

Գծապատկեր 3՝ Ախուրյան խոշորացված համայնքի և դրա՝ երեք ստրատայի դասակարգված բնակավայրերի պատկերը



Քանի որ Ախուրյան և Ազատան բնակավայրերը առաջին ստրատայի միակ երկու բնակավայրերն էին, և նրանցից յուրաքանչյուրը հատուկ հետաքրքրություն է ներկայացնում «Քաղաքացիության ինդեքս» հետազոտության նպատակների և խնդիրների տեսանկյունից, հետազոտողները որոշեցին երկու բնակավայրն էլ ներառել ընտրանքում: Եվս վեցական բնակավայրեր պատահականության սկզբունքով ընտրվեցին 2-րդ և 3-րդ ստրատաներից: Ախուրավան, Հացիկավան և Կարմրաքար բնակավայրերը ընտրանքում չեն ներառվել տնային տնտեսությունների շատ փոքր թվի պատճառով (մինչև 20 SS): Օգտագործվել է յուրաքանչյուր ստրատայում ընտրանքի չափը համամասնաբար բաշխելու մոտեցումը:

Ընտրանքի չափը

450 տնային տնտեսությունների ընտրանքի դեպքում տվյալների վստահության մակարդակն արդեն իսկ 95% է, իսկ սխալի միջակայքը՝ 4,6%, ինչը նշանակում է, որ կա 95% հավանականություն, որ իրական արժեքը լինի ստացված/հետազոտված արժեքի ±4.60%-ի սահմաններում: Ի լրումն, հետազոտական թիմը որոշեց ընտրանքում ավելացնել մոտ 50 հավելյալ տնային տնտեսություն (հարցված տնային տնտեսությունների վերջնական թիվը հասցնելով 513-ի)՝ համոզվելու համար, որ դեռևս բավարար թվով պատահույթներ կլինեն այն պարագայում, երբ անհրաժեշտ լինի որոշ տվյալներ հանել տվյալների բազայից՝ տվյալների որակի վերահսկման և տվյալների բազայի մաքրման պահանջներից ելնելով:

Գործնականում, հաշվի առնելով Հայաստանի գյուղական բնակավայրերին բնորոշ՝ հարցումների արձագանքման 30% մակարդակը, յուրաքանչյուր հարցազրուցավարի տրվել են ԱՏՀ առնվազն 3 տարբեր կոորդինատներ՝ մեկ տնային տնտեսություն հաջողությամբ մուտք գործելու և հարցազրույցն ավարտելու համար: Տնային տնտեսության անդամների ցուցակագրում է իրականացվել հարցման պահին հասանելի և տվյալների հավաքագրմանը մասնակցելու պատրաստակամություն ունեցող տասնութ և ավելի տարեկան անդամներին ներառելու համար: Սա նշանակում է, որ տնային տնտեսությունում հարցազրուցավարը հարցազրույց է իրականացրել տվյալ ընտանիքի բոլոր այն չափահաս անդամների հետ, որոնք հարցման պահին հասանելի են եղել և ցանկացել են մասնակցել հարցմանը: Արդյունքում

վերլուծության համար հավաքագրվել են 610 վավեր և լիարժեք լրացված հարցաթերթիկներ:

ԱՏՀ ծրագրով ընտրանքի ձևավորումն իրականացվել է մի քանի փուլով.

1. Բոլոր ընտրված բնակավայրերի քարտեզները ներբեռնվել են Arcgis Pro ծրագրային հավելվածում: Առանձին շերտով ներբեռնվել է շենք-շինությունների կադաստրային քարտեզը: Միաժամանակ, այն զուգակցվել է բաց և ազատորեն հասանելի տվյալների՝ շենքերի և բնակավայրերի քարտեզների հետ: Ի լրումն հանրային հասանելի քարտեզագրման ռեսուրսների՝ Google Maps, Yandex Maps, Open Street Map, Bing Map, Field checks միջոցով օժանդակ ստուգումների, օգտագործվել է Landsat (NASA) և Sentinel-2 (Copernicus ծրագիր) պատկերների արբանյակային պատկերների արխիվը:

2. Տվյալների ընդհանուր բազայից մենք կտրել-հանել ենք մեզ անհրաժեշտ բնակավայրի սահմաններում գտնվող առանձին շինությունները և ապա գործարկել «Պատահական ընտրություն ենթաբազմությունների ներսում» ալգորիթմը:

Ստորև աղյուսակը ցույց է տալիս ընտրանքի քանակական բաշխումը ըստ յուրաքանչյուր ստրատայի և կլաստերի:

Ախուրյան խոշորացված համայնքի բնակավայրերի բնակչությունը և տնային տնտեսությունների թիվը				ԸՆՏՐԱՆՔԻ ՊԼԱՆ				
				Տոկոսային մասնաբաժինը (%) ընդհանուր բնակչության մեջ	Մասնաբաժինը ընտրանքում	Հավելյալ ընտրանք	Տնային տնտեսությունների թիրախային քանակը, որ պետք է հետազոտվի յուրաքանչյուր ստրատայում և կլաստերում	Ընտրված ԱՏՀ պոլիգոնների քանակը՝ հաշվի առնելով արձագանքման 30% հավանականությունը
	Բնակավայր	Բնակ-չություն	SS քանակ					
Ստրատա 1	**Ախուրյան**	9235	2400	20.46			102	307
	Ազատան	5368	1119	11.89			59	178
	Ընդամենը՝ Ստրատա 1	14603	3519	32.35	146	16	162	
Ստրատա 2	Ախուրիկ	1090	265					
	Առափի	1702	471					
	Արևիկ	1806	421				40	120
	Բասեն	1724	431				40	120
	Հացիկ	1023	292					
	Հայկավան	1258	367				40	120
	Ջրառատ	1041	242				40	120
	Կամո	1479	320					
	Կառնուտ	1023	234				40	120
	Մարմաշեն	1916	427				41	123
	Մայիսյան	1652	521					
	Շիրակ	1079	263					
	Վահրամաբերդ	1444	410					
	Ոսկեհասկ	1977	521					
	Երազգավորս	1553	363					

	Ընդամենը՝ Ստրատա 2	21767	5548	48.22	217	24	241	
Ստրատա 3	**Այգաբաց**	723	187				16	48
	Բայանդուր	735	167				16	48
	Բենիամին	721	164				16	48
	Գետք	601	150					
	Դարիբջանյան	993	250					
	Հովիտ	558	134					
	Հովունի	651	149					
	Զաջուռ	776	184				17	51
	Զաջուռավան	196	58					
	Կապս	718	189				16	48
	Քեթի	989	286					
	Կրաշեն	271	73					
	Լեռնուտ	152	41					
	Մեծ Սարիար	392	91				16	48
	Փոքրաշեն	220	45					
	Կարմրաքար*	39	19					
	Հացիկավան*	37	12					
	Ախուրավան *	0	0					
	Ընդամենը՝ Ստրատա 3	8772	2199	19.43	87	10	97	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**45142**	**11266**	**100**	**450**	**50**	**500**	**1499**
Շատ փոքր կամ լքված բնակավայրեր, որոնք չեն ներառվել ընտրանքում:								

3.2. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ, ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔ

Դաշտային աշխատանք

Հարցման նախապատրաստման փուլ. Տվյալների հավաքագրման գործիքը (Master Questionnaire) նախ մշակվել է անգլերենով, այնուհետև թարգմանվել է հայերեն, որին հաջորդել են փորձագիտական նախնական թեստավորման և հայերեն տարբերակի խմբագրման նախնական փուլերը: Այնուհետև հարցաշարի հայերեն տարբերակը մուտքագրվել է SurveyMonkey առցանց հարթակ՝ անցնելու տեխնիկական նախնական թեստավորման ևս մեկ փուլ, որպեսզի հետագայում օգտագործվի տվյալների հավաքագրման բուն գործընթացի համար: Տվյալների որակը ապահովվել է SurveyMonkey համակարգի կողմից տրամադրված կիսաավտոմատ զտիչներով և որակի ապահովման գործիքներով: Հետազոտողների թիմը էլեկտրոնային հարցաթերթում ստեղծել էր ստուգումների և վավերացումների մի մեծ ցուցակ՝ հարցազրուցավարներին ակնթարթորեն արձագանք տրամադրելու համար: Տվյալների հավաքագրման ընթացքում իրականացվել են տվյալների բաշխման և համապատասխանության ստուգումներ՝ թույլ տալով հայտնաբերել տվյալների որակի թերությունները:

Այնուհետև 2023 թվականի հունիսի 8-ին ծրագրային և հետազոտական թիմը մեկօրյա ուսուցում է կազմակերպել դաշտային աշխատանքների անձնակազմի անդամների համար, որոնք նաև լրացուցիչ հրահանգներ են ստացել ԱՏՀ-ի վրա հիմնված ընտրանքի և «Քաղաքացիության ինդեքսի» առցանց գործիքն իրենց սարքերում օգտագործելու վերաբերյալ: Դասընթացի ընթացքում նրանք հնարավորություն են ունեցել փորձարկել տնային տնտեսությունների ընտրության տեխնիկան, ինչպես նաև վարել ճանաչողական հարցազրույց՝ որպես տվյալների հավաքագրման գործիքի նախնական թեստավորման վերջին փուլ, և կիսվել իրենց դիտարկումներով ու նկատառումներով՝ տվյալների հավաքագրման բուն գործընթացի որակը բարելավելու նպատակով:

Տվյալների հավաքագրման գործիքի վերջնական հայերեն տարբերակը, որը թարգմանվել է նաև անգլերեն, ներկայացված է այս փաստաթղթի հավելվածում (Հավելված Ա):

Հարցման փուլ. տվյալների բուն հավաքագրումն իրականացվել է 2023 թվականի հունիսի 10-ից 21-ն ընկած ժամանակահատվածում՝ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով: Հետազոտական թիմը վերահսկել է տվյալների հավաքագրման որակը՝ տվյալների բազայի ստուգման և հետադարձ զանգերի միջոցով, ինչպես նաև հարցազրուցավարների կողմից նման խնդրանքի դեպքում ստուգել է հարցման տվյալները: Թիմը հարցազրուցավարներին ուղղորդել և խորհրդատվություն է տրամադրել տվյալների հավաքագրման ողջ ընթացքում և վերահսկել տվյալների որակը՝ պարբերաբար ստուգելով տվյալների հավաքագրման գործընթացը և ընթացքում առաջացած խնդիրները:

Հարցմանը հաջորդող աշխատանքների փուլ. Հետազոտության ավարտից հետո հետազոտական թիմը իրականացրել է տվյալների մաքրում և ԱՏՀ կոորդինատների վերջնական վավերացում, ինչպես նաև թարգմանել և ըստ կատեգորիաների խմբավորել է բաց հարցերի պատասխանները:

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development

4. ՀԱՐՑՈՒՄ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան բազմաբնակավայր համայնք

4. ՀԱՐՑՈՒՄ

4.1. ԸՆՏՐԱՆՔ

Վավեր հարցաթերթերը լրացվել են 610 հարցվողի կողմից, որոնք էլ հենց կազմում են ընդհանուր հավանական ընտրանքը:

Սեռ

Ավելի մանրամասն դիտարկելով ընտրանքի կազմը՝ կարելի է նկատել տղամարդկանց թերներկայացվածությունը (29%) բնակչության կազմի համեմատ: Դա պայմանավորված է նրանով, որ հարցազրույցներն անցկացվել են սեզոնային աշխատանքի ժամանակահատվածում, ուստի տնային տնտեսություններում հիմնականում կանայք են հանդիպել:

Աղյուսակ 1՝ Հաճախականություն-ների բաշխումը ըստ սեռի

Սեռ

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Կին	433	71.0	71.0	71.0
	Տղամարդ	177	29.0	29.0	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Տարիք

Հարցվածների միջին տարիքը 52 է: Ըստ ընտրանքի ռազմավարության՝ հարցազրույցներ են անցկացվել միայն 18 տարեկանից բարձր տարիքի բնակիչների հետ: Այսպիսով, ամենաերիտասարդ հարցվածը 18 տարեկան է, իսկ ամենատարեցը՝ 88:

Աղյուսակ 2՝ Նկարագրական վերլուծությունը և հաճախականություն-ների բաշխումը ըստ տարիքի

Տարիք

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	<20	22	3.6	3.6	3.6
	20-29	40	6.6	6.6	10.2
	30-39	100	16.4	16.4	26.6
	40-49	87	14.3	14.3	40.8
	50-59	122	20.0	20.0	60.8
	60-69	163	26.7	26.7	87.5
	70+	76	12.5	12.5	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Տարիք

Տարիք (լրացած տարիների թիվը)

N	Վավեր	610
	Բաց թողնված	0
Միջին		52.02
Մեդիանա		55.00
Ստանդարտ շեղում		16.420
Սփռվածք		70
Նվազագույն		18
Առավելագույն		88

Ամուսնական կարգավիճակ

Հարցվածների 80 տոկոսն ամուսնացած են, իսկ հարցվածների բացարձակ մեծամասնությունը (52%) ծնվել են այն նույն բնակավայրում, որտեղ ներկայումս ապրում են:

Աղյուսակ 3՝ Հաճախականություն-ների բաշխումը ըստ ամուսնական կարգավիճակի

Ո՞րն է Ձեր ամուսնական կարգավիճակը:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Երբեւ չամուսնացած	53	8.7	8.7	8.7
	Ամուսնացած	488	80.0	80.0	88.7
	Այրի/կնակորույս	66	10.8	10.8	99.5
	Ամուսնալուծված (այդ թվում՝ բաժանված)	3	.5	.5	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Աղյուսակ 4՝ Հաճախականությունների բաշխումը ըստ ծննդավայրի

Այս բնակավայրո՞ւմ եք ծնվել:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Այո	318	52.1	52.1	52.1
	Ոչ	292	47.9	47.9	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Հարկ է նշել, սակայն, որ տվյալ բնակավայրում չծնված հարցվածների 93 տոկոսը կանայք են: Հնարավոր բացատրությունն այն է, որ նրանք ամուսնանալուց հետո տեղափոխվել են իրենց ամուսինների բնակավայր:

Աղյուսակ 5՝ Սեռի և ծննդավայրի խաչաձև աղյուսակ

Սեռ * «Այս բնակավայրու՞մ եք ծնվել» խաչաձև աղյուսակ

		Այս բնակավայրու՞մ եք ծնվել:				Ընդամենը	
		Այո		Ոչ			
		N	%	N	%	N	%
Սեռ	Իգական	161	50.6%	272	93.2%	433	71.0%
	Արական	157	49.4%	20	6.8%	177	29.0%
Ընդամենը		318	100.0%	292	100.0%	610	100.0%

Եկամուտ և զբաղվածություն

Դիտարկելով եկամտի ու զբաղվածության մասին հարցերը, կարող ենք տեսնել, որ հարցվածների մեծ մասը (54%) ընտրել է հետևյալ տարբերակը՝ «*Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել*»:

«Գործազուրկ» (38%) և «Թոշակառու» (25%) տարբերակները զբաղմունքի վերաբերյալ ամենատարածված պատասխաններն են: Հարցվածների մոտ 18%-ը զբաղված է վճարովի աշխատանքով, իսկ մոտ 15%-ը կա՛մ գյուղատնտեսությամբ են զբաղվում, կա՛մ տնային տնտես(ուհի) են:

Աղյուսակ 6՝ Հաճախականություն-ների բաշխումն ըստ եկամուտի և զբաղմունքի

Ո՞րն է լավագույնս բնութագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար	38	6.2	6.4	6.4
	Բավարար գումար ունենք սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է	116	19.0	19.5	25.9
	Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել	330	54.1	55.6	81.5
	Կարող ենք գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց	96	15.7	16.2	97.6
	Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց	14	2.3	2.4	100.0
	Ընդամենը	594	97.4	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	16	2.6		
Ընդամենը		610	100.0		

Տեղակայումը ըստ բնակավայրի և ստրատայի

Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր հիմնական զբաղմունքը:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Այլ	3	.5	.5	.5
	Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	31	5.1	5.1	5.6
	Վճարովի հիմունքներով աշխատում եմ հասարակական կազմակերպությունում	3	.5	.5	6.1
	Վճարովի հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան եւ այլն)	73	12.0	12.0	18.0
	Կամավոր հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան եւ այլն)	3	.5	.5	18.5
	Ուսանող/աշակերտ եմ	20	3.3	3.3	21.8
	Թոշակառու եմ	155	25.4	25.4	47.2
	Գործազուրկ եմ	233	38.2	38.2	85.4
	Զվաղվում եմ գյուղատնտեսությամբ	44	7.2	7.2	92.6
	Տնային տնտես(ուհի) եմ	45	7.4	7.4	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Ինչպես և նախատեսվել է, հարցումն ապահովում է աշխարհագրական ներկայացուցչականությունը: Հարցվածները ներկայացնում են Ախուրյանի խոշորացված համայնքը կազմող 35 բնակավայրերից 14-ը: Դիտարկելով ընտրանքի ռազմավարության մեջ սահմանված ստրատաները՝ կարող ենք տեսնել, որ հարցվողների 48%-ը 2-րդ ստրատայից է (1000-ից 5000 բնակիչ ունեցող բնակավայրեր, որոնք որպես կանոն շրջապատում են Գյումրի քաղաքը և Ախուրյան և Ազատան բնակավայրերը), մոտ 33%-ը՝ 1-ին ստրատայից (Ախուրյան և Ազատան ամենամեծ բնակավայրերը), իսկ 19%-ը 3-րդ ստրատայից է (1000-ից պակաս բնակիչ ունեցող և աշխարհագրական առումով համայնքի ծայրամասում գտնվող բնակավայրեր):

Աղյուսակ 7՝ Հաճախականությունների բաշխումն ըստ տարածքի

Ընտրանքն ըստ ստրատաների

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ստրատա 1	200	32.8	32.8	32.8
	Ստրատա 2	293	48.0	48.0	80.8
	Ստրատա 3	117	19.2	19.2	100.0
	Ընդամենը	610	100.0	100.0	

Բնակավայր

		Քանակ	Տոկոս
Վավեր	Ազատան	69	11.3
	Ախուրյան	131	21.5
	Այգաբաց	17	2.8
	Արևիկ	58	9.5
	Բայանդուր	20	3.3
	Բասեն	54	8.9
	Բենիամին	22	3.6
	Կապս	19	3.1
	Կառնուտ	66	10.8
	Հայկավան	50	8.2
	Մարմաշեն	49	8.0
	Մեծ Սարիար	23	3.8
	Ջաջուռ	16	2.6
	Ջրառատ	16	2.6
	Ընդամենը	610	100.0

4.2. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ

Նախքան տվյալների վերլուծությանն անցնելը և վերոնշյալ հետազոտական հարցերին պատասխանելը, կատարվել է տվյալների նախնական կրճատում (ռեդուկցիա): Տվյալների կրճատման միջոցով մի շարք հարցերի պատասխաններ ներկայացվել են մեկ միավորի կամ համաթվի տեսքով՝ օգտագործելով սանդղակավորման տեխնիկան:

Մի կողմից, սա օգնում է գաղափարները գնահատելու համար առանձին չափորոշիչներ (սանդղակներ) կիրառել՝ հնարավորություն տալով ավելի արագ իրականացնել վիճակագրական վերլուծությունը և մասնավորապես համեմատությունները: Մյուս կողմից, կրճատումը թույլ է տալիս ստուգել, թե որ հարցերն են նույն կերպ մեկնաբանվել հարցվողների կողմից, այսինքն ընկալվել որպես հիմքում ընկած նույն հասկացությունների հետ փոխկապակցված: Դա օգնում է հետազոտողներին ավելի լավ հասկանալ, թե ինչպես է հարցվողը մեկնաբանել հարցերը՝ իր փորձից ելնելով, այսինքն «իրականությանը նայելու իրենց եղանակը»:

Անգամ եթե տվյալների կրճատումը խիստ անհրաժեշտ չէ վիճակագրական տեսանկյունից (օրինակ՝ այն չի բերում տվյալների որակի բարելավմանը, որն արդեն իսկ բարձր է՝ կիրառվող խիստ մեթոդաբանական կանոնների շնորհիվ), այն օգնում է հետազոտողներին ավելի լավ հասկանալ տվյալները և դրանց նշանակությունը:

Միաչափություն

Մասնավորապես, վերը նշված՝ հարաբերությունների չորս ոլորտներին առավել սերտ առնչվող հարցերը վերլուծվել են՝ դրանց միաչափությունը ստուգելու և առանձին չափումների (սանդղակների) մեջ միավորելու համար: Միաչափությունը սահմանվում է այն դեպքում, երբ սանդղակը կազմող բոլոր բաղադրիչները բերում են տվյալ փոփոխականի և միայն այդ փոփոխականի չափմանը: Կարող է թվալ, թե ուսումնասիրվող հարցերը նույն թեմային են վերաբերում, բայց դա բավարար չէ. կարևորն այն է, թե ինչպես են հարցվողները մեկնաբանել այդ հարցերը, քանի որ միաչափությունը դիտարկում է ոչ թե հարցերի, այլ պատասխանների հետևողականությունը:

Սանդղակներ կազմելիս՝ մենք որպես հիմք ենք վերցրել լայնորեն ընդունված այն ենթադրությունը, որ Լիկերտի հնգանիշ սանդղակի փոփոխականները կարող են համարվել ոչ միայն կարգային (օրդինալ), այլև միջակայքային

փոփոխական: Համարվում է, որ 1-ից 5-ը նշագրված կատեգորիաների («Ընդհանրապես համաձայն չեմ», «Համաձայն չեմ», «Ոչ համաձայն եմ, ոչ համաձայն չեմ», «Համաձայն եմ», «Լիովին համաձայն եմ») միջակայքերը հավասար են: Դա վերլուծություն կատարելու ավելի լայն հնարավորություն է տալիս:

Բացասական ձևակերպում ունեցող հարցերի դեպքում (օրինակ՝ «Համայնքապետարանի ծառայությունները բավարար չեն Ախուրյան խոշորացված համայնքը մաքուր պահելու համար»), ըստ անհրաժեշտության միավորների շրջում է կատարվել, այսինքն «Ընդհանրապես համաձայն չեմ» տարբերակին 1-ի փոխարեն վերագրվել է 5 միավոր, «Համաձայն չեմ» տարբերակին՝ 4-ի փոխարեն 2 և այլն, այնպես, որ «Լիովին համաձայն եմ» տարբերակը 5-ի փոխարեն 1 միավոր է գնահատվել:

Դիտարկված հարցեր

Տվյալների կրճատումն իրականացվել է հարցերի ամբողջական ցանկից վերցված 12 հարցի համար: Համարվել է, որ դրանք ավելի սերտ են կապված հարաբերությունների չորս ոլորտների հետ և ավելի տեղին են առանձին սանդղակներում և ենթասանդղակներում միավորվելու տեսանկյունից:

Հ6_1 Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:

Հ6_2 Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:

Հ6_4 Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:

Հ6_6 Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը:

Հ8_1 Բարությունն ու քաղաքավարությունը Ախուրյան խոշորացված համայնքին բնորոշ հատկանիշներ են:

Հ8_2 Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:

Հ8_4 Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:

Հ8_5 Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:

Հ10_2 Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:

Հ10_5 Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:

Հ10_6 Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:

Հ12_2 Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):

Հուսալիության թեստեր

Հասկանալու համար, թե արդյոք այս հարցերը հարցվողների կողմից հետևողական կերպով են ընկալվել, իրականացվել են հուսալիության որոշ թեստեր:

Սկզբում հաշվարկվել է զույգ առ զույգ հարաբերակցության (կորելյացիայի) մատրիցան: Երկու հարցերի՝ Հ10_5-ի և Հ10_6-ի դեպքում մյուս հարցերի մեծամասնության հետ կորելյացիան ցույց տվող Փիրսոնի r գործակցի արժեքները 0,1-ից ցածր էին:

Դրանք նաև ամենափոքր արժեքն ունեին մյուս բոլոր հարցերի համեմատ՝ առանձին հարցերը ընդհանուրի հետ ճշգրտված հարաբերակցության հաշվարկում (corrected item-total correlation):

Անգամ Կրոնբախի Ալֆա թեստը այդ նույն հարցերի դեպքում որոշակի խնդիրներ բացահայտեց: Թեև ալֆայի արժեքը ընդհանուր առմամբ ընդունելի սահմաններում է (Alpha=0,715), երկու հարցի դեպքում էլ ալֆան ավելի մեծ արժեք ուներ, երբ տվյալ հարցը չէր դիտարկվում:

Այս արդյունքների հիման վրա որոշվեց Հ10_5 և Հ10_6 հարցերն առանձին դիտարկել: Առանց այս հարցերի մյուս 10 տարրերից բաղկացած ցանկի դեպքում Կրոնբախի թեստի ալֆա արժեքը հասնում է 0,769 միավորի:

Գործոնային վերլուծություն

Տասը հարցից բաղկացած ցանկի համար ընտրանքային համարժեքության Կայզեր-Մեյեր-Օլկինի թեստի (Kaiser-Meyer-Olkin measure of sampling adequacy) արժեքը 0,832 է, այսինքն ընդունելի է, եթե հաշվի առնենք սովորաբար ընդունված 0,70-ի շեմը: Ընդհանրությունները (communalities) տատանվում են 0,410-ից (Հ8_4) մինչև 0,695 (Հ6_6) միավոր:

Առանձնական արժեքի (eigenvalue) առնվազն 1.0 միավոր դիտարկելու դեպքում առանց ռոտացիայի լուծումը 3 գործոն է բացահայտում՝ բացատրելով 54.36% կումուլյատիվ շեղումը: Գործոն 1-ը ցույց է տալիս 0,5-ից բարձր գործոնային բեռնվածություններ, բացառությամբ Հ8_5 հարցից: Այդ հարցը ցույց է տալիս 0,620 գործոնային բեռնվածություն Գործոն 2-ում, իսկ Հ6_4 և Հ6_6 հարցերը նմանատիպ բեռնվածություն են գրանցել 3-րդ գործոնում:

Հաշվարկվել է Varimax մեթոդի վրա հիմնված ռոտացիոն լուծում: Դուրս է բերվել երեք գործոն:

Սանդղակներ և ենթասանդղակներ

Հաշվի առնելով ինչպես առանց ռոտացիայի, այնպես էլ ռոտացիոն լուծումները՝ որոշվեց սահմանել «*Քաղաքացիության զգացողություն՝ առանց քաղաքական ակտիվության*» սանդղակը, որը գործոնային վերլուծության մեջ հանդես եկավ որպես ընդհանուր բաղադրիչ: Այս սանդղակի ներքո սահմանվել են 3 ենթասանդղակներ.

- «*Համայնքի հանդեպ հոգածություն*» ենթասանդղակը, որը ներառում է թե՛ «հարաբերություններ հանրային տարածքի հետ», թե՛ «հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտների բաղադրիչները: Համայնքում հանրային տարածքի մաքրությունը տիպիկ օրինակ է, թե ինչպես են համայնքում պայքարում գերծանրաբեռնվածության արդյունքում առաջացած մարտահրավերների հետ, մասնավորապես առավել տեսանելի՝ հանրային տարածքի առումով: Այն ներառում է նաև կանոնների հանդեպ հարգանքը և ծառայությունների որակը:

- «*Մյուսների վստահելիություն*» ենթասանդղակը, որը ներառում է այնպիսի արժեքներ, ինչպիսիք են հարգանքը, համերաշխությունը և վստահությունը:
- «*Գեղեցկություն*» ենթասանդղակը, որը ներառում է հպարտության զգացումը այն տարածքի համար, որտեղ ապրում է համայնքը:

Բացի այդ, որոշվեց սահմանել «Քաղաքական մասնակցություն» անվանումով սանդղակը, որը կազմված է այն երկու հարցերից, որոնք չէին անցել հուսալիության թեստերը և Հ3 հարցից՝ «*Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում*»:

Այս երեք հարցերը շատ բան են պատմում տեղական քաղաքական կյանքին ուղղակի մասնակցության մասին՝ ներկայացնելով հանրային կառույցների հետ ընդհանուր հարաբերությունների համապատասխան հարթությունը: Սա ամեն դեպքում կարևոր ոլորտ է ուսումնասիրման համար, թեև հարցվածների կողմից այն կարծես թե մյուս ոլորտների հետ միանման կերպով չի ընկալվել:

Սանդղակներում և ենթասանդղակներում հարցերի այսպիսի վերախմբավորումը վերլուծության համար անհրաժեշտ է առնվազն երկու պատճառով: Ինչպես նշվեց, դա օգնում է ավելի լավ ուսումնասիրել պատասխանների հետևողականությունը՝ ստուգելով, թե արդյոք կոնկրետ հարցերը հարցվողների կողմից մեկնաբանվել են այնպես, ինչպես նախատեսված էր հետազոտողների կողմից: Երկրորդ, այն միավորում է հարցերի մի խումբ՝ մեկ ավելի հուսալի չափորոշիչ ձևավորելով առանձին գաղափարների համար:

Ստորև ներկայացվում է հարցերի մանրամասն ցանկը թե՛ սանդղակների, թե՛ ենթասանդղակների համար:

Աղյուսակ 8՝ Սանդղակներում և ենթասանդղակներում ներառված հարցերի ցանկը

	«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» սանդղակ
Հ3	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:
Հ10_5	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:
Հ10_6	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:

	«ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԳԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ» սանդղակ (առանց «քաղաքացիական ակտիվության»)
Հ6_1	Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:
Հ6_2	Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:
Հ6_4	Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:
Հ6_6	Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը:
Հ8_1	Բարությունն ու քաղաքավարությունը Ախուրյան խոշորացված համայնքին բնորոշ հատկանիշներ են:
Հ8_2	Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:
Հ8_4	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:
Հ8_5	Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:
Հ10_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:
Հ12_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):

	«Համայնքի հանդեպ հոգածություն» ենթասանդղակ
Հ6_1	Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:
Հ6_2	Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:

Հ10_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:
Հ12_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):
	«Մյուսների վստահելիություն» ենթասանդղակ
Հ8_2	Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:
Հ8_4	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:
Հ8_5	Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:
	«Գեղեցկություն» ենթասանդղակ
Հ6_6	Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը:
Հ6_4	Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:

Պատասխանների հետևողականության վերլուծության միջոցով կարելի է բացահայտել է հարցերի այնպիսի խմբեր, որոնք, դատելով հարցվողների մեկնաբանությունից, գործ ունեն ընդհանուր թաքնված (լատենտ) փոփոխականի հետ: Մենք այդ վերլուծության հնարավորությունն օգտագործեցինք, որպեսզի ստուգենք, թե արդյոք վերլուծությունից բխող ընդհանուր լատենտ փոփոխականները ինչպես են տեղավորվում մեր տեսական շրջանակում: Մասնավորապես, ուսումնասիրվել է, թե արդյոք այն ենթաոլորտները, որոնք սահմանվել են որպես «քաղաքացիության զգացողությունը» ձևավորող հարաբերությունների չորս ոլորտների մոտարկող չափորոշիչներ, կարևոր են համարվել նաև հարցվողների կողմից՝ ըստ առօրյա կյանքում իրենց փորձի:

Խնդիրը պարզաբանելու համար օրինակ բերենք: «Երթևեկությունը» միանշանակ գերծանրաբեռնվածության խնդրի օրինակ է, ուստի հարցվողների կողմից երթևեկության ծանրաբեռնվածության բարձր մակարդակի մասին նշումը կարող է ընկալվել որպես «հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտում որոշակի խնդիրների ցուցանիշ՝ մի բան, որ երկարաժամկետ հեռանկարում կարող է վտանգել քաղաքացիության զգացողությունը: Բայց գյուղական համայնքում ճանապարհային երթևեկությունը չի կարող գերծանրաբեռնվածության կարևոր խնդիր լինել, քանի որ այն չի զգացվում բնակիչների առօրյա կյանքում: Մինչդեռ որոշ այլ օրինակներ կարող են ավելի նշանակալի լինել

«հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտը գնահատելու համար, օրինակ՝ խմելու ջրի պակասը, որը գուցե պայմանավորված է նրանով, որ ջրատար համակարգը հնացած է, իսկ մարդիկ ջուրը չեն խնայում առաջնահերթ կարիքների համար (օրինակ՝ շարունակում են ջրել իրենց խոտածածկույթը):

Իրականացված գործոնային վերլուծության և պատասխանների միջև հայտնաբերված կապերի հիման վրա անհրաժեշտություն առաջացավ էլ ավելի կատարելագործել տեսական շրջանակը, մասնավորապես հարաբերությունների չորս ոլորտները նախանշող ենթաոլորտների մասով, որպեսզի ավելի լավ հասկանանք, թե որ բաղադրիչներն են ավելի մոտ հարցվողների փորձին և ավելի լավ նկարագրում «Հարաբերություններ հանրային տարածքի հետ», «Հարաբերություններ մյուսների հետ», «Հարաբերություններ հանրային կառույցների հետ», «Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» տիրույթների ընդհանուր գնահատականները:

Պարզվեց, որ.

- *«Մաքրությունը»* ավելի սերտ կապված էր *«Շրջակա միջավայրի կայունության»* և *«Հանրային ծառայությունների արդյունավետության և ծախսարդյունավետության»*, քան *«Գեղեցկության»* հետ: Սա կարելի է բացատրել նրանով, որ մաքրությունը և՛ առանձին քաղաքացիների պատասխանատվության, և՛ հանրային ծառայությունների որակի արդյունքն է: Ավելին, այն կարելի է մեկնաբանել նաև որպես գերծանրաբեռնվածության խնդրի կարևոր օրինակ: Այդ իսկ պատճառով այն ներառվել է *«Համայնքի հանդեպ հոգածություն»* ընդհանուր ենթասանդղակում և ընդգրկվել *«Հարաբերություններ գերծանրաբեռնվածության հետ»* ոլորտում:
- Ըստ այդմ, հանրային տարածքի հետ հարաբերությունները դիտարկվում են միայն գեղեցկության տեսանկյունից և չափվում *«Գեղեցկություն»* ենթասանդաղակով:
- *«Մյուսների վստահելիությունը»* ենթասանդղակը մեկ չափորոշիչի մեջ միավորեց *«Բարություն և քաղաքավարություն»*, *«Վստահություն և վստահելիություն»* և *«Համերաշխություն»* բաղադրիչները և *«Հարաբերություններ մյուսների հետ»* ոլորտում զգալի մասնաբաժին կազմեց, անգամ եթե այս ոլորտում դիտարկենք նաև համայնքի անդամների ընդհանուր գնահատականը (Հ5_3):
- *«Հանրային միջոցառումներին մասնակցությունը»*, ինչպես նաև *«Երթևեկությունը»*, հետազոտության սկզբից ևեթ չեն դիտարկվել, քանի որ համարվել է, որ դրանք կարևոր չեն ախուրյանցիների համար.
- *«Քաղաքական մասնակցությունը»* չափվում է վերը նշված 3 բաղադրիչներով (այսինքն՝ կենտրոնանալով որոշումների կայացման գործընթացում ակտիվ մասնակցության և տեղական քաղաքական պաշտոններում առաջադրվելու վրա) և հանդիսանում է «հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի բաղադրիչներից մեկը՝ *«Պաշտոնյաների արդարացիության»*, որը չափվում է Հ10_7 հարցով (*«Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար»*), *«Հարկերի վճարման»* (Հ10_3 *«Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու*

տուրքերը») և «*Ես հետաքրքրված են Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով*» (Հ5_5) բաղադրիչների հետ միասին:

- Համայնքապետարանի ծառայություններից բավարարվածությունը, որը չափվում է Հ5_4 «*Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով*» հարցով, ներառվել է «Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտում՝ «*Համայնքի հանդեպ հոգածություն*» ենթասանդղակի հետ միասին:

Հարաբերությունների 4 ոլորտների մոտարկված չափորոշիչներ

Այս նկատառումների հիման վրա տեսական շրջանակը կազմող հարաբերությունների չորս ոլորտները չափվել են հետևյալ մոտարկված չափորոշիչների համադրմամբ:

Աղյուսակ 9՝ Հարաբերությունների 4 ոլորտների մոտարկված չափորոշիչներ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ի ՈԼՈՐՏ	**ՄՈՏԱՐԿՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉ**
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԵՏ	*Գեղեցկություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_գեղեցկություն
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՀԵՏ	*Մարդկանց ընդհանուր գնահատանք* • Հ5_3 «Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում» *Մյուսների վստահելիություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Մյուսների վստահելիություն

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ	*Հետաքրքրվածություն տեղական քաղաքականությամբ* • Հ5_5 «Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» *Քաղաքական մասնակցություն* • ՍԱՆԴՂԱԿ «Քաղաքական մասնակցություն» *Պաշտոնյաների արդարացիության ընկալում* • Հ10_7 «Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» *Հարկերի վճարում* • Հ10_3 «Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը»
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ	*Բավարարվածություն տեղական ծառայություններով* • Հ5_4 «Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով» *Համայնքի հանդեպ հոգածություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Համայնքի հանդեպ հոգածություն

Անշուշտ, ավելի մանրամասն պատկեր ստանալու համար հաջորդ գլուխներում վերլուծության ընթացքում կանդրադառնանք ոչ միայն մոտարկված չափորոշիչներին, այլև հարցման ընթացքում ներկայացված բոլոր հարցերին: Մոտարկված չափորոշիչները կօգտագործվեն հիմնականում

հարցվողների տարբեր կատեգորիաների (օրինակ՝ տղամարդ և կին, բնակության 1-ին, 2-րդ, 3-րդ ստրատա և այլն) միջև համեմատություններ կատարելու և հարաբերությունների չորս ոլորտների համադրված գնահատականներ ստանալու համար:



Գծապատկեր 4՝ Վերանայված տեսական շրջանակ

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կայուն տեղային զարգացման հնարավորությունների զարգացում

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան
բազմաբնակավայր համայնք

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

5.1. «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ» Ո՞Ր ԸՆԿԱԼՈՒՄՆ Է ԳԵՐԱԿՇՌՈՒՄ

Համայնքային ինքնությունը և հետաքրքրությունը համայնքի կյանքի նկատմամբ

Առաջին հետազոտական հարցը փորձում է հասկանալ «համայնքային ինքնության» ընկալումը՝ դիտարկելով «համայնքի» տարբեր տեսակները:

Այս նպատակին են ծառայում մասնավորապես հետևյալ հարցերը.

Հ1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով:

Հ4. Մարդիկ տարբեր պատկերացումներ ունեն իրենք իրենց մասին և այն մասին, թե ինչպես են հարաբերվում իրենց շրջապատող աշխարհին: Խնդրում եմ գնահատել, թե որքանով եք Ձեզ մոտ համարում Ձեր բնակավայրին, համայնքին, մարզին, երկրին:

Հ5_1 Ուրախ եմ, որ ապրում եմ Ախուրյան խոշորացված համայնքում:

Հ5_2 Կցանկանայի Ախուրյանի խոշորացված համայնքից տեղափոխվել այլ համայնք, եթե հնարավորություն ունենայի:

Հ5_3 Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում:

Հ5_4 Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով:

Հ5_5 Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:

Բացի այդ, կան նաև այլ հարցեր, որոնք հարաբերությունների չորս ոլորտների կոնկրետ ասպեկտների վերաբերյալ փորձում են բացահայտել, թե արդյոք մարդիկ տարբերություն տեսնում են իրենց բնակավայրի և Ախուրյան խոշորացված համայնքի մյուս բնակավայրերի միջև: Դրանք են՝

Հ6_3 Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան մաքուր են, որքան իմը:

Հ6_5 Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան գեղեցիկ են, որքան իմը:

Հ8_3 Ախուրյան խոշորացված համայնքի այլ բնակավայրերի բնակիչները նույնքան վստահելի են, որքան իմ բնակավայրում ապրողները:

Հ10_4 Ընդհանուր առմամբ, մեր բնակավայրի բնակիչներն ավելի շատ են հարգում կանոնները, քան Ախուրյան համայնքի այլ բնակավայրերի բնակիչները:

Հ12_4 Ընդհանուր առմամբ, Ախուրյան խոշորացված համայնքի մյուս բնակավայրերի բնակիչները նույնքան հարգալից են վերաբերվում շրջակա միջավայրին, որքան մեր բնակավայրի բնակիչները:

Ընդհանուր առմամբ, բավականին մեծ հետաքրքրություն է նկատվում համայնքի կյանքի նկատմամբ: Հարցվածների գրեթե 73%-ը նշում է, որ «*որոշ չափով հետաքրքրված է*» կամ նույնիսկ «*շատ հետաքրքրված է*» համայնքի կյանքով:

Հարցվածների 27,3%-ը կարծես թե հետաքրքրված չեն: Փորձենք ավելի մանրամասն ուսումնասիրել, թե ովքեր են նրանք:

Աղյուսակ 10՝ Հարց 1-ի հաճախականություն-ների բաշխում

Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Բոլորովին հետաքրքրված չեմ	87	14.3	14.3	14.3
	Առանձնապես հետաքրքրված չեմ	79	13.0	13.0	27.3
	Որոշ չափով հետաքրքրված եմ	330	54.1	54.2	81.4
	Շատ հետաքրքրված եմ	113	18.5	18.6	100.0
	Ընդամենը	609	99.8	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	1	.2		
Ընդամենը		610	100.0		

Տղամարդիկ, կարծես թե, ավելի շատ են հետաքրքրված համայնքի կյանքով, քան կանայք, գուցե այն պատճառով, որ նրանք հիմնականում ծնվել են տվյալ բնակավայրում, մինչդեռ կանանց զգալի մասը ծնվել է ոչ այն բնակավայրում, որտեղ ներկայումս ապրում է:

Աղյուսակ 11՝ Հարց 1-ի և սեռի խաչաձև աղյուսակ

«Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով» * սեռ խաչաձև աղյուսակ

		Սեռ					
		Կին		Տղամարդ		Ընդամենը	
		N	%	N	%	N	%
Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով	Բոլորովին հետաքրքրված չեմ	64	14.8%	23	13.0%	87	14.3%
	Առանձնապես հետաքրքրված չեմ	65	15.0%	14	7.9%	79	13.0%
	Որոշ չափով հետաքրքրված եմ	249	57.6%	81	45.8%	330	54.2%
	Շատ հետաքրքրված եմ	54	12.5%	59	33.3%	113	18.6%
Ընդամենը		432	100.0%	177	100.0%	609	100.0%

Այս տարբերությունը նշանակալի է նաև ընդհանուր բնակչության շրջանում: Եթե դիտարկենք 1-ից («*Բոլորովին հետաքրքրված չեմ*») մինչև 4 («*Շատ հետաքրքրված եմ*») սանդղակը և հաշվարկենք այս արժեքների միջինը՝ պարզվում է, որ կանայք ավելի քիչ են հետաքրքրված, քան տղամարդիկ՝ <0,001 նշանակալիության աստիճանով, այսինքն, սա համայնքին բնորոշ տարբերություն է:

Աղյուսակ 12՝ Ըստ սեռի միջին արժեքների տարբերության նշանակալիության թեստ

		Ցրվածքների հավասարաչափության Լիվինի թեստ		Միջինների համարժեքության t թեստ							
						Նշանակալիություն		Միջին-ների տարբերություն	Ստան-դարտ շեղման տարբերություն	Տարբերության վստահելիության 95% միջակայք	
		F	Sig	t	df	Միակողմանի p	Երկկողմանի p			Ստորին	Վերին
Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով	Ցրվածքները հավասարաչափ համարելու դեպքում	.250	.617	-3.921	607	<.001	<.001	-.316	.081	-.474	-.158
	Ցրվածքները հավասարաչափ չհամարելու դեպքում			-3.759	299.895	<.001	<.001	-.316	.084	-.482	-.151

Նշանակալի տարբերություն կարելի է նկատել նաև ընտրանքային շերտերի միջև: Երրորդ ստրատայի (ավելի փոքր և ծայրամասային բնակավայրերի) հարցվածները ավելի շատ են հետաքրքրված համայնքային կյանքով, քան 1-ին ստրատայի (ավելի մեծ և ավելի կենտրոնական բնակավայրերի) բնակիչները: Երկրորդ ստրատայի բնակավայրերի քաղաքացիները նրանց միջակայքում են գտնվում:

Ամենայն հավանականությամբ, համայնքի զգացողությունը ավելի լավ է ձևավորվում փոքր բնակավայրերում, որտեղ մարդիկ միմյանց անձամբ և ավելի մոտ են ճանաչում:

Աղյուսակ 13՝ Հարց 1-ի և ընտրանքի ստրատայի խաչաձև աղյուսակ

«Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով» * ստրատա խաչաձև աղյուսակ

		Ստրատա							
		Ստրատա 1		Ստրատա 2		Ստրատա 3		Ընդամենը	
		N	%	N	%	N	%	N	%
Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով	Բոլորովին հետաքրքրված չեմ	40	20.0%	38	13.0%	9	7.7%	87	14.3%
	Առանձնապես հետաքրքրված չեմ	31	15.5%	36	12.3%	12	10.3%	79	13.0%
	Որոշ չափով հետաքրքրված եմ	97	48.5%	170	58.2%	63	53.8%	330	54.2%
	Շատ հետաքրքրված եմ	32	16.0%	48	16.4%	33	28.2%	113	18.6%
Ընդամենը		200	100.0 %	292	100.0%	117	100.0 %	609	100.0 %

Այսպիսով, կանայք և ավելի կենտրոնական ու մեծ բնակավայրերում ապրող մարդիկ, ըստ երևույթին, ավելի անտարբեր են համայնքային կյանքի նկատմամբ՝ նրանք կարծես թե ավելի քիչ են ներգրավված համայնքում:

Աղյուսակ 14՝ Հարց 5_5-ի հաճախականության բաշխում

Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	78	12.8	13.0	13.0
	Համաձայն չեմ	221	36.2	37.0	50.0
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	89	14.6	14.9	64.9
	Համաձայն եմ	191	31.3	31.9	96.8
	Լիովին համաձայն եմ	19	3.1	3.2	100.0
	Ընդամենը	598	98.0	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել	12	2.0		
Ընդամենը		610	100.0		

Հետաքրքրվածությունը Ախուրյան խոշորացված համայնքով

Թեև հարցվածներից շատերը պատասխանել են, որ «*որոշ չափով հետաքրքրված են*» կամ «*շատ հետաքրքրված են*» համայնքի կյանքով, Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերին անդրադառնալիս հարցվածների 50%-ն ասել են, որ հետաքրքրված չեն, իսկ եթե դրան ավելացնենք չեզոք դիրքում գտնվողներին («*Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ*»), նրանց ընդհանուր քանակը հասնում է 65%-ի: Հարցվածների միայն 35%-ն է նշում, որ հետաքրքրված է նոր համայնքապետարանի ծրագրերով: Սա ցույց է տալիս, որ որոշակի խնդիրներ կան նոր տեղական ինքնակառավարման մարմնի նկատմամբ օտարվածություն զգալու առումով:

Անգամ այս հարցում ավելի փոքր և ծայրամասային բնակավայրերի բնակիչները (Ստրատա 3) ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերում, քան կենտրոնական և մեծ բնակավայրերի բնակիչները (Ստրատա 1):

Աղյուսակ 15՝ Հարց 1-ի և ստրատայի խաչաձև աղյուսակ

«Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» * ստրատա խաչաձև աղյուսակ

		Ստրատա						Ընդամենը	
		Ստրատա 1		Ստրատա 2		Ստրատա 3			
		N	%	N	%	N	%	N	%
Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:	Ընդհանրապես համաձայն չեմ	28	14.4%	48	16.7%	2	1.7%	78	13.0%
	Համաձայն չեմ	79	40.5%	104	36.1%	38	33.0%	221	37.0%
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	32	16.4%	35	12.2%	22	19.1%	89	14.9%
	Համաձայն եմ	48	24.6%	97	33.7%	46	40.0%	191	31.9%
	Լիովին համաձայն եմ	8	4.1%	4	1.4%	7	6.1%	19	3.2%
Ընդամենը		195	100.0%	288	100.0%	115	100.0%	598	100.0%

Առնչություն

Այս առումով հետաքրքիր տեղեկություններ կարող ենք ստանալ Հ4 հարցի պատասխաններից: Այս հարցի միջոցով հարցվողներին խնդրել ենք գնահատել, թե որքանով են իրենց մոտ համարում իրենց բնակավայրին, համայնքին, մարզին և երկրին՝ 1-ից («Ընդհանրապես մոտ չեմ համարում») մինչև 4 («Շատ մոտ եմ համարում») միավորների միջակայքում: Ելնելով այն ենթադրությունից, որ այս փոփոխականը կարելի է դիտարկել որպես միջակայքային, համեմատություններ կատարելու համար հաշվարկվել են միջին արժեքները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 16՝ Հարց 4-ի նկարագրական վերլուծություն

Որքանո՞վ եք Ձեզ մոտ համարում…

		…Ձեր բնակավայրին	…Ձեր համայնքին	…Ձեր մարզին	…Ձեր երկրին
N	Վավեր	609	606	605	608
	Բաց թողնված	1	4	5	2
Միջին		3.29	2.54	2.90	3.32
Մեդիանա		3.00	3.00	3.00	3.00
Մոդա		3	3	3	3
Ստանդարտ շեղում		.717	.844	.697	.712
Ցրվածք		.514	.712	.486	.507
Անհամաչափ բաշխման գործակից (skewness)		-.985	-.335	-.661	-.987

Պարզվում է, որ խոշորացված համայնքին մոտ լինելու զգացողությունն ընդհանուր առմամբ ավելի թույլ է, քան համակեցության այլ մակարդակների նկատմամբ, իսկ «*բնակավայրը*» և «*երկիրը*» ամենաբարձր միջին արժեքներն են ստացել:

Հարկ է ընդգծել, որ բոլոր մակարդակների համար միջին արժեքները 2-ից բարձր են: Հարցվածների մեծամասնությունը դրական կապ է զգում ինչպես բնակավայրի և խոշորացված համայնքի, այնպես էլ մարզի և երկրի հետ: Խոշորացված համայնքի դեպքում վերոնշյալ տարբերությունը գալիս է մի խումբ հարցվածներից (ընտրանքի 34%-ը), որոնք պատասխանել են, որ իրենք իրենց «մոտ են համարում» կամ «շատ մոտ են համարում» բնակավայրին, բայց «առանձնապես մոտ չեն համարում» կամ նույնիսկ «ընդհանրապես մոտ չեն համարում» համայնքին: Այս խմբին կարելի է անվանել «սկեպտիկներ»՝ նրանք չեն կարողանում նույնականացնել իրենց նոր խոշորացված համայնքի հետ:

Աղյուսակ 17՝ Հ4_1-ի և Հ4_2-ի խաչաձև աղյուսակ

		ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ԳՆԱՀԱՏԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՁԵԶ ՄՈՏ ՀԱՄԱՐՈՒՄ ՁԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻՆ, ՄԱՐԶԻՆ, ԵՐԿՐԻՆ:_ՁԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՆ				
		Ընդհանրապես մոտ չեմ համարում	Առանձնապես մոտ չեմ համարում	Մոտ եմ համարում	Շատ մոտ եմ համարում	Ընդամենը
ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ԳՆԱՀԱՏԵԼ, ԹԵ ՈՐՔԱՆՈՎ ԵՔ ՁԵԶ ՄՈՏ ՀԱՄԱՐՈՒՄ ՁԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԻՆ, ՄԱՐԶԻՆ, ԵՐԿՐԻՆ:_ՁԵՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ	Ընդհանրապես մոտ չեմ համարում	16	12	28	26	82
	Առանձնապես մոտ չեմ համարում	0	21	99	51	171
	Մոտ եմ համարում	2	6	163	124	295
	Շատ մոտ եմ համարում	0	0	4	53	57
	Ընդամենը	18	39	294	254	605

Երկու փոփոխականների միջև չափավոր փոխկապվածություն կա, որը չափվել է գամմա գործակցով (-1<G<1):

G=0.488 (նշանակալիության մակարդակ <.0001):

Փոխկապվածության գործակիցը ստուգում է, թե արդյոք մարդիկ հակված են նմանատիպ զգացմունքներ ունենալ բնակավայրի և խոշորացված համայնքի նկատմամբ: Անշուշտ, «սկեպտիկների» խումբը նվազեցնում է գամմա գործակցի արժեքը, քանի որ նրանց դեպքում բնակավայրին և խոշորացված համայնքին մոտ լինելու տարբեր մակարդակ է դիտարկվում:

Եթե դիտարկենք ընտրանքի ստրատաները, ապա կտեսնենք, որ փոխկապվածությունն ավելի մեծ է 1-ին ստրատայում՝ ի համեմատ 3-րդ և 2-րդ ստրատաների: Դա նշանակում է, որ 1-ին ստրատայում մարդիկ ավելի շատ են հակված կա՛մ հստակ զգալ, որ մոտ են թե՛ համայնքին, և՛ թե բնակավայրին, կա՛մ դրանցից ոչ մեկի նկատմամբ առնչություն չզգալ:

Սա երևում է նաև այն դեպքում, երբ դիտարկում ենք «սկեպտիկների» քանակը բոլոր երեք ստրատաներում: Այս խմբերն ավելի մեծ են 2-րդ (36%) և 3-րդ ստրատաներում (35%), քան 1-ին ստրատայում (29%): Դա կարող է նշանակել, որ 1-ին ստրատայի բնակիչները իրենց մոտ են զգում թե՛ համայնքին, և թե՛ բնակավայրին:

Թվում է, թե այս ամենը հակասում է նրան, ինչ պարզեցինք Հ1 և Հ5_5 հարցերի վերլուծության ժամանակ: Եթե դիտարկենք նրանց, ովքեր իրենց մոտ չեն զգում ոչ բնակավայրին, ոչ էլ համայնքին, ապա կտեսնենք, որ Ստրատա 1-ում այս խումբն ավելի մեծ է (10%), քան Ստրատա 2-ում (7%) և Ստրատա 3-ում (5%):

Այսպիսով, եթե նոր խոշորացված համայնքի նկատմամբ թերահավատ վերաբերմունք ունեցողներն ավելի շատ են 2-րդ և 3-րդ ստրատաներում, ապա

1-ին ստրատայում բնակչության որոշակի մասն ընդհանրապես իրեն համայնքին մոտ չի զգում:

Աղյուսակ 18՝ Բնակավայրին և համայնքին մոտ զգալու կորելյացիաները ըստ ստրատաների

Ստրատա				Արժեք	Ասիմպտոտիկ ստանդարտ սխալ[a]	Մոտավոր T[b]	Մոտավոր նշանակա-լիություն
Ստրատա 1	Նոմինալը՝ նոմինալով	Phi		.692			<.001
		Cramer's V		.399			<.001
		Contingency Coefficient		.569			<.001
	Օրդինալը՝ օրդինալով	Kendall's tau-b		.450	.056	7.482	<.001
		Kendall's tau-c		.383	.051	7.482	<.001
		Gamma	Zero-Order	.656	.072	7.482	<.001
	Վավեր պատահույթների քանակ			198			
Ստրատա 2	Նոմինալը՝ նոմինալով	Phi		.525			<.001
		Cramer's V		.303			<.001
		Contingency Coefficient		.465			<.001
	Օրդինալը՝ օրդինալով	Kendall's tau-b		.245	.054	4.345	<.001
		Kendall's tau-c		.197	.045	4.345	<.001
		Gamma	Zero-Order	.390	.082	4.345	<.001
	Վավեր պատահույթների քանակ			291			
Ստրատա 3	Նոմինալը՝ նոմինալով	Phi		.505			<.001
		Cramer's V		.291			<.001
		Contingency Coefficient		.451			<.001
	Օրդինալը՝ օրդինալով	Kendall's tau-b		.272	.085	3.097	.002
		Kendall's tau-c		.220	.071	3.097	.002
		Gamma	Zero-Order	.427	.127	3.097	.002
	Վավեր պատահույթների քանակ			116			
Ընդամենը	Նոմինալը՝ նոմինալով	Phi		.561			<.001
		Cramer's V		.324			<.001
		Contingency Coefficient		.489			<.001
	Օրդինալը՝ օրդինալով	Kendall's tau-b		.316	.036	8.389	.000
		Kendall's tau-c		.260	.031	8.389	.000
		Gamma	Zero-Order	.488	.052	8.389	.000
			First-Order Partial	.477			
	Վավեր պատահույթների քանակ			605			

a. Եթե չի դիտարկվում զրոյական հիպոթեզը.
b. Եթե զրոյական հիպոթեզը դիտարկելով օգտագործվում է ասիմպտոտիկ ստանդարտ սխալը:

Առնչությունը մյուս բնակավայրերի հետ

Եթե կան մարդիկ, որոնք խոշորացված համայնքի հետ կապված ընդհանուր ինքնություն չունեն, դա դեռ չի նշանակում, որ նրանք բարեկամության և մտերմության զգացում չունեն այլ բնակավայրերի նկատմամբ:

Սա հասկանալու նպատակով որոշակի հարցեր ենք տրվել: Այս հարցերի միջոցով մտադիր էինք ստուգել, թե արդյոք բնակավայրի հետ նույնականացումը (դրա բարձր ցուցանիշները) ինչ-որ կերպ պայմանավորված է այլ բնակավայրերում գերակշռող մշակույթից և վարքագծից տարբերվելու ընկալմամբ:

Այդ հարցերն են՝

Հ5_3 Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում:

Հ6_3 Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան մաքուր են, որքան իմը:

Հ6_5 Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան գեղեցիկ են, որքան իմը:

Հ8_3 Ախուրյան խոշորացված համայնքի այլ բնակավայրերի բնակիչները նույնքան վստահելի են, որքան իմ բնակավայրում ապրողները:

Հ10_4 Ընդհանուր առմամբ, մեր բնակավայրի բնակիչներն ավելի շատ են հարգում կանոնները, քան Ախուրյան համայնքի այլ բնակավայրերի բնակիչները:

Հ12_4 Ընդհանուր առմամբ, Ախուրյան խոշորացված համայնքի մյուս բնակավայրերի բնակիչները նույնքան հարգալից են վերաբերվում շրջակա միջավայրին, որքան մեր բնակավայրի բնակիչները:

Ախուրյան համայնքում ապրող մարդկանց ընդհանրական գնահատանքի զգացում կա՝ 87%-ը համաձայն է կամ լիովին համաձայն է Հ5_3 *«Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում»* դատողության հետ:

Գալով ավելի կոնկրետ հարցերին, կարող ենք որոշ աննշան տարբերություններ նկատել: Օրինակ, վստահելիության և կանոնների նկատմամբ հարգանքի վերաբերյալ միջին գնահատականն ավելի ցածր է: Ըստ երևույթին, որոշ կասկածներ կան առ այն, որ մյուս բնակավայրերի մարդիկ նույնն են, ինչ տվյալ բնակավայրի բնակիչները:

Բացի այդ, այս դատողություններում ավելի հաճախ են հանդիպում «*Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել*» տարբերակները:

Առավել հետաքրքրական է, որ մարդիկ շատ զգույշ են դառնում մյուս բնակավայրերի մարդկանց մասին դատողություններ արտահայտելիս: Եթե «*Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ*» և «*Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել*» պատասխանները միասին դիտարկենք, ապա մաքրության վերաբերյալ հարցում դրանց հաճախականությունը կազմում է 45,2%, գեղեցկության մասին հարցում՝ 24,1%, մարդկանց վստահելիության հարցում՝ 51,6%, կանոնները հարգելու վերաբերյալ հարցում՝ 52,6%-ը, շրջակա միջավայրին հարգալից վերաբերվելու մասին հարցում՝ 48,7%-ը: Սա կարելի է մեկնաբանել որպես մյուսների հանդեպ հարգանքի յուրահատուկ ձև:

Աղյուսակ 19՝ Հ5_3, Հ6_3, Հ8_3, Հ10_4, Հ12_4 հարցերի հաճախականություն-ների բաշխում

		Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում:	Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան մաքուր են, որքան իմը:	Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան գեղեցիկ են, որքան իմը:	Ախուրյան խոշորացված համայնքի այլ բնակավայրերի բնակիչները նույնքան վստահելի են, որքան իմ բնակավայրում ապրողները:	Ընդհանուր առմամբ, մեր բնակավայրի բնակիչներն ավելի շատ են հարգում կանոնները, քան Ախուրյան համայնքի այլ բնակավայրերի բնակիչները:	Ընդհանուր առմամբ, Ախուրյան խոշորացված համայնքի մյուս բնակավայրերի նույնքան հարգալից են վերաբերվում շրջակա միջավայրին, որքան մեր բնակավայրի բնակիչները:
N	Վավեր	606	436	536	442	405	428
	Բաց թողնված	4	174	74	168	205	182
Միջին		3.97	3.26	3.20	3.09	3.33	3.55
Մեդիանա		4.00	4.00	4.00	3.00	4.00	4.00
Ստանդարտ շեղում		.634	.927	.990	.889	.843	.711

Համայնքային ինքնության մասին նկատառումներ

Ամփոփելով համայնքային ինքնության մասին հատվածը՝ կարելի է ասել, որ մարդիկ դեռևս դժվարանում են նույնականացնել իրենց Ախուրյան խոշորացված համայնքի հետ՝ ի տարբերություն բնակավայրի, երկրի կամ նույնիսկ մարզի հետ առնչության զգացողության: Ախուրյան խոշորացված համայնքը պետք է աշխատանք տանի այդ ուղղությամբ, սակայն հարկ է հաշվի առնել առավել մեծ հետաքրքրություն ներկայացնող երկու միտք:

Նախ, շատ հաճախ կարելի է տեղերում լսել, որ ավելի փոքր ու ծայրամասային բնակավայրերի բնակիչները պետք է որ ամենաշատը տուժեն տեղական ինքնակառավարման մարմինների խոշորացման գործընթացից: Ախուրյան համայնքի դեպքում դա միայն մասամբ է ճիշտ: Խոշորացված համայնքի նկատմամբ այսպես կոչված «թերահավատ» վերաբերմունք ունեցողներն, անշուշտ, ավելի շատ են փոքր ու ծայրամասային բնակավայրերում, բայց նրանք ավելի հետաքրքրված են Ախուրյան համայնքի ծրագրերով և առհասարակ համայնքի կյանքով: Նրանք թերահավատ են, բայց նաև ուշադիր հետևում են, թե ինչ է կատարվում տեղական ինքնակառավարման նոր մարմնում, և դա կարող է շատ օգտակար լինել:

Շատ ավելի մտահոգիչ է այն, որ ավելի մեծ բնակավայրերում բնակիչների զգալի մասն իրեն մոտ չի զգում ոչ համայնքին, ոչ էլ բնակավայրին: Մեծ բնակավայրերում ավելի դժվար է զգալ համայնքի հետ կապը, թերևս այն պատճառով, որ բնակիչներից շատերը պարզապես այլ վայրերից են տեղափոխվել (շատ ավելի տարածված միտում է տեղափոխվել ավելի մեծ բնակավայր, ոչ թե փոքր), կամ գուցե այն պատճառով, որ այնտեղ ավելի հեշտ է ապրել անանուն, առանց մյուս բնակիչների հետ հաճախակի հարաբերվելու: Ամեն դեպքում, արժե ուշադրություն դարձնել այս միտումի վրա և միգուցե որոշակի նախաձեռնություններ նախատեսել՝ ավելի մեծ բնակավայրերի բնակիչներին համայնքային կյանքում ներգրավելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել կանանց վրա, քանի որ նրանք զգալիորեն ավելի քիչ են ներգրավված համայնքում, քան տղամարդիկ, գուցե զուտ այն պատճառով, որ, ամենայն հավանականությամբ, նրանք ամուսնանալուց հետո նոր են հայտվել համայնքում:

Կարելի է նաև ասել, որ խոշորացված համայնքի նկատմամբ թերահավատ վերաբերմունքը կապված չէ այլ բնակավայրերում ապրող մարդկանց նկատմամբ թերահավատության հետ: Խոսքը մյուսների նկատմամբ առավելության զգացում ունենալու մասին չէ: Ախուրյան համայնքում ապրող բոլոր մարդկանց ընդհանրական գնահատանք կա, և էական չէ, թե որ բնակավայրում են նրանք ապրում: Դա շատ դրական ու խոստումնալից երևույթ է համայնքային կապերի հետագա ամրապնդման համար:

Դեռևս անհրաժեշտություն կա տեսնելու, թե նոր խոշորացված համայնքի տեղական ինքնակառավարման մարմինը նախկինի համեմատ ինչ ավելացված արժեք է առաջարկում: Դա բխում է նաև «*Համայնքների խոշորացումն ավելի շատ առավելություններ, քան թերություններ բերեց*» դատողության պատասխանների մասնատվածությունից: Խոշորացման վերաբերյալ բավականին քննադատական մոտեցում ունեցող մարդկանց մեծ քանակի (42,2%) հետ մեկտեղ կա համակիրների զգալի խումբ (29,4%), իսկ բնակիչներից շատերը դեռևս խոշորացման մասին դատելու բավարար փաստեր չունեն և, համապատասխանաբար, ընտրել են «ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ» տարբերակը (28,3%):

Աղյուսակ 20՝ Հ10_8 հարցի հաճախականություն-ների բաշխում

Համայնքների խոշորացումը ավելի շատ առավելություններ, քան թերություններ բերեց:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	49	8.0	8.6	8.6
	Համաձայն չեմ	191	31.3	33.6	42.3
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	161	26.4	28.3	70.6
	Համաձայն եմ	142	23.3	25.0	95.6
	Լիովին համաձայն եմ	25	4.1	4.4	100.0
	Ընդամենը	568	93.1	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Դժվարանում եմ պատասխանել	42	6.9		
Ընդամենը		610	100.0		

5.2. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՄԱՐԴԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉՈՐՍ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Վերը ներկայացված շրջանակը ենթադրում է, որ քաղաքացիության զգացողությունը կարող է բացահայտվել փորձառության չորս ոլորտներում: Դրանք հարաբերությունների այն չորս տիրույթներն են, որոնք, որպես կանոն, պայմանավորում են համայնքի անդամների ներգրավվածության մակարդակը: Ինչպես նշվեց, դրանք հետևյալն են.

- հարաբերություններ հանրային տարածքի հետ,
- հարաբերություններ մյուսների հետ,
- հարաբերություններ հանրային կառույցների հետ,
- հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ:

Ինչպե՞ս են մարդիկ գնահատում փորձառության այս չորս ոլորտները:

Այս հարցին պատասխանելու համար առաջին հերթին ուսումնասիրվել են այն մոտարկված չափորոշիչները, որոնք սահմանվել են տվյալների կրճատմանը նվիրված գլխում:

Հարաբերություններ հանրային տարածքի հետ

Սկսենք հանրային տարածքի հետ հարաբերություններից: Ինչպես նշվեց, համայնքի արտաքին տեսքը շատ առումներով ներկայացնում է համայնքի ոգին: Համայնքը բնականորեն նույնականացվում է իր արտաքին տեսքի հետ. համայնքում ապրող մարդիկ հակված են էմոցիոնալ կապ ունենալ համայնքի տեղանքի հետ, հպարտանալ դրանով և շատ քննադատաբար վերաբերվել այն դեպքերին, երբ այն վտանգի է ենթարկվում պլանավորման կամ կառուցապատման վերաբերյալ որոշումներով:

«*Գեղեցկություն*» ենթասանդղակը սահմանվել է որպես «հանրային տարածքի հետ հարաբերությունների» մոտարկված չափորոշիչ: Այն բաղկացած է հետևյալ տարրերից.

	«Գեղեցկություն» ենթասանդղակ
Հ6_6	Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը:
Հ6_4	Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:

Աղյուսակ 21՝ Հ6_4 և Հ6_6 հարցերի նկարագրական վերլուծություն

Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	5	.8	.9	.9
	Համաձայն չեմ	50	8.2	8.6	9.4
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	59	9.7	10.1	19.5
	Համաձայն եմ	425	69.7	72.8	92.3
	Լիովին համաձայն եմ	45	7.4	7.7	100.0
	Ընդամենը	584	95.7	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	26	4.3		
Ընդամենը		610	100.0		

Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	24	3.9	4.0	4.0
	Համաձայն չեմ	112	18.4	18.5	22.5
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	25	4.1	4.1	26.7
	Համաձայն եմ	361	59.2	59.8	86.4
	Լիովին համաձայն եմ	82	13.4	13.6	100.0
	Ընդամենը	604	99.0	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	6	1.0		
Ընդամենը		610	100.0		

Եթե յուրաքանչյուր բաղադրիչ առանձին դիտարկենք, ապա դրանք բոլորն էլ ընդհանուր առմամբ դրական գնահատական են ցույց տալիս: Հարցվածների մի խումբ (22%) բավականին թերահավատ է վերաբերվում այն փաստին, որ զբոսաշրջիկը ուրախ կլինի այցելել Ախուրյան խոշորացված համայնք: Նրանք հավանաբար ենթադրում են, որ նույնիսկ եթե համայնքի գեղեցկությունն ավելի քան բավարար է բնակիչների համար, գուցե դա բավարար չէ, որ զբոսաշրջիկը դրական տպավորություն ստանա այդ վայրից:

Մասնավորապես, 20-29 տարեկան հարցվածներն ավելի հաճախ են կասկած արտահայտել համայնքը զբոսաշրջիկի համար հետաքրքիր վայր համարելու հարցում:

Աղյուսակ 22՝ Հ6_4 հարցի և սեռի խաչաձև աղյուսակ

Տարիքային խումբ * «Եթե ես զբասաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք» խաչաձև աղյուսակ

		Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:										Ընդամենը	
		Ընդհանրապես համաձայն չեմ		Համաձայն չեմ		Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ		Համաձայն եմ		Լիովին համաձայն եմ			
		N	%	N	%	N	%	N	%	N	%	N	%
Տարիքային խումբ	<20	0	0.0%	4	3.6%	1	4.0%	13	3.6%	4	4.9%	22	3.6%
	20-29	2	8.3%	11	9.8%	3	12.0%	16	4.4%	6	7.3%	38	6.3%
	30-39	4	16.7%	11	9.8%	5	20.0%	65	18.0%	14	17.1%	99	16.4%
	40-49	5	20.8%	19	17.0%	4	16.0%	47	13.0%	11	13.4%	86	14.2%
	50-59	5	20.8%	25	22.3%	6	24.0%	76	21.1%	10	12.2%	122	20.2%
	60-69	4	16.7%	33	29.5%	5	20.0%	93	25.8%	26	31.7%	161	26.7%
	70+	4	16.7%	9	8.0%	1	4.0%	51	14.1%	11	13.4%	76	12.6%
Ընդամենը		24	100.0%	112	100.0%	25	100.0%	361	100.0%	82	100.0%	604	100.0%

Ստուգելու համար, թե արդյոք համայնքի գեղեցկության մասին տեսակետները տարբերվում են ըստ տարիքի, տնտեսական վիճակի, կրթական մակարդակի, սեռի և ծննդավայրի, օգտագործվել է *«Գեղեցկություն»* ենթասանդղակը: Ինչպես կարելի էր կանխատեսել, միակ վիճակագրական (գրեթե) նշանակալի հարաբերակցությունը կապված է ծննդավայրի հետ. մարդիկ, որոնք ապրում են իրենց ծննդավայրը հանդիսացող բնակավայրում, ավելի շատ են հակված այդ վայրը գեղեցիկ համարել, քան նորեկները:

Աղյուսակ 23՝ «Գեղեցկություն» ենթասանդղակի և Դ3 հարցի նկարագրական վերլուծություն

«Գեղեցկություն» ենթասանդղակ

	N	Միջին	Ստանդարտ շեղում	Ստանդարտ սխալ	90% վստահության միջակայք միջին արժեքի համար		Նվազագույն	Առավելագույն
					Ստորին շեմ	Վերին շեմ		
Այո	299	3.7475	.71345	.04126	3.6794	3.8156	1.00	5.00
Ոչ	279	3.6505	.73131	.04378	3.5783	3.7228	1.00	5.00
Ընդամենը	578	3.7007	.72313	.03008	3.6511	3.7502	1.00	5.00

Կարելի է ասել, որ բնակիչները բավականին գեղեցիկ են համարում համայնքը: Մարդիկ գիտակցում են, որ զբոսաշրջության համար ամենաբարձր վարկանիշ ունեցող վայրում չեն ապրում, բայց գտնում են, որ իրենց բնակավայրը լավն է: Կարելի է ասել, որ թեև «հարաբերություններ հանրային տարածքի հետ» ոլորտում որևէ անկանխատեսելի բացահայտում չկա, սակայն որոշակի եզրակացություններ կարելի է քաղել հետագա զարգացումների համար՝ լանդշաֆտի պահպանման, նոր շենքերի կամ հանրային տարածքի բարենորոգման առումով՝ Ախուրյան խոշորացված համայնքում ապրելու հպարտության զգացումը զարգացնելու համար: Անշուշտ, դա հեշտ գործ չի լինի, հաշվի առնելով նաև, թե որքան մոտ է Ախուրյան խոշորացված համայնքը հայտնի Գյումրի քաղաքին, բայց միևնույնն է, նոր շենքերի, պլանավորման որոշումների և ժամանցի ենթակառուցվածքների (օրինակ՝ հանրային այգիների) խորհրդանշական արժեքի նկատմամբ ավելի մեծ ուշադրությունը կարող է մեծապես օգնել:

Հարաբերություններ մյուսների հետ

«Հարաբերությունների մյուսների հետ» ոլորտի առաջին հետաքրքիր հարցն արդեն ուսումնասիրվել է՝ դա հենց Հ5_3 հարցն է, որը ցույց է տալիս Ախուրյան համայնքում ապրող մարդկանց նկատմամբ մեծ գնահատանքը:

Մյուսների հետ հարաբերությունները սերտորեն կապված են ընդհանրական/սոցիալական վստահության հետ: Հ7 հարցը *(«Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս»)* ընդունված ձևակերպում է, որը հաճախ օգտագործվում է այս վստահությունը չափելու համար (օրինակ՝ ՏՀՀԿ «Ավելի լավ կյանքի» ինդեքսում): Այս հարցի արդյունքները բավականին խոսուն են: Պատասխանների 85%-ի դեպքում նշվել է՝ «*Անհրաժեշտ է շատ զգույշ լինել*»: Դա վկայում է Ախուրյան համայնքում ընդհանրական վստահության՝ ընդհանուր առմամբ ցածր մակարդակի մասին: Պետք է հաշվի առնել, որ 2021 թվականին Հայաստանում անցկացված «Համաշխարհային արժեքների հետազոտության» համաձայն այս ցուցանիշը 77% էր, այսինքն՝ թեև Ախուրյան համայնքում ընդհանրական վստահության ցուցանիշը ցածր է հայաստանյան միջինից, սակայն վստահության այս ցածր մակարդակը ավելի լայն հանրությանը բնորոշ մշակութային հատկանիշ է:

Աղյուսակ 24՝ Հ7 հարցի հաճախականություն-ների բաշխում

Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Մարդկանց մեծ մասին կարելի է վստահել	88	14.4	14.5	14.5
	Անհրաժեշտ է շատ զգույշ լինել	519	85.1	85.5	100.0
	Ընդամենը	607	99.5	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել	3	.5		
Ընդամենը		610	100.0		

Զարմանալի է, բայց երիտասարդ ու տարեց մարդկանց արձագանքների միջև բավականին հստակ տարբերություն կա: Այս տարբերությունը վիճակագրորեն նշանակալի է ողջ համախմբության համար (նշանակալիությունը՝ <0,004 / <0,001): Երիտասարդներն ավելի քիչ են վստահում, քան տարեցները:

Աղյուսակ 25՝ Հ7 հարցի և տարիքի խաչաձև աղյուսակ

Տարիքային խումբ* «Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս» խաչաձև աղյուսակ

		Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս:				Ընդամենը	
		Մարդկանց մեծ մասին կարելի է վստահել		Անհաեաժեշտ է շատ զգույշ լինել			
		N	%	N	%	N	%
Տարիքային խումբ	<20	0	0.0%	22	4.2%	22	3.6%
	20-29	5	5.7%	35	6.7%	40	6.6%
	30-39	8	9.1%	91	17.5%	99	16.3%
	40-49	7	8.0%	80	15.4%	87	14.3%
	50-59	19	21.6%	101	19.5%	120	19.8%
	60-69	30	34.1%	133	25.6%	163	26.9%
	70+	19	21.6%	57	11.0%	76	12.5%
Ընդամենը		88	100.0%	519	100.0%	607	100.0%

Աղյուսակ 26՝ Հ7 հարցի և տարիքի միջև կորելյացիայի գործակիցներ

		Արժեք	Ասիմպտոտիկ ստանդարտ սխալ[a]	Մոտավոր T[b]	Մոտավոր Նշանակալիություն
Նոմինալը՝ նոմինալով	Phi	.177			.004
	Cramer's V	.177			.004
	Contingency Coefficient	.174			.004
Օրդինալը՝ օրդինալով	Kendall's tau-b	-.144	.034	-4.034	<.001
	Kendall's tau-c	-.130	.032	-4.034	<.001
	Gamma	-.321	.075	-4.034	<.001
Վավեր դեպքերի քանակ		607			

a. Եթե չի դիտարկվում զրոյական հիպոթեզը.
b. Եթե զրոյական հիպոթեզը դիտարկելով օգտագործվում է ասիմպտոտիկ ստանդարտ սխալը :

Ընդհանրական վստահության հարցում նշանակալի դեր է խաղում նույնիսկ սեռը: Կին հարցվածների շրջանում ընդհանրական վստահության զգալիորեն ավելի ցածր մակարդակ է գրանցվել, քան տղամարդկանց մոտ (<0,001 նշանակալիության մակարդակով):

Աղյուսակ 27՝ Հ7 հարցի և սեռի խաչաձև աղյուսակ

«Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս» * սեռ խաչաձև աղյուսակ

		Սեռ					
		Իգական		Արական		Ընդամենը	
		N	%	N	%	N	%
Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս:	Մարդկանց մեծ մասին կարելի է վստահել	48	11.1%	40	22.7%	88	14.5%
	Անհրաժեշտ է շատ զգույշ լինել	383	88.9%	136	77.3%	519	85.5%
Ընդամենը		431	100.0%	176	100.0%	607	100.0 %

Աղյուսակ 28՝ Հ7 հարցի և սեռի միջև կապի Քի քառակուսի (χ^2) գործակիցը և այլ թեստեր

Քի քառակուսի (Chi-square) թեստեր

	Արժեք	df	Ասիմպտոտիկ նշանակա-լիություն (2-կողմանի)	Ճշգրիտ նշանակա-լիություն (2-կողմանի)	Ճշգրիտ նշանակա-լիություն (1-կողմանի)
Փիրսոնի քի քառակուսի գործակից (Pearson Chi-Square)	13.543[a]	1	<.001		
Շարունակականության ճշգրտում (Continuity Correction)[b]	12.624	1	<.001		
Հավանականության գործակից (Likelihood Ratio)	12.653	1	<.001		
Ֆիշերի ճշգրիտ թեստ (Fisher's Exact Test)				<.001	<.001
Գծային փոխկապվածություն (Linear-by-linear association)	13.521	1	<.001		
Վավեր պատահույթների քանակ	607				

a. 0 վանդակներում (.0%) ակնկալվող քանակը 5-ից ցածր է: Նվազագույն ակնկալվող քանակը 25,52 է:
b. Հաշվարկվել է միայն 2x2 աղյուսակի համար:

Աղյուսակ 29՝ Հ7 հարցի և սեռի միջև կորելյացիայի գործակիցներ

		Արժեք	Մոտավոր նշանակալիություն	Ճշգրիտ նշանակալիություն
Նոմինալը՝ նոմինալով	Phi	-.149	<.001	<.001
	Cramer's V	.149	<.001	<.001
	Contingency Coefficient	.148	<.001	<.001
Վավեր պատահույթների քանակ		607		

Այդ տեղեկատվությունը նույնիսկ ավելի հետաքրքրական է դառնում, եթե այն համեմատենք վստահության հետ կապված այլ հարցերի արդյունքների հետ: Նախ, Հ8_2 դատողությունը («*Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են*») ցույց է տալիս, որ Ախուրյանի խոշորացված համայնքի մարդկանց միջինից բարձր վստահելի համարելու հնարավորություն կա: Այնուամենայնիվ, որոշ զսպվածություն է նկատվել, քանի որ «*համաձայն չեմ*» պատասխանները կազմել են 17%, իսկ «*ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ*» պատասխանները՝ գրեթե 36%: Այդուհանդերձ, հարցվածների առնվազն 45%-ի մոտ դրական դիրքորոշում է արձանագրվում:

Աղյուսակ 30՝ Հ8_2 հարցի հաճախականություն-ների բաշխում

Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	9	1.5	1.5	1.5
	Համաձայն չեմ	101	16.6	17.4	18.9
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	207	33.9	35.6	54.5
	Համաձայն եմ	247	40.5	42.4	96.9
	Լիովին համաձայն եմ	18	3.0	3.1	100.0
	Ընդամենը	582	95.4	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	28	4.6		
Ընդամենը		610	100.0		

Թեև վստահությունը զգայուն հարց է, հարցվածները գտնում են, որ Ախուրյանի խոշորացված համայնքի մարդիկ սովորաբար սրտաբաց են.

- նրանք բարի են և քաղաքավարի (Հ8_1),
- նրանք հակված են կամավոր աշխատանք կատարել լավ նպատակի համար (Հ8_4),
- նրանք պատրաստ են օգնել դժվարության կացության մեջ հայտնված զբոսաշրջիկներին (Հ8_5):

Աղյուսակ 31՝ Հ_1, Հ8_4 և Հ8_5 հարցերի նկարագրական վերլուծություն

	Քանակ	Միջին	Ստանդարտ շեղում	Անհամաչափ բաշխման գործակից (skewness)	
	Վիճակագրություն	Վիճակագրություն	Վիճակագրություն	Վիճակագրություն	Ստանդարտ սխալ
Բարությունն ու քաղաքավարությունը Ախուրյան խոշորացված համայնքին բնորոշ հատկանիշներ են:	597	3.57	.788	-.908	.100
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:	582	3.72	.921	-1.065	.101
Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:	598	4.31	.774	-1.488	.100
Վավեր քանակ (listwise)	566				

Ընդհանուր առմամբ, առկա տվյալները վկայում են տեղի բնակչության նկատմամբ դրական վերաբերմունքի մասին: Ինչպես նշվել է տվյալների կրճատման վերաբերյալ գլխում, այս հարցերից մի քանիսը կարող են համադրվել մեկ ենթասանդղակում, որը վերաբերում է «*Մյուսների վստահելիությանը*»: Սա կօգնի համեմատություններ կատարել տարբեր խմբերի միջև:

	«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ
Հ8_2	Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:
Հ8_4	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:
Հ8_5	Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:

Առաջին բացահայտումը վերաբերում է սեռին: Տղամարդկանց և կանանց միջև վիճակագրորեն նշանակալի տարբերություն կա. տղամարդկանց համեմատ կանայք ավելի հազվադեպ են վստահելի են համարում մյուսներին:

Այսպիսով, հաստատվում է այն, ինչն արդեն տեսանք մյուս հարցերում: Այս տարբերության պատճառները դժվար է նշել, բայց միանգամայն պարզ է, որ տարբերությունը առկա է:

Աղյուսակ 32՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ սեռի

«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ

	N	Միջին	Ստանդարտ շեղում	Ստանդարտ սխալ	90% վստահության միջակայք միջին արժեքի համար		Նվազագույն	Առավելագույն
					Ստորին շեմ	Վերին շեմ		
Կին	383	3.7232	.59910	.03061	3.6728	3.7737	1.67	5.00
Տղամարդ	167	3.8762	.58368	.04517	3.8015	3.9510	2.00	5.00
Ընդամենը	550	3.7697	.59809	.02550	3.7277	3.8117	1.67	5.00

ANOVA աղյուսակ

«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ

	Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
Խմբերի միջև	2.723	1	2.723	7.704	.006
Խմբերի ներսում	193.661	548	.353		
Ընդամենը	196.384	549			

Կա նաև մեկ այլ տարբերություն՝ ըստ հարցվողների բնակավայրի, որը սակայն լիարժեք վիճակագրական նշանակալիություն չունի ամբողջ համախմբության համար: Կարծես թե ավելի փոքր և ծայրամասային բնակավայրերում ապրող մարդիկ (Ստրատա 3) ավելի բարձր են գնահատում «*Մյուսների վստահելիությունը*», քան նրանք, ովքեր ապրում են ավելի մեծ և ավելի կենտրոնական բնակավայրերում (Ստրատա 1):

Աղյուսակ 33՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատաների

«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ

Ստրատա	Միջին	N	Ստանդարտ շեղում
Ստրատա 1	3.6906	181	.64313
Ստրատա 2	3.7782	263	.58048
Ստրատա 3	3.8836	106	.54441
Ընդամենը	3.7697	550	.59809

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ * ստրատա	Խմբերի միջև (համակցված)	2.528	2	1.264	3.566	.029
	Խմբերի ներսում	193.856	547	.354		
	Ընդամենը	196.384	549			

Ընտանիքի եկամուտը դիտարկելիս «*Մյուսների վստահելիության*» գնահատականի տարբերությունները լիարժեք նշանակալի են համախմբության համար: Հստակ երևում է, որ ավելի վատ տնտեսական պայմաններ ունեցող մարդիկ պակաս լավատես են մյուսների վստահելիության հարցում:

Աղյուսակ 34՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ եկամտի

«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ

Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:	Միջին	N	Ստանդարտ շեղում
Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար	3.2549	34	.83710
Բավարար գումար ունենք սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է	3.7239	99	.60053
Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել	3.8169	304	.56718
Կարող ենք գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ՝ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց	3.8527	86	.53530
Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց	3.8333	14	.51887
Ընդամենը	3.7703	537	.60214

ANOVA աղյուսակ

		Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»:	Խմբերի միջև (համակցված)	10.544	4	2.636	7.630	<.001
	Խմբերի ներսում	183.796	532	.345		
	Ընդամենը	194.341	536			

Որոշակի կապ կա նաև «*Մյուսների վստահելիության*» և կրթության միջև: Բացառությամբ բարձրագույն կրթություն ունեցողների խմբի՝ որոշակի փոխկապվածություն է նկատվում կրթության մակարդակի և մյուսների ընկալման միջև՝ որքան բարձր է կրթական աստիճանը, այնքան ցածր է մյուսների վստահելիության գնահատումը:

Աղյուսակ 35՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ կրթության

«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ

Ո՞րն է Ձեր կրթական ամենաբարձր աստիճանը	Միջին	N	Ստանդարտ շեղում
Տարրական	4.0000	1	.
Թերի միջնակարգ	4.0000	10	.35136
Միջնակարգ	3.7816	264	.62535
Միջին մասնագիտական	3.6710	154	.60377
Թերի բարձրագույն	3.5278	12	.64288
Բարձրագույն	3.8838	109	.50791
Ընդամենը	3.7697	550	.59809

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Մյուսների վստահելիությունը» ենթասանդղակ * Ո՞րն է Ձեր կրթական ամենաբարձր աստիճանը:	Խմբերի միջև (համակցված)	4.242	5	.848	2.402	.036
	Խմբերի ներսում	192.142	544	.353		
	Ընդամենը	196.384	549			

Ընդհանուր առմամբ, Ախուրյան համայնքի բնակիչների կողմից մարդկանց գնահատանքի և «*Մյուսների վստահելիության*» բաղադրիչների առումով բարձր ցուցանիշներ են գրանցվել: Դա, անշուշտ, շատ դրական արդյունք է: Այնուամենայնիվ, պատշաճ ուշադրություն է պետք հատկացնել քաղաքացիների տարբեր կատեգորիաների միջև եղած տարբերություններին: Կանայք և ավելի ցածր եկամուտ ունեցող մարդիկ ըստ երևույթին ավելի բացասաբար են վերաբերվում համայնքի մյուս անդամներին գնահատելու և վստահելու հնարավորությանը: Ավելի երիտասարդ հարցվողներն այնքան էլ պատրաստ չեն վստահել մյուս մարդկանց, և դա կարող է խոչընդոտ հանդիսանալ համայնքում նրանց ակտիվ ներգրավվածության համար:

Այս թիրախային խմբերին պետք է ավելի մեծ ուշադրություն հատկացնել՝ համայնքում քաղաքացիության զգացողությունն ամրապնդելու համար:

Հարաբերություններ հանրային կառույցների հետ

Քաղաքացիների ու իշխանությունների միջև հարաբերությունները միշտ երկու կողմ ունեն: Մի կողմից, մարդիկ ակնկալում են, որ իշխանություններն իրենց կարիքները պիտի բավարարեն, մյուս կողմից, պետք չէ անտեսել, որ քաղաքացիները նաև սեփականատերեր են (դրանից բխող պարտականություններով), այլ ոչ միայն հանրային հաստատություններից օգտվողներ կամ հաճախորդներ:

Հանրային և հատկապես տեղական իշխանությունների առջև քաղաքացիների պատասխանատվության զգացումը գնահատելու համար որոշ հարցեր են ներառվել հարցաթերթում:

Դրանք հետևյալն են.

- քաղաքական մասնակցությունը՝ որպես ընտրող (Հ2_1 և Հ2_2),
- «կարծիք ունենալու» հնարավորությունը որոշումների կայացման գործընթացում, կամ երբ ինչ-որ բան այնպես չի աշխատում, ինչպես պետք է (Հ3 և Հ10_1),
- քաղաքական մասնակցությունը որպես քաղաքական գործիչի թեկնածու (Հ10_5 և Հ10_6),
- հանրային բարիքի նկատմամբ պաշտոնյաների արդարացիության ընկալումը (Հ10_7),
- պաշտոնյաների՝ հանուն հանրային բարօրության գործելու կարողության ընկալումը (Հ9),
- քաղաքացիների արդարացիության ընկալումը հարկերի վճարման միջոցով հանրային բարօրությանը նպաստելու տեսանկյունից (Հ10_3):

Հարցվածների 73%-ը նշել է, որ միշտ քվեարկում է ինչպես տեղական, այնպես էլ համապետական ընտրություններին: Դա բարձր ցուցանիշ է. ըստ երևույթին, մարդիկ քվեարկելը համարում են առաջնահերթ քաղաքացիական պարտականություն, ընդ որում հավասարապես կարևորվում են տեղական ու համապետական ընտրությունները:

Ընտրություններից զատ, մարդիկ կարծում են, որ շատ հնարավորություն չունեն որոշումների կայացման գործընթացում իրենց կարծիքը լսելի դարձնելու տեսանկյունից: 31%-ը կարծում է, որ քաղաքական համակարգը դրան ընդհանրապես չի նպաստում, 16%-ը՝ շատ քիչ, իսկ 37%-ը՝ միայն որոշ չափով: Ավելի ցածր եկամուտ ունեցող մարդիկ ավելի հաճախ են կարծում, որ որևէ ձայն չունեն որոշումների կայացման գործընթացում:

Աղյուսակ 36՝ Հ3 հարցի հաճախականություն-ների բաշխում

Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես չի նպաստում	180	29.5	30.7	30.7
	Շատ քիչ է նպաստում	96	15.7	16.4	47.1
	Որոշ չափով է նպաստում	214	35.1	36.5	83.6
	Բավականաչափ նպաստում է	76	12.5	13.0	96.6
	Զգալի չափով նպաստում է	20	3.3	3.4	100.0
	Ընդամենը	586	96.1	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	24	3.9		
Ընդամենը		610	100.0		

Այդուհանդերձ, հարցվածների մոտ 50%-ը գտնում է, որ հանրային ծառայության ցածր որակի վերաբերյալ բողոք ներկայացնելու դեպքում իրենց բողոքը լուրջ կընդունվի: Այդ համոզմունքը տարբերվում է ըստ կրթական մակարդակի: Բարձրագույն կրթություն ունեցող մարդիկ գտնում են, որ իրենց կլսեն, իսկ ցածր կրթական աստիճան ունեցողները կարծում են, որ ոչ:

Աղյուսակ 37՝ Հ10_1 հարցի ANOVA վերլուծությունն ըստ կրթության

Եթե ես բողոքեի հանրային ծառայության ցածր որակից, վստահ եմ, որ իմ բողոքը լուրջ կդիտարկվեր:

Կրթական երեք մակարդակ	Միջին	N	Ստանդարտ շեղում
Տարրական կամ ավելի ցածր	2.55	11	1.214
Միջնակարգ կամ մասնագիտական	3.07	423	1.148
Բարձրագույն (նաև դեռ ընթացքի մեջ գտնվող)	3.31	122	1.136
Ընդամենը	3.11	556	1.151

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Եթե ես բողոքեի հանրային ծառայության ցածր որակից, վստահ եմ, որ իմ բողոքը լուրջ կդիտարկվեր» * կրթական 3 մակարդակ	Խմբերի միջև (համակցված)	9.098	2	4.549	3.461	.032
	Խմբերի ներսում	726.764	553	1.314		
	Ընդամենը	735.862	555			

Բոլորովին այլ է վերաբերմունքը ընտրություններին թեկնածություն առաջադրելու հնարավորությանը: Հարցվողները հավասարապես բաժանված են երկու խմբի՝ մի մասը կարծում են, որ տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը կարող է հետաքրքիր և գրավիչ փորձ լինել, իսկ մյուս մասը հակառակ կարծիքն են հայտնում: Այնուամենայնիվ, հարցվածների մեծ մասը (88%) խուսափում է տեղական ընտրություններում թեկնածություն առաջադրելու գաղափարից: Դա կարող է կապված լինել այն հարցադրման հետ, թե արդյոք տեղական պաշտոնյաները իսկապես նվիրված են հանրային բարօրությանը, թե հիմնականում հետապնդում են իրենց անձնական շահերը: Հարցվածների 50%-ը համոզված է, որ տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում այնտեղ են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար, մինչդեռ 24%-ը բացահայտորեն համաձայն չէ դրա հետ:

Տեղական պաշտոնյաների աշխատանքի գնահատականը բավարար է, բայց ոչ շատ բարձր: Հարկ է հաշվի առնել, որ այս հարցերը գնահատվել են 1-ից 10-ը միավորով: Մյուսների համեմատ առավել բարձր են գնահատվել համայնքապետարանի աշխատակազմի և համայնքապետի աշխատանքը: Հետաքրքիր փաստ է նաև «*համայնքի ավագանու*» աշխատանքի վերաբերյալ գնահատական չտված հարցվողների մեծ թիվը, որը, ամենայն հավանականությամբ, խոսում է այն մասին, որ հարցվողները չեն ճանաչում ավագանու անդամներին և չեն կարող գնահատել նրանց աշխատանքը:

Հարկ է նկատել, որ կանանց ու տղամարդկանց պատասխանների բաշխման մեջ տարբերություններ կան: Տղամարդիկ ավելի արմատական են իրենց գնահատականներում՝ նրանք հակված են կամ շատ ցածր (1) կամ շատ բարձր (10) գնահատական տալ:

Գնահատականները միանգամայն տարբեր են ըստ հարցվածների եկամտի: Ավելի ցածր եկամուտ ունեցող մարդիկ զգալիորեն ավելի ցածր են գնահատում պաշտոնյաներին:

Աղյուսակ 38՝ Հ9 հարցի նկարագրական վերլուծություն

1-ից մինչև 10-բալանոց սանդղակով, այս պահի դրությամբ որքանով եք բավարարված Ախուրյան խոշորացված համայնքի տեղական ինքնակառավարման գործընթացով և տեղական պաշտոնյաների աշխատանքով:

		Տեղական ինքնակառավարում	Համայնքապետի աշխատանք	Համայնքի ավագանու աշխատանք	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանք
N	Վավեր	574	576	500	564
	Բաց թողնված	36	34	110	46
Միջին		6.68	6.98	6.60	7.58
Մեդիանա		7.00	8.00	7.00	8.00
Մոդա		10	10	10	10
Ստանդարտ շեղում		2.759	2.880	2.969	2.666
Անհամաչափ բաշխման գործակից (skewness)		-.493	-.666	-.500	-.951
Անհամաչափ բաշխման գործակցի ստանդարտ սխալ		.102	.102	.109	.103

Աղյուսակ 39՝ Հ9 հարցի ANOVA վերլուծությունն ըստ եկամտի

Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:		Տեղական ինքնակառավարում	Համայնքապետի աշխատանք	Համայնքի ավագանու աշխատանք	Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանք
Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար	Միջին	4.83	5.26	4.90	5.94
	Քանակ	36	38	30	33
Բավարար գումար ունենք սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է	Միջին	6.39	6.65	6.41	7.43
	Քանակ	109	105	95	103
Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել	Միջին	6.82	7.16	6.72	7.72
	Քանակ	310	313	272	310
Կարող ենք գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ՝ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց	Միջին	7.18	7.55	7.13	8.01
	Քանակ	91	93	82	92
Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց	Միջին	7.29	6.54	6.55	6.75
	Քանակ	14	13	11	12
Ընդամենը	Միջին	6.68	6.99	6.61	7.59
	Քանակ	560	562	490	550

ANOVA աղյուսակ

		Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
Տեղական ինքնակառավարում * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև (համակցված)	166.040	4	41.510	5.646	<.001
	Խմբերի ներսում	4080.102	555	7.352		
	Ընդամենը	4246.143	559			
Համայնքապետի աշխատանք * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:	Խմբերի միջև (համակցված)	166.280	4	41.570	5.169	<.001
	Խմբերի ներսում	4479.606	557	8.042		
	Ընդամենը	4645.886	561			
Համայնքի ավագանու աշխատանք * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև (համակցված)	117.394	4	29.349	3.414	.009
	Խմբերի ներսում	4168.706	485	8.595		
	Ընդամենը	4286.100	489			
Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանք * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև (համակցված)	122.578	4	30.644	4.434	.002
	Խմբերի ներսում	3766.906	545	6.912		
	Ընդամենը	3889.484	549			

Այսպիսով, թեև տեղական պաշտոնյաների աշխատանքով լիարժեք գոհունակություն կարծես թե չկա (թեև պետք է հաշվի առնել, որ այլ համատեքստերում քաղաքացիների գնահատականները հաճախ զգալիորեն ավելի վատն են), այնուամենայնիվ քաղաքացիները չեն ցանկանում իրենց թեկնածությունն առաջադրել ընտրություններին: Իհարկե, դժգոհությունը լսելի դարձնելու այլ եղանակներ կան, առաջին հերթին՝ ընտրությունների միջոցով: Միևնույն ժամանակ, տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում քաղաքականության մեջ ուղղակի ներգրավումը ավելի կենսունակ տարբերակ է, քան ինստիտուցիոնալ ավելի բարձր մակարդակներում: Այնպես որ, կարելի էր ակնկալել, որ այս տարբերակը ևս կդիտարկվի քաղաքացիների կողմից:

Ըստ երևույթին, Ախուրյան համայնքի բնակիչների դեպքում դա այդպես չէ:

Նրանք իրականում չեն կարծում, որ քաղաքական պաշտոնները իրենց համար են: Դա կարող է կապված լինել կա՛մ նրա հետ, որ տեղական պաշտոնյաները համեմատաբար ցածր սոցիալական գնահատական ունեն, կա՛մ այն բանի հետ, որ բնակիչները անհամապատասխան են համարում իրենց՝ մտածելով, որ տեղական պաշտոնյա կարող են լինել միայն նրանք, ովքեր դրա փորձն ունեն: Ինչևէ, սա կարող է վտանգել ընդհանուր բարօրության նկատմամբ համատեղ պատասխանատվության ու սեփականատիրության զգացումը և դրդել քաղաքացիներին ավելի շատ դառնալ պահանջկոտ սպառող, այլ ոչ թե ակտիվ դիրքորոշմամբ խնդիր լուծող:

Վերջապես, հարկավոր է նկատի ունենալ, որ քաղաքացիների և հանրային կառույցների միջև հարաբերությունների մաս է կազմում նաև հարկերի վճարումը: Անշուշտ, հարկեր վճարելը անհատական շահի զիջում է հանուն ընդհանուր շահի: Հարկերից խուսափելու միտումը սպառողական մոտեցման վկայություն է, և այն կարող է ավելի ու ավելի շատ քաղաքացիների դրդել հարկերը պատշաճ կերպով չվճարելու գործելակերպին: Այսպես, հարցաթերթում կոնկրետ հարցադրում է արվել Ախուրյան համայնքում հարկերից խուսափելու ընկալման մասին (Հ10_3): Պատասխաններից երևում է, որ որոշակի կասկածներ կան առ այն, որ բոլոր քաղաքացիները տեղական հարկերն ու տուրքերը վճարում են պատշաճ կերպով: Սա միշտ և ամենուր զգայուն խնդիր է:

Աղյուսակ 40՝ Հ10_3 հարցի նկարագրական վերլուծություն

Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	20	3.3	3.7	3.7
	Համաձայն չեմ	148	24.3	27.2	30.9
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	132	21.6	24.3	55.1
	Համաձայն եմ	219	35.9	40.3	95.4
	Լիովին համաձայն եմ	25	4.1	4.6	100.0
	Ընդամենը	544	89.2	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել	66	10.8		
Ընդամենը		610	100.0		

Տվյալների կրճատման վերաբերյալ գլխում որոշ հարցեր ընտրվեցին որպես «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի մոտարկված չափորոշիչներ: Դիտարկենք դրանք՝ բացահայտելու համար, թե արդյոք

նշանակալի տարբերություններ կան ըստ հարցվածների եկամտի, բնակության վայրի, սեռի և տարիքի:

Ընտանիքի եկամուտը էական տարբերություն է ստեղծում հատկապես այն հարցում, թե ինչպես են մարդիկ ընկալում քաղաքական դերերի գրավչությունը և պաշտոնյաների արդարացիությունը: Շատ ցածր եկամուտ ունեցող մարդիկ («*Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար*») հակված են ավելի գրավիչ համարել պաշտոնյայի դերը (միջին=3.34): Դրան հաջորդող կատեգորիաների մարդիկ ավելի քիչ հետաքրքրություն են ցուցաբերում, բացառությամբ ամենահարուստների («*Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց*»՝ միջին=3.71):

Պաշտոնյաների արդարացիության ընկալումն ավելի գծային հարաբերակցության մեջ է տնտեսական վիճակի հետ՝ որքան ցածր է եկամուտը, այնքան բարձր է այն ընկալումը, որ պաշտոնյաներն արդար չեն և ավելի շատ մտահոգված են իրենց անձնական շահերով, քան հանրային բարօրությամբ:

Նմանատիպ միտում է նկատվում նաև տեղական հարկերի ու տուրքերի վճարման հարցում քաղաքացիների արդարացիության ընկալման հարցում՝ ավելի ցածր եկամուտ ունեցող հարցվածները կարծում են, որ բնակիչների զգալի մասը պատշաճ կերպով չի վճարում հարկերը:

Դրան հակառակ, որքան բարձր է եկամտի մակարդակը, այնքան մեծ է որոշումների կայացման գործընթացում կարծիք ունենալու հնարավորության ընկալումը: Սա երևում է Հ3 հարցից, որտեղ հարցվողներին խնդրում են գնահատել, թե որքանով է քաղաքական համակարգը թույլ տալիս մարդկանց կարծիք հայտնել որոշումների կայացման գործընթացում:

Ավելի անբարենպաստ տնտեսական պայմանները շատ առումներով կանխորոշում են ավելի քննադատական վերաբերմունքը հանրային կառույցների նկատմամբ՝ դրանք ընկալվում են որպես բնակիչներից օտարված, անարդյունավետ և միայն իրենց անձնական շահերը հոգացող էլիտայի վայր:

Աղյուսակ 41՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի չափորոշիչների ANOVA վերլուծությունն ըստ եկամտի

Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:		Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:	«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածու-թյունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:	Տեղական քաղաքակա-նության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար:	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը:
Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար	Միջին	2.67	2.4737	2.00	3.34	1.61	4.03	3.31
	Քանակ	36	38	37	38	38	37	35
Բավարար գումար ունենք սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է	Միջին	2.58	2.2045	2.20	2.67	1.72	3.30	3.17
	Քանակ	113	110	108	110	116	105	105
Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել	Միջին	2.80	2.3652	2.48	2.92	1.79	3.33	3.16
	Քանակ	326	319	320	319	329	316	294
Կարող ենք գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ՝ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց	Միջին	2.72	2.5217	2.60	3.03	2.02	3.20	3.04
	Քանակ	94	92	93	92	96	94	84
Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց	Միջին	3.07	2.6786	2.57	3.71	1.64	3.00	2.36
	Քանակ	14	14	14	14	14	14	11
Ընդամենը	Միջին	2.74	2.3743	2.42	2.94	1.80	3.34	3.14
	Քանակ	583	573	572	573	593	566	529

ANOVA աղյուսակ

			Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառա-կուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	5.904	4	1.476	1.175	.321
	Խմբերի ներսում		725.986	578	1.256		
	Ընդամենը		731.890	582			
«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	6.868	4	1.717	2.462	.044
	Խմբերի ներսում		396.085	568	.697		
	Ընդամենը		402.953	572			
«Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	16.065	4	4.016	3.073	.016
	Խմբերի ներսում		741.074	567	1.307		
	Ընդամենը		757.138	571			
«Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	23.258	4	5.815	4.700	<.001
	Խմբերի ներսում		702.724	568	1.237		
	Ընդամենը		725.983	572			
«Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունը առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	7.311	4	1.828	1.920	.106
	Խմբերի ներսում		559.809	588	.952		
	Ընդամենը		567.120	592			
«Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	21.037	4	5.259	5.462	<.001
	Խմբերի ներսում		540.152	561	.963		
	Ընդամենը		561.189	565			
«Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը» * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը»	Խմբերի միջև	(համակցված)	8.868	4	2.217	2.277	.060
	Խմբերի ներսում		510.059	524	.973		
	Ընդամենը		518.926	528			

Բնակության վայրը կարևոր դեր է խաղում «հանրային կառույցների հետ հարաբերությունների» որոշ ենթաոլորտներում: Արդեն նշվել է, որ փոքր ու ծայրամասային բնակավայրերի բնակիչները (Ստրատա 3) զգալիորեն ավելի շատ են հետաքրքրված Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով: Ընդ որում, նրանք նաև ավելի լայն հնարավորություններ են տեսնում որոշումների կայացման գործընթացում «կարծիք ունենալու» հարցում և կարծես թե ավելի հավանական են դիտարկում տեղական ընտրություններին առաջադրվելու հնարավորությունը: Այս ակտիվությունը զուգորդվում է հարկերի և տուրքերի վճարման անարդարացիության վերաբերյալ համոզմունքով՝ նրանք գտնում են, որ բնակիչների զգալի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերը:

Ստրատա		Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:	«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունը առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություն ներին:	Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար:	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը:
Ստրատա 1	Միջին	2.64	2.4253	2.47	2.95	1.91	3.44	2.99
	Քանակ	195	194	196	194	200	193	175
Ստրատա 2	Միջին	2.67	2.3298	2.28	2.87	1.77	3.27	3.19
	Քանակ	288	285	274	285	293	277	267
Ստրատա 3	Միջին	3.16	2.3136	2.66	3.03	1.59	3.32	3.30
	Քանակ	115	110	116	110	116	110	102
Ընդամենը	Միջին	2.75	2.3582	2.42	2.93	1.78	3.33	3.15
	Քանակ	598	589	586	589	609	580	544

Աղյուսակ 42՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի չափորոշիչների ANOVA վերլուծությունն ըստ բնակավայրերի

ANOVA աղյուսակ

			Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	23.377	2	11.688	9.398	<.001
	Խմբերի ներսում		739.995	595	1.244		
	Ընդամենը		763.371	597			
«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	1.320	2	.660	.934	.393
	Խմբերի ներսում		414.092	586	.707		
	Ընդամենը		415.413	588			
Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում: * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	13.050	2	6.525	4.994	.007
	Խմբերի ներսում		761.680	583	1.306		
	Ընդամենը		774.730	585			
Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է: * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	2.164	2	1.082	.841	.432
	Խմբերի ներսում		753.697	586	1.286		
	Ընդամենը		755.861	588			
Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունը առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	7.488	2	3.744	3.991	.019
	Խմբերի ներսում		568.466	606	.938		
	Ընդամենը		575.954	608			
Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, այլ ոչ թե հանրային բարօրության համար: * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	3.242	2	1.621	1.614	.200
	Խմբերի ներսում		579.535	577	1.004		
	Ընդամենը		582.778	579			
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը * ստրատա	Խմբերի միջև	(համակցված)	7.108	2	3.554	3.643	.027
	Խմբերի ներսում		527.831	541	.976		
	Ընդամենը		534.939	543			

Սեռը մեծ դեր չի խաղում «հանրային կառույցների հետ հարաբերությունների» գնահատման հարցում: Տղամարդկանց և կանանց միջև նշանակալի տարբերությունները վերաբերում են համայնքում քաղաքական պաշտոնի գրավչության ընկալմանը (տեղական քաղաքական գործիչ լինելը կանանց

կողմից ավելի հաճախ է հետաքրքիր փորձ է համարվում, քան տղամարդկանց), ինչպես նաև քաղաքացիների կողմից տեղական հարկերը վճարելու հարցում արդարացիության ընկալմանը (կանայք ավելի վատատես են քաղաքացիների արդարացիության հարցում):

Աղյուսակ 43՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի ANOVA վերլուծությունն ըստ սեռի

Սեռ		Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:	«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:	Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար:	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը:
Իգական	Միջին	2.75	2.3886	2.45	2.99	1.78	3.31	3.20
	N	424	422	415	422	432	410	383
Արական	Միջին	2.76	2.2814	2.35	2.78	1.79	3.38	3.03
	N	174	167	171	167	177	170	161
Ընդամենը	Միջին	2.75	2.3582	2.42	2.93	1.78	3.33	3.15
	N	598	589	586	589	609	580	544

ANOVA աղյուսակ

			Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	.009	1	.009	.007	.933
	Խմբերի ներսում		763.362	596	1.281		
	Ընդամենը		763.371	597			
«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	1.375	1	1.375	1.949	.163
	Խմբերի ներսում		414.038	587	.705		
	Ընդամենը		415.413	588			
«Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում» * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	1.147	1	1.147	.866	.353
	Խմբերի ներսում		773.584	584	1.325		
	Ընդամենը		774.730	585			
«Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է» * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	5.144	1	5.144	4.022	.045
	Խմբերի ներսում		750.717	587	1.279		
	Ընդամենը		755.861	588			
«Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին»* Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	.003	1	.003	.004	.952
	Խմբերի ներսում		575.951	607	.949		
	Ընդամենը		575.954	608			
«Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	.460	1	.460	.456	.500
	Խմբերի ներսում		582.318	578	1.007		
	Ընդամենը		582.778	579			
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը * Սեռ	Խմբերի միջև	(համակցված)	3.176	1	3.176	3.237	.073
	Խմբերի ներսում		531.764	542	.981		
	Ընդամենը		534.939	543			

«Հանրային կառույցների հետ հարաբերությունների» գնահատականի վրա տարիքի միակ (գրեթե) էական ազդեցությունը վերաբերում է պետական պաշտոնյաների արդարացիության ընկալմանը՝ երիտասարդները հակված են ավելի լավատես լինել, քան տարեցները:

Աղյուսակ 44՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի ANOVA վերլուծությունն ըստ տարիքի

Տարիքային խումբ		Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:	«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:	Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար:	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը:
<20	Միջին	2.95	2.2500	2.45	2.73	1.77	3.00	3.10
	Քանակ	22	22	22	22	22	21	21
20-29	Միջին	2.68	2.3125	2.48	2.68	1.95	3.03	3.27
	Քանակ	40	40	40	40	40	39	30
30-39	Միջին	3.02	2.4323	2.30	3.00	1.89	3.26	3.18
	Քանակ	100	96	98	96	99	96	85
40-49	Միջին	2.80	2.3253	2.52	2.93	1.70	3.49	3.05
	Քանակ	86	83	86	83	87	83	82
50-59	Միջին	2.68	2.3824	2.50	2.97	1.78	3.24	3.12
	Քանակ	118	119	113	119	122	114	112
60-69	Միջին	2.70	2.3494	2.39	2.89	1.79	3.44	3.24
	Քանակ	158	156	155	156	163	155	153
70+	Միջին	2.54	2.3356	2.36	3.03	1.64	3.43	3.05
	Քանակ	74	73	72	73	76	72	61
Ընդամենը	Միջին	2.75	2.3582	2.42	2.93	1.78	3.33	3.15
	Քանակ	598	589	586	589	609	580	544

ANOVA աղյուսակ

			Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	12.882	6	2.147	1.691	.121
	Խմբերի ներսում		750.489	591	1.270		
	Ընդամենը		763.371	597			
«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	1.077	6	.179	.252	.958
	Խմբերի ներսում		414.336	582	.712		
	Ընդամենը		415.413	588			
«Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում» * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	3.577	6	.596	.448	.847
	Խմբերի ներսում		771.154	579	1.332		
	Ընդամենը		774.730	585			
«Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է» * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	5.139	6	.856	.664	.679
	Խմբերի ներսում		750.722	582	1.290		
	Ընդամենը		755.861	588			
«Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին»* Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	4.266	6	.711	.749	.611
	Խմբերի ներսում		571.688	602	.950		
	Ընդամենը		575.954	608			
«Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	12.141	6	2.023	2.032	.060
	Խմբերի ներսում		570.637	573	.996		
	Ընդամենը		582.778	579			
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը * Տարիքային խումբ	Խմբերի միջև	(համակցված)	3.232	6	.539	.544	.775
	Խմբերի ներսում		531.707	537	.990		
	Ընդամենը		534.939	543			

Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ

Համայնքի ընդհանուր խնդիրները (ավելի լայն իմաստով՝ «համակեցության և գերծանրաբեռնվածության խնդիրները», որոնք բխում են այն փաստից, որ բազմաթիվ մարդիկ ապրում են միասին նույն համայնքում) լուծելու համայնքի կարողությունը կախված է ինչպես քաղաքացիների պատասխանատու վարքագծից, այնպես էլ հանրային ծառայությունների արդյունավետությունից: Հարցման ընթացքում ուսումնասիրվել են թե՛ պատասխանատու վարքագիծը, և թե՛ ծառայությունների արդյունավետությունը:

Ինչպես նշվեց, համայնքի մաքրությունը համարվում է «գերծանրաբեռնվածության խնդրի» հաջող օրինակ, որն ավելի մոտ է հարցվողների առօրյա փորձին:

Քաղաքացիական վարքագծի առումով քաղաքացիների վերաբերյալ ընդհանուր առմամբ դրական գնահատական է տրվել. նրանք հարգում են հանրային տարածքները և հոգ են տանում դրանց մասին (Հ6_1), շատ հարգալից վերաբերմունք ունեն շրջակա միջավայրի նկատմամբ (Հ12_2) և ընդհանուր առմամբ հարգում են կանոնները (Հ10_2):

Պատասխանները տատանվում են 1-ից («*Ընդհանրապես համաձայն չեմ*») մինչև 5 միավոր («*Լիովին համաձայն եմ*»), և ստորև աղյուսակում այդ փոփոխականները ներկայացված են որպես միջակայքային, ուստի հաշվարկվել են դրանց միջին արժեքները և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 45՝ Հ6_1, Հ12_2 և Հ10_2 հարցերի նկարագրական վերլուծություն

	N	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Ստանդարտ շեղում
Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով վերաբերվում է հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին	592	1	5	3.66	.764
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները	577	1	5	3.55	.789
Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):	592	1	5	3.57	.858
Վավեր քանակ (listwise)	551				

Հանրային ծառայությունների արդյունավետության հետ կապված կոնկրետ հարցը վերաբերում էր մաքրությանը: Այն ձևակերպվել է այսպես՝ արդյոք «*Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար*»:

Նույնիսկ այս դեպքում ընդհանուր գնահատականը դրական է՝ 3,56 միջին արժեքով:

Աղյուսակ 46՝ Հ6_2 հարցի նկարագրական վերլուծություն

	Քանակ	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Ստանդարտ շեղում
Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար	596	1	5	3.56	.888
Վավեր քանակ (listwise)	596				

Հարց 11-ի միջոցով գնահատվել է բավարարվածությունը տարբեր ծառայությունների և շրջակա միջավայրի հիմնական տարրերի վերաբերյալ, ինչպիսիք են ջուրը և օդը:

Աղյուսակ 47՝ Հ11 հարցի նկարագրական վերլուծություն

Ձեր բնակության վայրի համար խնդրում ենք գնահատել, թե որքանով եք բավարարված ստորև թվարկածով:

		Հանրային տրանսպորտի որակով	Ճանապարհների և մայրուղիների որակով	Կրթությունի որակով	Օդի որակով	Ջրի որակով	Առողջապահության որակով	Բնակարանային պայմանների որակով
N	Վավեր	524	607	557	606	606	590	607
	Բաց թողնված	86	3	53	4	4	20	3
Միջին		2.64	2.95	3.79	4.01	4.13	3.79	3.77
Մեդիանա		2.00	3.00	4.00	4.00	4.00	4.00	4.00
Մոդա		1	4	4	4	4	4	4
Ստանդարտ շեղում		1.478	1.292	.877	.790	.865	.885	.884
Անհամաչափ բաշխման գործակից (skewness)		.124	-.298	-1.226	-1.281	-1.352	-1.172	-1.300
Անհամաչափ բաշխման գործակցի ստանդարտ սխալ		.107	.099	.104	.099	.099	.101	.099

Հարցման արդյունքները ցույց են տալիս օդի և ջրի որակով լիարժեք բավարարվածությունը, այսինքն՝ հարցվողների ընկալմամբ, տեղի շրջակա միջավայրում մարդու գործունեության հետևանքով առաջացող աղտոտվածության վտանգ չկա: Հանրային ծառայությունների շարքում մարդկանց կողմից ակնհայտորեն բարձր են գնահատվում կրթությունն ու առողջապահությունը: Դրական է գնահատվում նաև բնակարանային պայմանների որակը: Մյուս կողմից, հանրային տրանսպորտը և շարժունակության ենթակառուցվածքները, ինչպիսիք են ճանապարհները և մայրուղիները, հարցվածների բավականին մեծ խմբի կողմից քննադատաբար են գնահատվել: Ավելին, բաց թողնված (*«Կիրառելի չէ»*) պատասխանների մեծ քանակը հուշում է, որ որոշ բնակավայրերում հանրային տրանսպորտ ընդհանրապես չկա:

Ակնկալվում է, որ հանրային իշխանությունները ավելին պետք է անեն ենթակառուցվածքների ընդունելի մակարդակ ապահովելու համար: Իհարկե, դա կապված է ռեսուրսների սահմանափակ լինելու հետ, և հեշտ չէ ակնկալիքները հավասարակշռել իրագործման իրական պայմանների հետ:

Համայնքի հանդեպ հոգածություն

Ինչպես նշվել է տվյալների կրճատման վերաբերյալ գլխում, հատուկ սանդղակ է մշակվել «*Համայնքի հանդեպ հոգածություն*» ընդհանուր չափանիշի համար: Այն խմբավորում է հետևյալ հարցերը.

	«Համայնքի հանդեպ հոգածություն» ենթասանդղակ
Հ6_1	Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:
Հ6_2	Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:

Հ10_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:
Հ12_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):

Ինչպես մյուս դեպքերում, սանդղակն օգտագործել ենք տարբեր կատեգորիաների հարցվողների միջև համեմատություններ կատարելու համար:

Նախ և առաջ պետք է նշել տարբերությունների նշանակալիությունը ըստ տարիքային խմբի: Երիտասարդները ավելի ցածր գնահատական են տալիս «համայնքի հանդեպ հոգածության» մասով, ուստի ավելի քիչ են բավարարված համայնքում գերծանրաբեռնվածության խնդիրների լուծմամբ:

Աղյուսակ 48՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ տարիքի

«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ

Տարիքային խումբ	Միջին	N	Ստանդարտ շեղում
<20	3.3523	22	.62516
20-29	3.5724	38	.58676
30-39	3.4894	94	.66084
40-49	3.5120	83	.63427
50-59	3.5991	106	.54846
60-69	3.7000	135	.54619
70+	3.6615	65	.56498
Ընդամենը	3.5875	543	.59397

ANOVA աղյուսակ

		Քառակուսիների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառակուսի (Mean Square)	F	Նշանակալիություն (Sig.)
«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ * Տարիքային խումբ	Խմբերի միջև (համակցված)	4.683	6	.780	2.243	.038
	Խմբերի ներսում	186.537	536	.348		
	Ընդամենը	191.220	542			

Այն հարցվողները, որոնք վճարովի հիմունքներով աշխատում են հանրային հատվածում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան և այլն), կարծես թե ավելի քննադատաբար են վերաբերվում «*Համայնքի հանդեպ հոգածությանը*»: Դա կարող է կապված լինել նրանց աշխատանքի բնույթի հետ, որը ստիպում է նրանց ավելի շատ ակնկալիքներ ունենալ ինչպես հանրային ծառայության արդյունավետության, այնպես էլ քաղաքացիների պատասխանատու վարքագծի նկատմամբ: Սա կարող է վկայել աշխատանքի հանդեպ նրանց նվիրվածության մասին:

Աղյուսակ 49՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ զբաղմունքի

«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ

Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր հիմնական զբաղմունքը:	Միջին	N	Ստանդարտ շեղում
Այլ	3.0833	3	.87797
Աշխատում եմ մասնավոր ընկերությունում	3.7054	28	.48138
Վճարովի հիմունքներով աշխատում եմ հասարակական կազմակերպությունում	3.8333	3	.14434
Վճարովի հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան եւ այլն)	3.3587	69	.65932
Կամավոր հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան եւ այլն)	3.6250	2	.53033
Ուսանող/աշակերտ եմ	3.3875	20	.66627
Թոշակառու եմ	3.6815	124	.55705
Գործազուրկ եմ	3.5569	211	.60874
Զվաղվում եմ գյուղատնտեսությամբ	3.7442	43	.50441
Տնային տնտես(ուհի) եմ	3.7188	40	.49739
Ընդամենը	3.5875	543	.59397

ANOVA աղյոուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառա-կուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ * «Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր հիմնական զբաղմունքը»	Խմբերի միջև (համակցված)	8.785	9	.976	2.852	.003
	Խմբերի ներսում	182.435	533	.342		
	Ընդամենը	191.220	542			

«Համայնքի հանդեպ հոգածության» ընկալման վերաբերյալ հետաքրքիր տարբերություններ են նկատվել ըստ բնակավայրի: Փոքր և ծայրամասային բնակավայրերի բնակիչները ավելի գոհ են համայնքի խնամքից, քան ավելի մեծ բնակավայրերի բնակիչները: Նրանք, անշուշտ, ավելի անմիջական հարաբերություններ ունեն շրջակա միջավայրի հետ և ավելի ներգրավված են զգում համայնքի խնամքի գործում: Հասկանալի է, որ նրանք ավելի գոհ են այն նպատակից, որի իրագործման մեջ անմիջական ներդրում ունեն:

Աղյուսակ 50՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատայի

«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ

Ստրատա	Միջին	N	Ստանդարտ շեղում
Ստրատա 1	3.4861	180	.67720
Ստրատա 2	3.5941	263	.55252
Ստրատա 3	3.7525	100	.49810
Ընդամենը	3.5875	543	.59397

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառա-կուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ * ստրատա	Խմբերի միջև (համակցված)	4.584	2	2.292	6.632	.001
	Խմբերի ներսում	186.636	540	.346		
	Ընդամենը	191.220	542			

Նույնիսկ կրթությունն է որոշիչ «*համայնքի հանդեպ հոգածության*» իրավիճակի վերաբերյալ միանգամայն տարբեր տեսակետներ ունենալու հարցում: Որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան քիչ է բավարարվածությունը: Հավանաբար ակնկալիքներն աճում են կրթական մակարդակի հետ միասին: Ակնհայտ է, որ բարձրագույն կրթություն ունեցողների դեպքում համայնքից օտարվելու վտանգ կա, բայց նրանք նաև

հետագա զարգացման շատ լավ ռեսուրս են, ուստի նրանց կարիքներն ու դժգոհությունը պետք է պատշաճ կերպով հաշվի առնել:

Աղյուսակ 51՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ կրթության

«Համայնքի մասին հոգածություն» ենթասանդղակ

Կրթական 3 մակարդակ	Միջին	Քանակ	Ստանդարտ շեղում
Տարրական կամ ավելի ցածր	3.7500	11	.62249
Միջնակարգ կամ մասնագիտական	3.6418	409	.54436
Բարձրագույն (նաև դեռ ընթացքի մեջ գտնվող)	3.3923	123	.70281
Ընդամենը	3.5875	543	.59397

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառա-կուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Համայնքի մասին հոգածություն» ենթաբաժին * կրթական 3 մակարդակ	Խմբերի միջև (համակցված)	6.185	2	3.092	9.024	<.001
	Խմբերի ներսում	185.035	540	.343		
	Ընդամենը	191.220	542			

Վերջապես, հարկ է նշել, որ սեռի կամ եկամտի գործոնները այս մասով էական տարբերություն ցույց չեն տվել: Այս փոփոխականները կարծես թե մեծ դեր չեն խաղում «գերծանրաբեռնվածության խնդիրների հետ հարաբերությունների» գնահատման մեջ:

«Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտի երկրորդ հարթությունը վերաբերում է տեղական հանրային ծառայություններով բավարարված լինելուն:

Այս հարթությանն է վերաբերում Հ5_4 հարցը՝ *«Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով»*: Ընդհանուր առմամբ բավարարվածության մակարդակը բավականին բարձր է: Որոշ նշանակալի տարբերություններ են դիտարկվում ըստ ընտրանքի ստրատաների: Ըստ երևույթին, Ստրատա 2-ի բնակիչներն շատ ավելի քիչ են բավարարված, քան Ստրատա 1-ի և որքան էլ դա տարօրինակ թվա՝ քան Ստրատա 3-ի բնակիչները:

Աղյուսակ 52՝ Հ5_4 հարցի ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատաների

Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով:

Ստրատա	Միջին	N
Ստրատա 1	3.44	195
Ստրատա 2	3.17	286
Ստրատա 3	3.41	114
Ընդամենը	3.30	595

ANOVA աղյուսակ

		Քառակուսի-ների գումար (Sum of Squares)	df	Միջինի քառա-կուսի (Mean Square)	F	Նշանակա-լիություն (Sig.)
«Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով» * ստրատա	Խմբերի միջև (համակցված)	10.031	2	5.015	4.643	.010
	Խմբերի ներսում	639.516	592	1.080		
	Ընդամենը	649.546	594			

5.3. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Ո՞Ր ՈԼՈՐՏՆԵՐՆ ԵՆ ԱՌԱՎԵԼ ՈՐՈՇԻՉ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՊՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Համայնքում ապրելու հետ կապված գոհունակություն

Քաղաքացիության զգացողությունը սերտորեն կապված է տվյալ համայնքում ապրելու և դրա մաս լինելու վերաբերյալ գոհունակության հետ: Համայնքը բնակվում է որոշակի տարածքում, որը հագեցած է շենքերով, գյուղատնտեսական հողերով, ենթակառուցվածքներով և այլն: Մարդիկ փորձում են գեղեցկացնել լանդշաֆտը և ֆիզիկական տարածքը, որոնք դառնում են համայնքային ոգու ամենատեսանելի դրսևորումները:

Համայնքը մարդկանց խումբ է, ուստի մյուս անդամների հետ հարաբերությունները կենսական դեր ունեն:

Համայնքն ապրում է նաև իր հաստատությունների, մասնավորապես՝ հանրային կառույցների շնորհիվ. նրանց աշխատանքը և քաղաքացիներից ստացած (դրական կամ բացասական) արձագանքը արտացոլում է համայնքի կարողությունը լավ գործելու, օրինակ՝ կարգուկանոն ապահովելու և գերծանրաբեռնվածության խնդիրները կանխելու առումով: Դա մեծ դեր է խաղում այն հարցում, թե համայնքի անդամ լինելը հպարտության ինչպիսի զգացում է առաջացնում մարդկանց մոտ:

Ի՞նչն է առավել կարևոր համայնքում ապրելու վերաբերյալ գոհունակությունը որոշելու համար: Արդյո՞ք դա տեղանքի գեղեցկությունն է, մյուսների հետ հարաբերությունների որակը, հանրային կառույցների հետ առնչությունը, թե՞ գերծանրաբեռնվածության խնդիրները միասին լուծելու կարողությունը: Այլ կերպ ասած, վերը նշված հարաբերությունների չորս ոլորտներից ո՞րն է ընկալվում որպես առավել կարևոր՝ համայնքում ապրելու հետ կապված գոհունակությունը որոշելու համար:

Այս հարցերի պատասխանը ստանալու համար դիտարկենք ինչպես առանձին կարևոր հարցերը, այնպես էլ այն գործոնները (թաքնված փոփոխականները), որոնք սահմանվել են տվյալների կրճատման վերաբերյալ գլխում և դիտարկվել որպես մոտարկված չափորոշիչներ:

Ուրախ է ապրել այստեղ

Հ5_1 հարցը շատ լավ մեկնարկային կետ կարող է լինել: Այս հարցի միջոցով փորձ է արվում հասկանալ, թե արդյոք մարդն ուրախ է Ախուրյան խոշորացված համայնքում ապրել: Այսպիսով, այն կարելի է համարել համայնքի մաս լինելու ընդհանուր գոհունակության և հպարտության զգացումի մոտարկված չափորոշիչ:

Տվյալները գոհունակության ընդհանուր առմամբ բարձր մակարդակ են արձանագրում՝ հարցվածների 62%-ը համաձայն է և գրեթե 19%-ը լիովին համաձայն է այն դատողության հետ, որ ուրախ է ապրել Ախուրյան համայնքում: Եթե փոփոխականը դիտարկենք որպես միջակայքային, ապա կստանանք 3.88 միջին արժեքը, իսկ ստանդարտ շեղումը կազմում է 0.865:

Աղյուսակ 53՝ Հ5_1 հարցի հաճախականություն-ների բաշխում

Ուրախ եմ, որ ապրում եմ Ախուրյան խոշորացված համայնքում:

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ընդհանրապես համաձայն չեմ	15	2.5	2.5	2.5
	Համաձայն չեմ	38	6.2	6.3	8.7
	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	62	10.2	10.2	18.9
	Համաձայն եմ	379	62.1	62.4	81.4
	Լիովին համաձայն եմ	113	18.5	18.6	100.0
	Ընդամենը	607	99.5	100.0	
Բաց թողնված	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել	3	.5		
Ընդամենը			100.0		

Գոհունակությունը ըստ հարցվածների կատեգորիաների

Հ5_1 և Հ5_2 («*Կցանկանայի Ախուրյանի խոշորացված համայնքից տեղափոխվել այլ համայնք, եթե հնարավորություն ունենայի*») հարցերի ANOVA վերլուծությունը ըստ տարբեր որոշիչ փոփոխականների (տարիք, կրթություն, սեռ և այլն) ցույց է տալիս, որ.

- տվյալ բնակավայրում ծնվածներն ավելի ուրախ են այնտեղ ապրել (միջին=4) և ավելի քիչ են ձգտում հնարավորության դեպքում տեղափոխվել այլ համայնք (միջին=1.9)՝ ի համեմատ այնտեղ չծնվածների (համապատասխանաբար 3.7 և 2.2) (նշանակալիությունը՝ <0.001):
- կանայք համեմատաբար ավելի պատրաստակամ են այլ համայնք տեղափոխվել (2.1), քան տղամարդիկ (1.82) (նշանակալիությունը՝ <0.001): Հարկ է ընդգծել, որ բնակավայրում չծնվածների 93%-ը կանայք են, ուստի առկա է «սեռի» և «ծննդավայրի» փոփոխականների վերածածկ:
- որքան հարուստ է ընտանիքը, այնքան ավելի ուրախ է ապրել Ախուրյան խոշորացված համայնքում (նշանակալիությունը <0,01):

Գոհունակությունը և համայնքի բնութագիրը

Ախուրյան համայնքում ապրելու վերաբերյալ գոհունակության մակարդակը որոշելու նպատակով վերլուծության շրջանակներում նախ դիտարկենք հետևյալ հարցերը՝

Հ5_3 «Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում»,

Հ5_5 «Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով»,

Հ5_4 «Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով»:

Այս դատողությունները խոսում են նաև «մյուսների հետ հարաբերությունների», «տեղական հանրային կառույցների հետ հարաբերությունների» և «գերծանրաբեռնվածության խնդիրների հետ հարաբերությունների» մասին: Հետաքրքիր կլինի հասկանալ, թե որքան կարևոր են դրանք համայնքում երջանիկ լինելու համար: Եթե դրանք նշանակություն չունեն, ապա փոփոխականները պետք է անկախ լինեն, այլ կերպ ասած՝ գոհունակության (Հ5_1 «*Ուրախ եմ, որ ապրում եմ Ախուրյանի խոշորացված համայնքում*») և մյուս փոփոխականների միջև որևէ կորելյացիա չպետք է լինի:

Կորելյացիայի չափման համար սովորաբար օգտագործվում է Փիրսոնի r գործակիցը, և ստորև աղյուսակում հաշվարկվել են երկփոփոխական կորելյացիաները: Փիրսոնի r գործակիցը տատանվում է -1-ից մինչև +1: Եթե r=0, ապա փոփոխականների միջև փոխկապակցվածություն չի հայտնաբերվել: Մինուս «–» և պլյուս «+» նշանները խոսում են հարաբերակցության ուղղության մասին: Մինուսը ցույց է տալիս, որ եթե մի փոփոխականի արժեքը մեծանում է, մյուսի արժեքը նվազում է, այսինքն՝ կա հակադարձ հարաբերակցություն:

Աղյուսակ 54՝ Երկփոփոխական կորելյացիաները Հ5_1 հարցի և Հ5_3, Հ5_4, Հ5_5 հարցերի միջև

Փոփոխական	Փոփոխական2	Կորելյացիա	Վիճակագրություն Քանակ	Ստորին C.I.	Վերին C.I.	r2
Հ5_1	Հ5_3	.333	603	.260	.402	11%
	Հ5_4	.299	593	.224	.371	9%
	Հ5_5	.222	596	.144	.297	5%

Բաց թողնված արժեքների դիտարկում՝ PAIRWISE, EXCLUDE. C.I. Վստահության միջակայք՝ 95.0

Տվյալները կորելյացիայի նշանակալի գործակիցներ են ցույց տալիս: Ակնհայտ է, որ Հ5_1 հարցի հետ առավել փոխկապակցված է Հ5_3 «*Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում*» հարցը: Համայնքում ապրելու հարցում գոհունակության մակարդակը սերտ կապված է այնտեղ ապրող մարդկանց գնահատանքի հետ, նույնիսկ ավելի շատ, քան հանրային ծառայությունների որակի հետ (Հ5_4 *«Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով»*): Անգամ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերի նկատմամբ հետաքրքրությունը որոշակի կապ ունի գոհունակության հետ (r=0.222):

Եթե դիտարկենք r քառակուսի գործակիցը, այստեղ ևս կարող ենք օգտակար տեղեկատվություն ստանալ: Փիրսոնի r^2 գործակիցը չափում է, թե երկու փոփոխականների տատանումները որքանով են համընկնում: Այլ կերպ ասած, այն ցույց է տալիս, թե կարելի է արդյոք մի փոփոխականի արժեքի հիման վրա կանխատեսել մյուսի արժեքը: Այս առումով, այն կարող է արձանագրել, թե տվյալ փոփոխականը որքանով է կարևոր մյուսը սահմանելու համար (և հակառակը):

Այսպիսով, Հ5_3 հարցը 11 տոկոսով է որոշում Ախուրյան համայնքում ապրելու գոհունակությունը, Հ5_4 հարցը՝ 9 տոկոսով, իսկ Հ5_5 հարցը՝ 5 տոկոսով:

Նույն մոտեցումը որդեգրելով՝ կարելի է հաշվարկել, թե գոհունակության տեսանկյունից որքանով են կարևոր հարաբերությունների չորս տիրույթների՝ վերը նկարագրված մյուս մոտարկված չափորոշիչները: Հարկ է նշել, որ r^2-ն հաշվարկվում է ախուրյանցիների իրական պատասխանների հիման վրա, ուստի այն շատ բան կարող է պատմել այն մասին, թե ինչպես են նրանք տեսնում իրենց համայնքը, համայնքի որ հատկանիշներն առավել մեծ կշիռ ունեն գոհունակության գնահատման համար: Այդ առումով r^2-ն Ախուրյանի քաղաքացիների կողմից «նշանակալիության ընկալման» չափանիշ է:

Այսպիսով, փորձենք հասկանալ, թե ախուրյանցիների կարծիքով որքանո՞վ են կարևոր հարաբերությունների չորս տիրույթները՝ համայնքում ապրելու վերաբերյալ իրենց գոհունակությունը որոշելու համար:

Ուսումնասիրվել են հետևյալ չափորոշիչները.

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՈՐՏ	ՄՈՏԱՐԿՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԵՏ	*Գեղեցկություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_գեղեցկություն
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՀԵՏ	*Մարդկանց ընդհանուր գնահատանք* • Հ5_3 «Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում» *Մյուսների վստահելիություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Մյուսների վստահելիություն
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ	*Հետաքրքրվածություն տեղական քաղաքականությամբ* • Հ5_5 «Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» *Քաղաքական մասնակցություն* • ՍԱՆԴՂԱԿ «Քաղաքական մասնակցություն» *Պաշտոնյաների արդարացիության ընկալում* • Հ10_7 «Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» *Հարկերի վճարում* • Հ10_3 «Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը»
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ	*Բավարարվածություն տեղական ծառայություններով* • Հ5_4 «Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով» *Համայնքի հանդեպ հոգածություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Համայնքի հանդեպ հոգածություն

Հաշվարկվել են նաև Հ5_1 հարցի («*Ուրախ եմ, որ ապրում եմ Ախուրյան խոշորացված համայնքում*») և տարբեր սանդղակների, ենթասանդղակների ու հարցերի միջև կորելյացիաներն ու երկփոփոխական ռեգրեսիաները:

Աղյուսակ 55՝ Հ5_1 հարցի և մի շարք ենթասանդղակների ու հարցերի միջև երկփոփոխական կորելյացիաները

Փոփոխական	Փոփոխական2	Կորելյացիա	Վիճակագրություն Քանակ	Ստորին C.I.	Վերին C.I.	r2
Հ5_1	«Գեղեցկություն» ենթասանդղակ	.290	575	.213	.363	8%
	Հ5_3	.333	603	.260	.402	11%
	«Մյուսների հուսալիությունը» ենթասանդղակ	.313	548	.235	.387	10%
	Հ5_5	.222	596	.144	.297	5%
	«Քաղաքական մասնակցություն» ենթասանդղակ	.011	586	-.070	.092	0%
	Հ10_7	-.133	577	-.212	-.052	2%
	Հ10_3	.057	543	-.027	.140	0%
	Հ5_4	.299	593	.224	.371	5%
	«Համայնքի հանդեպ հոգածություն» ենթասանդղակ	.205	542	.123	.284	4%

Բաց թողնված արժեքների դիտարկում՝ PAIRWISE, EXCLUDE. C.I. Վստահության միջակայք՝ 95.0

Գեղեցկություն

«*Գեղեցկություն*» ենթասանդղակը, որն այստեղ դիտարկվում է որպես «Հարաբերություններ հանրային տարածքի հետ» ոլորտի մոտարկված չափորոշիչ, որոշակի կորելյացիա ունի գոհունակության փոփոխականի հետ՝ Փիրսոնի r^2 գործակիցը 8% է: Այսինքն, համայնքի ֆիզիկական տեսքը՝ տեղանքի, ձեռակերտ և բնական միջավայրի առումով, բավականին կարևոր դեր է խաղում այն հարցում, թե արդյոք մարդիկ ուրախ են ապրել տվյալ համայնքում:

Մյուսների վստահելիությունը

«*Մյուսների վստահելիություն*» ենթասանդղակը նշանակալի կորելյացիա ունի գոհունակության փոփոխականի հետ և, դիտարկելով r^2 գործակիցը, կարող ենք տեսնել, որ Ախուրյանի քաղաքացիների՝ համայնքում ապրելու վերաբերյալ գոհունակության կանխորոշման հարցում դրա արժեքը հասնում է 10%-ի: Այսպիսով հաստատվում է, որ մյուսների գնահատանքը (որն արտահայտված է Հ5_3 հարցում) մյուս գործոնների համեմատ ամենակարևորն է՝ համայնքում ապրելու հետ կապված գոհունակության կանխորոշման հարցում: Դա նշանակում է, որ այսօրվա ախուրյանցիների գոհունակության համար ամենակարևորը «մյուսների հետ հարաբերություններն» են:

Պաշտոնյաների արդարացիությունը

Ավելի փոքր, բայց դեռևս ոչ աննշան դեր են խաղում «հարաբերությունները հանրային կառույցների հետ»: Թեև «*Քաղաքական մասնակցությունը*» ընդհանրապես չի ընկալվում որպես համայնքում ապրելու հետ կապված գոհունակության գործոն, սակայն այս առումով ազդեցիկ են Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերի հանդեպ հետաքրքրությունը (Հ5_5)՝ r^2 գործակցի 5% արժեքով և Հ10_7 հարցը՝ «*Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար*», որտեղ r^2 գործակիցը 2% է: Բնականաբար, Հ10_7 հարցը գոհունակության հետ հակադարձ հարաբերակցության մեջ է՝ պաշտոնյաների արդարացիության պակասի ընկալումը նվազեցնում է գոհունակության մակարդակը:

Ի տարբերություն դրա՝ քաղաքացիների արդարացիությունը տեղական հարկերի և տուրքերի վճարման առումով այնքան էլ չի կարևորվում համայնքում ապրելու հետ կապված գոհունակության տեսանկյունից:

Համայնքի հանդեպ հոգածություն

Վերջապես, համակեցության խնդիրների հետ հարաբերությունը, որը չափվում է «*Համայնքի հանդեպ հոգածություն*» ենթասանդղակով, գոհունակության համար կարևորության տեսանկյունից 4% կշիռ ունի:

Հիշեցնենք, որ «*Համայնքի հանդեպ հոգածությունը*» դիտարկվել է որպես համայնքային որակյալ ծառայությունների և քաղաքացիների կողմից որդեգրված քաղաքացիական վարքագծի համատեղ արդյունք: Ինչպես նշվեց վերևում, «*Բավարարվածություն տեղական ծառայություններով*» մյուս ենթաոլորտը, որը չափվում է Հ5_4 հարցով, գոհունակությունը որոշելու հարցում 5% կշիռ ունի:

Քաղաքացիության զգացողություն և քաղաքական մասնակցություն

Որպես եզրափակում՝ համայնքում ապրելու հետ կապված գոհունակությունը համեմատենք նաև «*Քաղաքացիության զգացողություն՝ առանց քաղաքական ակտիվության*» սանդղակի հետ:

Աղյուսակ 56՝ Հ5_1-ի և սանդղակների միջև երկփոփոխական կորելյացիաները

Փոփոխական	Փոփոխական2	Կորելյացիա	Քանակ	Վիճակագրություն Ստորին C.I.	Վերին C.I.	r2
Հ5_1	«Քաղաքացիության զգացումը՝ առանց քաղաքական գործունեության» սանդղակ	.322	481	.240	.400	10%

Բաց թողնված արժեքների դիտարկում՝ PAIRWISE, EXCLUDE. C.I. Վստահության միջակայք՝ 95.0

«Քաղաքացիության զգացողություն» սանդղակը համապարփակ չափորոշիչ է: Ինչպես նշվեց այս բաժնի սկզբում, սերտ կապ կա քաղաքացիության զգացողության և տվյալ համայնքում ապրելու ու դրա մաս զգալու հետ կապված գոհունակության միջև:

Փիրսոնի r գործակիցը՝ որպես կորելյացիայի չափման միջոց, կարող է ցույց տալ այս կապի քանակական գնահատականը: Պարզվում է, որ երկու փոփոխականների միջև կա 10% համընկնում: Այս ցուցանիշը խոսուն է, բայց կարող է անգամ ավելանալ, քանի որ գոհունակությունը որոշող գործոնների կարևորության ընկալումը ժամանակի ընթացքում փոխվում է՝ տեղական մշակույթում առկա տեսակետների, արժեքների և հեռանկարների փոփոխության հետ միասին:

Այս առումով լավ օրինակ է «*Քաղաքական մասնակցությունը*»: Առկա տվյալները վկայում են գոհունակության և «*Քաղաքական մասնակցության*» միջև փոխադարձ կապի լիակատար բացակայության մասին՝ r^2 գործակիցը հավասար է 0%: Բայց գուցե ապագայում մարդիկ կհասկանան, որ համայնքում ապրելու հետ կապված գոհունակության կարևոր գործոն է տեղական կառավարման մարմիններում անմիջական ներգրավվածության միջոցով համայնքի զարգացմանը ակտիվորեն նպաստելու հնարավորությունը: Ուղիղ քաղաքական մասնակցությունը պետք է որ ամրապնդի համայնքի նկատմամբ սեփականատիրության զգացումը: Սեփականատիրության ավելի ամուր զգացումը կարող է մարդկանց ավելի երջանիկ դարձնել այդ համայնքում ապրելու տեսանկյունից:

5.4. Ո՞Ր ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Է ՊԵՏՔ ԲԱՐԵԼԱՎԵԼ

Վերոնշյալ մոտարկված չափորոշիչները կարող են օգտագործվել քաղաքացիության զգացողությունը արտահայտող՝ հարաբերությունների չորս տիրույթներից յուրաքանչյուրի ընդհանուր գնահատականը հաշվարկելու համար:

Ելնելով այն ենթադրությունից, որ բոլոր չորս տիրույթները հավասարապես կարևոր են քաղաքացիության զգացողությունը որոշելու համար և պետք է

ձգտեն հնարավորինս լավագույն գնահատականին, այս գնահատումը թույլ կտա հեշտությամբ պարզել, թե որ ոլորտներն են այս նպատակին ավելի մոտ և որոնք՝ ավելի հեռու:

Ինչպես նշվել է, մոտարկված չափորոշիչները հետևյալն են.

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ	ՄՈՏԱՐԿՎԱԾ ՉԱՓՈՐՈՇԻՉ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՀԵՏ	*Գեղեցկություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_ գեղեցկություն
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՅՈՒՍՆԵՐԻ ՀԵՏ	*Մարդկանց ընդհանուր գնահատանք* • Հ5_3 «Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում» *Մյուսների վստահելիություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Մյուսների վստահելիություն
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ	*Հետաքրքրվածություն տեղական քաղաքականությամբ* • Հ5_5 «Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով» *Քաղաքական մասնակցություն* • ՍԱՆԴՂԱԿ «Քաղաքական մասնակցություն» *Պաշտոնյաների արդարացիության ընկալում* • Հ10_7 «Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար» *Հարկերի վճարում* • Հ10_3 «Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը»
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԵՐԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԵՏ	*Բավարարվածություն տեղական ծառայություններով* • Հ5_4 «Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով» *Համայնքի հանդեպ հոգածություն* • ԵնթաՍԱՆԴՂԱԿ_Համայնքի հանդեպ հոգածություն

Յուրաքանչյուր ենթաոլորտ բաղկացած է սանդղակներից և առանձին հարցերից: Ուսումնասիրվել են համապատասխան բաղադրիչների միջինները և հարաբերությունների յուրաքանչյուր ոլորտի համար միջին արժեքներ են հաշվարկվել: Այնուհետև, միջին արժեքները վերափոխվել են ըստ 100 բալանոց սանդղակի՝ հաշվարկելով դրանց հարաբերակցությունը առավելագույն՝ 5.0 արժեքի նկատմամբ:

Ստորև աղյուսակում ներկայացված են տվյալների բազայից դուրս բերված գնահատականները:

Հաստատվել է, որ «մյուսների հետ հարաբերությունները» ոլորտը գնահատման ամենաբարձր ցուցանիշն ունի, որին հաջորդում է «հարաբերություններ հանրային տարածքի հետ» տիրույթը: Այս ոլորտների մասով համայնքի հետագա ռազմավարությունը կարող է լինել առկա վերաբերմունքի պահպանումը:

Այնուհետև հաջորդում է «հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ» ոլորտը՝ մի քանի կետով ավելի ցածր միավորով, քան «հանրային տարածքի հետ հարաբերությունները»: Ծառայությունների որակի և արդյունավետության վերաբերյալ տվյալների հավաքագրման բարելավումը և քաղաքացիներին հաշվետու լինելը կարող է մեծ նշանակություն ունենալ, քանի որ դա կօգնի բարելավել ծառայությունների մատուցման և գերծանրաբեռնվածության խնդիրների հետ կապված դժվարությունների գիտակցումը և խթանել անհատական պատասխանատվության զգացումը:

Բարելավման ուղղությամբ ավելի շատ աշխատելու կարիք կա նաև «հանրային կառույցների հետ հարաբերությունների» ոլորտում: Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով հետաքրքրվածության ցածր մակարդակը զուգակցվում է տեղական քաղաքականության մեջ ակտիվ ներգրավվելու ցանկության պակասով: Քաղաքական մասնակցությունը, ըստ երևույթին, ամենացածր գնահատական ունեցող ենթասանդղակն է: Դա նշանակում է, որ անհրաժեշտ է նպատակ դնել քաղաքացիներին ավելի շատ մասնակից դարձնել տեղական հանրային հաստատությունների գործունեությանը՝ հատկապես որոշումների կայացմանը մասնակցության և տեղական ինքնակառավարման մարմիններում ակտիվ ներգրավման առումով:

Այնուհետև, առանձնապես բարձր չէ հանրային բարօրության նկատմամբ պաշտոնյաների արդարացիության, ինչպես նաև քաղաքացիների արդարացիության ընկալումը: Այստեղ ևս թափանցիկության ապահովումը կօգնի «ընկալումները» համապատասխանեցնել իրական տվյալներին:

Ենթասանդղակների և հարաբերությունների ոլորտների գնահատականները կարող են համադրվել պարզ միջին արժեքների հաշվարկման միջոցով: Այս միջինները ի մի բերելով՝ ստանում ենք այսպես կոչված «Քաղաքացիության ինդեքսը», որը կարող է մատչելի ձևով ներկայացնել համայնքում քաղաքացիության զգացողության ընկալման պատկերը:

Այն կարող է դիտարկվել նաև որպես գնահատման յուրատեսակ ընդհանուր շրջանակ: Այդ առումով օգտակար կլիներ առանձին թիրախային խմբերին (օրինակ՝ տեղական քաղաքական գործիչներին, տեղացի երիտասարդ առաջնորդներին և այլն) խնդրել լրացնել հարցաթերթը և ապա համեմատել «Քաղաքացիության ինդեքսի» իրենց գնահատականները այստեղ

ներկայացված կամ այլ խմբերից ստացված գնահատականների հետ: Գնահատականների տարբերությունը կարող է հանրային բանավեճ խթանել «ինչու» հարցի շուրջ և ստիպել ավելի մեծ ուշադրություն հատկացնել մյուսների տեսակետներին:

Գծապատկեր 5՝ Քաղաքացիության ինդեքսի գնահատականը

Աղյուսակ 57՝ Քաղաքացիության ինդեքսի գնահատականներ

Հարաբերություններ հանրային տարածքի հետ		3.70	**74**
	Գեղեցկություն	3.70	**74**
Հ6_6	Գեղեցիկ եմ համարում Ախուրյան խոշորացված համայնքը:		
Հ6_4	Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:		
Հարաբերություններ հանրային կառույցների հետ		2.67	**53**
	Հետաքրքրվածություն տեղական քաղաքականությամբ	2.75	**55**
Հ5_5	Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով		
	Քաղաքական մասնակցություն	2.39	**48**
Հ3	Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:		
Հ10_5	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:		
Հ10_6	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:		
	Պաշտոնյաների արդարացիության ընկալում	2.68	**54**
Հ10_7	Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար		
	Հարկերի վճարում	**2.85**	**57**
Հ10_3	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը		
Հարաբերություններ մյուսների հետ		3.87	**77**
	Մարդկանց ընդհանուր գնահատանք	3.97	**79**
Հ5_3	Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում		
	Մյուսների վստահելիություն	3.77	**75**
Հ8_2	Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:		
Հ8_4	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:		
Հ8_5	Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:		
Հարաբերություններ գերծանրաբեռնվածության խնդիրների հետ		3.44	**69**
	Բավարարվածություն տեղական ծառայություններով	3.30	**66**
Հ5_4	Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով		
	Համայնքի հանդեպ հոգածություն	3.59	**72**
Հ6_1	Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:		
Հ6_2	Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:		
Հ10_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:		
Հ12_2	Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):		

CapSLoc

Capacities for Sustained Locally-Led Development | Կայուն նպատակ ունեցող հասանելիություն զարգացում

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Քաղաքացիության ինդեքս
ելակետային հետազոտություն

Ախուրյան
բազմաբնակավայր համայնք

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Համայնքում ապրող և գործող մարդիկ ցանկացած զարգացման հիմնական ռեսուրսն են հանդիսանում՝ լինի դա տնտեսական, սոցիալական, թե ինստիտուցիոնալ զարգացում:

Եթե հետևենք այս համոզմունքին, ապա անմիջապես պարզ է դառնում, որ այն վերաբերմունքը, նվիրվածությունը և մոտիվացիան, որոնք առկա են համայնքի անդամների մոտ՝ ընդհանուր բարօրության, «*հանրայինի*» (*res publica)* մասին հոգ տանելու պատասխանատվություն կրելիս, հիմնարար նշանակություն ունեն: Քաղաքացիության զգացողությունը այնպիսի հայեցակարգ է, որն ի մի է բերում է այս վերաբերմունքը, նվիրվածությունը և մոտիվացիան:

Սակայն քաղաքացիության բուն զգացողությունը ժամանակի ընթացքում փոփոխվում է՝ կախված քաղաքացիների փորձառությունից և դրանից քաղած դասերից: Այն գործնականում արտացոլվում է վարքագծի օրինաչափությունների տեսքով: Դրանցից մի քանիսը վեր են հանվել հետազոտությունների միջոցով: Օրինակ, ըստ պայմանական համագործակցության գաղափարի, մարդկանց կողմից համագործակցելու հակումը կախված է մյուս անհատների համագործակցության աստիճանից (Urs Fischbacher, 2001):

Քաղաքացիության ինդեքսի այս հետազոտությունը նպատակ ունի ցույց տալ վերը ներկայացված՝ հարաբերությունների չորս կարևոր տիրույթների գնահատումը Ախուրյան խոշորացված համայնքի անդամների կողմից: Ըստ էության, նրանց խնդրել ենք գնահատել համայնքի ներսում համագործակցության մակարդակի իրենց ընկալումը՝ դիտարկելով փորձառության հենց այդ չորս ոլորտները:

Ստացված պատասխաններից կարելի է հետաքրքիր մտքեր վեր հանել նրանց մոտիվացիայի և համայնքի հանդեպ նվիրվածության մասին: Զեկույցի այս բաժնում կդիտարկենք Ախուրյան խոշորացված համայնքի անդամների համար կարևոր արժեքները և ամփոփ եզրակացություն կներկայացնենք այն ռեսուրսների ու ներուժի վերաբերյալ, որոնք առկա են համայնքում և պետք է պահվեն, պահպանվեն ու օգտագործվեն հետագա զարգացման համար: Բացի այդ, կմատնանշենք նաև առկա բացերը՝ ներգրավված շահագրգիռ կողմերի ուշադրությանը ներկայացնելով Ախուրյանի տեղական կարողությունների հզորացման և համայնքի զարգացման պլանավորման առաջնահերթ առանցքային ոլորտները: Առաջարկությունների շարքում կշարունակենք դիտարկել բնակիչների ենթախմբերին, որոնք ավելի բովանդակալից քննարկումներում և տեղական ծրագրերում ներգրավվելու կարևոր պոտենցիալ ունեն:

i.Մյուսների հանդեպ դրական վերաբերմունքը որպես Ախուրյան խոշորացված համայնքի առանցքային ռեսուրս

Նախ և առաջ, ախուրյանցիները շատ լավ կարծիք ունեն համայնքի մյուս անդամների մասին: Սա ավելի արժեքավոր է դառնում, եթե հաշվի առնենք ընդհանրական վստահության ընդհանուր առմամբ ցածր մակարդակը. թեև մարդիկ շատ թերահավատ են մյուսներին վստահելու հարցում, նրանք կարծում են, որ խոշորացված համայնքի անդամները արժանի են հատուկ վերաբերմունքի, անգամ եթե դժկամություն կա փոքր գյուղերը մեկ մեծ համայնքում միավորելու որոշման վերաբերյալ:

Բացի այդ, տվյալները հստակ ցույց են տալիս, որ համայնքում ապրելու վերաբերյալ գոհունակությունը մեծապես կախված է մարդկանց գնահատանքից, արդարացիությունից, անհրաժեշտության դեպքում օգնելու պատրաստակամությունից և մյուսների հանդեպ ցուցաբերած հարգանքից:

Այս բացահայտումները հաստատում են զեկույցի առաջին գլխում նշված հետազոտությունների եզրակացությունները առ այն, որ մյուսների հետ հարաբերությունների որակը որոշիչ դեր է խաղում մարդկանց երջանիկ դարձնելու հարցում: Ստացած տվյալները, այսպիսով, հաստատում են, որ մյուսների մասին դրական կարծիքն ազդում է այն բանի վրա, թե որքանով են մարդիկ ուրախ, որ ապրում են տվյալ համայնքում:

Մյուս կողմից, հաստատվել է նաև այն ենթադրությունը, որ մյուսների հետ հարաբերությունների դրական կողմերը ավելի դժվար է նկատել այն ժամանակ, երբ առկա տնտեսական պայմանները թույլ չեն տալիս բավարարել հիմնական կարիքները: Ավելի անբարենպաստ տնտեսական վիճակում գտնվող մարդիկ հակված են ավելի քննադատաբար վերաբերվել մյուսներին: Ըստ երևույթին, ծանր տնտեսական պայմաններում ավելի դժվար է համագործակցել:

Թեև վիճակագրորեն նշանակալի միտում չի արձանագրվել, կարելի է թերևս ենթադրել, որ հարստությունը նույնպես բարենպաստ պայման չէ համագործակցության համար, քանի որ մեր ընտրանքում մյուսների նկատմամբ վերաբերմունքի լավագույն գնահատականը գրանցվել է միջին եկամուտ ունեցող ներկայացուցիչների մոտ:

Որպես հետագա անելիք՝ պետք չէ անտեսել երիտասարդների կողմից մյուսներին վստահելու պատրաստակամության պակասը: Այս երևույթը հստակորեն ընդգծվել է վիճակագրական տվյալներում: Երիտասարդներն ըստ երևույթին շատ ավելի քիչ են հակված վստահել ուրիշներին, քան տարեցները: Սա, անշուշտ, մի երևույթ է, որը պետք է ավելի մանրամասն ուսումնասիրվի:

ii.Հարգանքն ու կարգապահությունը՝ որպես պատշաճ գործառնող համայնքի լավագույն ապացույց

Համայնքի անդամները կարևոր դեր են խաղում համայնքի գործունեության, կանոնակարգված ու արդյունավետ համակեցության պայմանների ապահովման գործում: Մենք այս պայմանները դիտարկել ենք համակեցության ու գերծանրաբեռնվածության խնդիրները լուծելու ունակության տեսանկյունից՝ խնդիրներ, որոնք կարող են առաջանալ համատեղ ապրելու արդյունքում: Հարցման պատասխանները ցույց են տալիս, որ համատեղ ապրելու այս կարողության գնահատականը բավականին դրական է:

Զգալի կապ է բացահայտվում կանոնները հարգելու, մաքրության ու կարգուկանոնի, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանման պարտավորության միջև: Հարցվածներն այս երևույթները մեկնաբանել են որպես մեկ գաղափարի տարբեր կողմեր: Ներքին կարգուկանոնի պահպանումը՝ ինչպես տարածքի խնամքի և մաքրության, այնպես էլ կանոնները հարգելու իմաստով, համայնքը գնահատելու ճշմարիտ ցուցանիշ է: Լավ համայնքը նախ և առաջ կարգուկանոն պահող, հարգանք դրսևորող և արդյունավետ համայնքն է:

Ախուրյանցիները ընդհանուր առմամբ կարծում են, որ իրենք ապրում են բավականաչափ կարգուկանոն ունեցող, հարգալից և արդյունավետ համայնքում: Համեմատաբար ցածր գնահատականներ են տրվել բարձրագույն

կրթություն ունեցողների կողմից: Նրանք, հավանաբար, ավելի մեծ սպասումներ ունեն և ավելի գործուն քայլեր են ակնկալում, որպեսզի իրավիճակը Է՛լ ավելի բարելավվի:

Սա նշանակում է, որ Ախուրյանի բարձրագույն կրթություն ունեցող բնակիչները կարող են դառնալ տեղական զարգացման հետագա առանցքային դերակատարներ: Եթե նրանք պատշաճ կերպով ներգրավվեն, կարող են իրենց ջանքերը ներդնել՝ համայնքը ավելի լավ արդյունքների հասցնելու համար:

Լավ կազմակերպված համայնքում ապրելը, անշուշտ, ավելի քան գնահատելի է: Հարկ է հիշել, սակայն, որ երբ գնահատում ենք, թե ինչն է նպաստում Ախուրյան համայնքում ապրելու հետ կապված գոհունակությանը, այս գործոնի դերը այնուամենայնիվ ավելի փոքր է, քան համայնքի մյուս անդամների մասին ընդհանուր կարծիքի նշանակությունը: Կարելի է եզրակացնել, որ եթե մարդիկ ընդհանուր առմամբ լավն են և վստահելի, կարգուկանոն ունեցող ու մաքուր համայնքը արդեն տրամաբանական հետևանք կլինի:

iii. Գեղեցկությունը որպես քաղաքացիության պայման, որը պետք չէ անտեսել

Ոմանք պնդում են, որ գեղեցկությունը չափազանց սուբյեկտիվ փոփոխական է, որպեսզի քաղաքականության համար կարևորություն ներկայացնի: Այնուամենայնիվ, նույնիսկ հարցման տվյալները կարծես այլ բան են հուշում:

Նախ, անկախ անձնական ճաշակից, ընդհանուր ընկալում կա՝ արդյոք մարդկանց բնակության տվյալ վայրը գեղեցիկ է համարվում, թե տգեղ: Անշուշտ, յուրաքանչյուրն իր ճաշակն ունի՝ որոշելիս, թե ինչն է գեղեցիկ և ինչը կարելի է տգեղ համարել, սակայն համայնքում ընդհանուր համոզմունք է ձևավորվում՝ արդյոք համայնքի տեղանքը գեղեցիկ է, թե ոչ: Ճիշտ է, այն վայրը, որտեղ մարդը մեծացել և ապրում է, ի սկզբանե համարվում է գեղեցիկ, թեկուզ էմոցիոնալ պատճառներով: Հենց այդ պատճառով էլ մտահոգության լուրջ առիթ պետք է լինի, եթե գերիշխի համայնքը որպես տգեղ ընկալելու միտումը:

Քաղաքային լանդշաֆտը դառնում է այն կտավը, որի վրա դրոշմվում են այդ համայնքում հաստատված արժեքները: Եվ երբ այդ արժեքները որպես բացասական են ընկալվում՝ հիմնականում այն պատճառով, որ դրանք արտացոլում են ընդհանուր բարիքի արհամարհում հօգուտ ինչ-որ մեկի անձնական շահի, առաջանում է նաև տգեղության ընկալում:

Ախուրյան համայնքում քաղաքացիների գնահատականը, բարեբախտաբար, միանշանակ միտված է դեպի գեղեցիկը: Այս վերաբերմունքը ախուրյանցիների ընդհանուր արժեքն է, որի վրա պետք է հիմնել ու կառուցել համայնքի զարգացման ռազմավարությունն ու գործողությունները:

Գեղեցկության ընկալումը փոխկապակցված է տվյալ համայնքում ապրելու հանգամանքով պայմանավորված գոհունակության հետ: Ուստի խորհուրդ տրվում է աչալուրջ լինել: Պետք է նկատի ունենալ, որ քաղաքաշինության, տեղանքի պահպանման, նոր շինությունների և հանրային տարածքների վերակառուցման վրա ազդող որոշումներն իրենց ուղղակի ազդեցությունից զատ ավելի կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք զգալիորեն ամրապնդում կամ թուլացնում են քաղաքացիության զգացողությունը:

iv.Քաղաքական հաստատությունները՝ անհատներից օտարված

Հանրային կառույցների հետ հարաբերությունները թերևս Ախուրյան համայնքում քաղաքացիության զգացողության ամենազգայուն կողմն են: Համայնքային հաստատությունների պատշաճ գործունեությունը մեծ դեր ունի համայնքում ապրելու գոհունակության հարցում, ուստի դրանք կարևոր են համարվում: Սակայն կարծես թե ընկալումն այնպիսին է, որ այս կառույցների վրա բացի ընտրություններից այլ կերպ հնարավոր չէ ներազդել:

Նախ, մարդիկ հիմնականում չեն դիտարկում համայնքապետարանի ընտրովի մարմիններում ուղղակի քաղաքական մասնակցության հնարավորությունը: Պարզ չէ, թե որն է դրա պատճառը՝ այն համոզմունքը, որ հասարակ քաղաքացիները ընտրվելու փաստացի հնարավորություն չունեն, այդ աշխատանքում շահագրգռվածության բացակայությունը, թե այն մտայնությունը, որ ընտրություններին կարող են առաջադրվել միայն անհրաժեշտ հմտություններ ունեցող մարդիկ:

Ընտրովի համայնքային մարմիններում անմիջական դերակատարություն ունենալու հնարավորության բացառումը նշանակում է, որ հստակ բաժանարար գիծ է ձևավորվել «մենք՝ քաղաքացիներս» և «նրանք՝ պաշտոնյաները» հասկացությունների միջև: Սա կարող է բացասական հետևանքներ ունենալ: Նախ, ըստ արժանվույն չեն ընկալվում այն դժվարությունները, որոնց բախվում են քաղաքականություն մշակողները: Մի կողմից, մեծ ակնկալիքներ են առաջանում առ այն, թե ինչ պետք է անեն հանրային կառույցները: Մյուս կողմից, թերագնահատվում են այն դժվարությունները, որոնց կարելի է բախվել քաղաքացիների տարբեր կարիքներին արձագանքելիս: Օրինակ, ընդհանուր առմամբ հստակ ընկալում չկա տնտեսական ռեսուրսների պակասի վերաբերյալ: Քաղաքացիներն իրենք իրենց տեսնում են ոչ թե լավ կառավարման համատեղ պատասխանատուների, այլ պահանջկոտ հաճախորդների դերում: Սա կարող է հիասթափություն ու դժգոհություն առաջացնել հաստատությունների նկատմամբ՝ ակնհայտ հետևանքներ ունենալով քաղաքացիության զգացողության համար: Դժվար կլինի համագործակցել առանց հանրային կառույցների խնդիրները պատշաճ հասկանալու:

Համայնքի խոշորացումը այս տեսանկյունից ոչ թե բարենպաստ պայման է, այլ լրացուցիչ ռիսկ: Այդ իսկ պատճառով սերտ ուշադրություն պետք է հատկացնել այս խնդրին՝ ապահովելով իրավիճակի ավելի խորքային ըմբռնումը: Այնուհետև կարելի է մտածել մասնակցության, ներառման և ներգրավվածության ավելի ինտենսիվ ձևերի ակտիվացման մասին: Դա կարելի է անել թաղային ժողովների միջոցով՝ խոշորացված բնակավայրերը դիտարկելով որպես թաղամասեր, մասնակցային բյուջետավորման միջոցով և այլն:

v.Կանայք որպես թաքնված ռեսուրս, որը պետք է օգտագործվի

Կանանց մասով բավականին անսպասելի արդյունքներ են ի հայտ եկել, մի մասը՝ դրական, մյուսները՝ բացասական:

Կանայք ճնշող մեծամասնություն են կազմում այն բնակիչների շրջանում, որոնք չեն ծնվել ներկայիս բնակության վայրում: Ուստի նրանք ավելի անմիջականորեն են զգացել նոր բնակավայրում հարմարվելու և ինտեգրվելու դժվարությունները:

Կանանց շրջանում «*Մյուսների վստահելիության*», վստահության, հանրային պաշտոնյաների և քաղաքացիների արդարացիության ընկալման զգալիորեն ավելի ցածր ցուցանիշները վկայում են բնակչությանը ինտեգրվելու որոշակի դժվարությունների մասին:

Մյուս կողմից, առանձին ազդանշաններ կան, որոնք վկայում են ապագա մեծ պոտենցիալի մասին: Օրինակ, կանայք ավելի լավ են գիտակցում տեղական քաղաքականության մեջ անմիջական մասնակցության արժեքը: Ավելին, նրանք ավելի հավասարակշռված են պետական պաշտոնյաների վերաբերյալ իրենց գնահատականներում և ավելի քիչ են հակված քաղաքական բևեռացումների:

Կարևոր է հասկանալ, թե ինչ կարելի է անել, որպեսզի կանայք, հատկապես նրանք, ովքեր այստեղ չեն ծնվել, ավելի հարմարավետ զգան իրենց բնակավայրում՝ բարելավելով համայնքի հանդեպ սեփականատիրության իրենց զգացումը, և նույնիսկ ավելի ակտիվ դեր ունենան համայնքի հետագա զարգացման գործում:

Կանայք շատ կարևոր ռեսուրս են ոչ միայն այն առումով, թե ինչ կարող են անել, այլև այն արժեքների տեսանկյունից, որոնք կարող են տարածել: Հետազոտությունը ցույց է տալիս, որ գործելու մեծ հնարավորություններ կան, և ժամանակն է իրացնել դրանք:

vi. Ուղղակի մասնակցությունը՝ որպես քաղաքացիության զգացողության զարգացման հարթակ

Հետազոտության վերլուծության որոշ բաժիններում բավականին անսպասելի էին ամենափոքր և ծայրամասային գյուղերում ապրողների կարծիքները: Կարելի էր ենթադրել, որ նրանք ամենաշատն են տուժել խոշորացման արդյունքում: Նրանք կարող էին դիտարկվել որպես նոր խոշորացված համայնքում դժգոհների հավանական խմբին պատկանող մարդիկ: Կարելի էր ասել, որ ապրելով մեծ բնակավայրերից հեռու՝ նրանք իրենց լքված կզգան և ոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերի խոշորացված համայնքի նկատմամբ:

Փոխարենը միանգամայն այլ պատկեր է ի հայտ գալիս: Փոքր և ծայրամասային գյուղերի բնակիչները, ըստ երևույթին, քաղաքական մասնակցության առումով ամենապատրաստակամ, նոր խոշորացված համայնքի համայնքապետարանի ծրագրերով առավել հետաքրքրված, գերծանրաբեռնվածության խնդիրները կառավարելու արդյունքներով բավարարված մարդիկ են, որոնք ամենից շատ են վստահում մյուսներին, ինչպես նաև հավատում են պետական պաշտոնյաների արդարացիությանը:

Իհարկե, նրանք նաև տեղ-տեղ քննադատում են առկա իրավիճակը: Այս մարդիկ թերահավատորեն են վերաբերվում տեղական ինքնակառավարման նոր մարմնին, որի հետ պատկանելության և ինքնության առումով դեռ լիովին չեն նույնականացվում: Բայց նրանք նաև ամենավճռականն են՝ ուղղակիորեն աջակցելու դրա զարգացմանը: Իրենց գյուղի հետ կապված նրանց ինքնության և պատասխանատվության ամուր զգացումը կարևոր ռեսուրս է դառնում նոր խոշորացված համայնքի համար:

Նման բնութագրով այս խումբը հակադրության մեջ է գտնվում ավելի մեծ բնակավայրերի բնակիչների զգալի մասի հետ, որոնք որևէ առնչություն չեն զգում ոչ իրենց բնակավայրի, ոչ էլ Ախուրյան խոշորացված համայնքի հետ:

Հնարավոր է, որ ավելի անանուն անձնային հարաբերությունները, գուցե նաև համայնքին ակտիվ մասնակցություն ունենալու ուղիղ կոչերի պակասը բերել

են նրան, որ այս մարդիկ ավելի քիչ են զգում իրենց ներգրավվածությունը և, հետևաբար, պատկանելության ավելի թույլ զգացում ունեն:

Սա հանգեցնում է երկու եզրակացության՝ մեկ ընդհանուր և մեկ գործնական: Առաջինը հաստատում է, որ համայնքի բարօրությանը նվիրվելը ամրապնդում է քաղաքացիության զգացողությունը, քանի որ փոքր բնակավայրերում ապրողների փորձը ցույց է տալիս, որ այդ բնակավայրերը ծառայում են որպես քաղաքացիության արդյունավետ դպրոց: Երկրորդ, անհրաժեշտ է մտածել ավելի մեծ բնակավայրերում ապրող մարդկանց ուղղակի ներգրավման մեխանիզմների մասին: Օրինակ, կարելի է այնտեղ փոքր թաղամասեր ձևավորել, որոնք կվերարտադրեն փոքր բնակավայրերին բնորոշ պայմանները: Առօրյա կյանքին առնչվող պարզ նախաձեռնությունների շնորհիվ այս թաղամասերը կարող են ծառայել որպես համայնքային մասնակցության դպրոցներ:

Զեկույցի և դրա եզրափակիչ բաժնի նպատակն է փաստերի վրա հիմնված վերլուծություն ներկայացնել և առանձնացնել այն առաջնահերթ ոլորտները, որոնց վրա պետք է կենտրոնանալ: Մենք չենք կարող հստակ լուծումներ ու բաղադրատոմսեր տալ, թե ինչ պետք է արվի, ինչպես և երբ: Ախուրյանցիների մտքերի ամփոփումն օգտագործելու լավագույն միջոցն է՝ հետամուտ լինել վերը ներկայացված եզրակացություններում արտացոլված թեմաներին և տարբեր շահագրգիռ կողմերին ու նրանց խմբերին ներգրավելով ավելի խորքային քննարկումների մեջ՝ իրենց բնակավայրերի և ընդհանուր առմամբ Ախուրյան համայնքի կարիքների համար հասցեական լուծումներ գտնել:

Այս նախնական հետազոտությունը, անշուշտ, դրական պատկեր է ներկայացնում Ախուրյան խոշորացված համայնքի քաղաքացիների կողմից քաղաքացիության զգացողության ընկալման տեսանկյունից: Քաղաքացիների կողմից հնչեցված գնահատականները բավականին դրական են և հուշում են համայնքում առկա զգալի սոցիալական կապիտալի մասին: Միևնույն ժամանակ, հետազոտությունը բազմաթիվ հուշումներ է տալիս այն մասին, թե ինչ կարելի է անել քաղաքացիության զգացողությունն Է՛լ ավելի ամրապնդելու համար:

Ինչպես նշվեց զեկույցի ներածությունում, մենք լիահույս ենք, որ այս արդյունքները կխթանեն հավաքական մտահայեցողությունը առ այն, թե ինչ կարելի է ավելի շատ և ավելի լավ անել՝ համախմբելու Ախուրյանի քաղաքացիների մոտիվացիան ու հանձնառությունը՝ իրենց համայնքի նշանակալի զարգացմանը նպաստելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Acemoglu, D., Johnson, S., & Robinson, J. (2001). The Colonial Origins of Comparative Development: An Empirical Investigation. *American Economic Review*, 1369-1401.

Algan, Y., & Cahuc, P. (2013). Trust and Growth. *Annual Review of Economics*, 521-549

Banfield, E. (1958). *The Moral Basis of a Backward Society.* New York: Free.

Brehm, J., & Rahn, W. (1997). Individual-level evidence for the causes and consequences of social capital. *American Journal of Political Science, 41*(3), 999-1023.

Bruni, L., & Zamagni, S. (2015). *L'economia civile.* Bologna: Il Mulino

Diener, E., & Seligman, M. (2004). Beyond Money, Toward an Economy of Well-Being. *Psychological Science in the Public Interest*, 1-31.

Diener, E., Diener, M., & Diener, C. (1995). Factors Predicting the Subjective Well-Being of Nations. *Journal of Personality and Social Psychology*, 851-864.

Ermisch, J., & Gambetta, D. (2010). Do strong family ties inhibit trust? *Journal of Economic Behavior & Organization*, 365-76.

Etzioni, A. (1995). *The New Communitarian Thinking.* Charlottesville, VA: University of Virginia Press. Etzioni, A. (2010). Is transparency the best disinfectant? *Journal of Political Philosophy, 18*(4), 389-404.

Fischbacher U., Gächter S., Fehr E. (2001). Are people conditionally cooperative? Evidence from a public goods experiment. *Economics Letters*, 397-404,

Fukuyama, F. (1995). *Trust: The Social Virtue and the Creation of Prosperity. New York: Free press.*

Giddens, A. (1984). *The constitution of society: Outline of the theory of structuration.* Cambridge: Policy Press

Grimmelikhuijsen, S. (2012). Linking transparency, knowledge and citizen trust in government: an experiment . *International Review of Administrative Sciences, 78*(1), 50-73.

Grimmelikhuijsen, S., Jilke, S., Olsen, A. L., & Tummers, L. (2017). Behavioral Public Administration: Combining Insights from Public Administration and Psychology. *Public Administration Review, Vol. 77, Iss. 1, pp. 45–56.*, 45-56.

Helliwell, J. F. (2002). How's Life? Combining Individual and National Variables to Explain Subjective Well-Being (Working Paper 9065, Cambridge, Mass.: National Bureau for Economic Research, 2002). *Working Paper 9065, Cambridge, Mass*

Helliwell, J., & Putnam, R. (2007). Education and Social Capital. *Eastern Economic Journal*, 1-19

Jasielska, D. (2020). The moderating role of kindness on the relation between trust and happiness. *Current Psychology*, 2065-2073.

Kampen, K., Van de Walle, S., & Boukaert, G. (2006). Assessing the Relation between Satisfaction with Public Service Delivery and Trust in Government: The

Impact of Predisposition of Citizens toward Government on the Evaluation of IT Performance. *Public Performance and Management Review, 29*(4), 387-404.

Knack, S., & Keefer, P. (1997). Does social capital have an economic payoff? A cross-country investigation. *Quarterly Journal of Economics*, 1252-88

Levi, M., & Stoker, L. (2000). Political Trust and Trustworthiness. *Annual Review of Political Science*(3), 375-407.

Putnam, R. (2000). *Bowling Alone: The Collapse and Revival of American Community.* New York: Simon & Schuster

Tabellini, G. (2010). Culture and institutions: economic development in the regions of Europe. *Journal of the European Economics Association*, 677-716

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1՝ Հաճախականություն-ների բաշխումը ըստ սեռի 25
Աղյուսակ 2՝ Նկարագրական վերլուծությունը և հաճախականություն-ների բաշխումը ըստ տարիքի 25
Աղյուսակ 3՝ Հաճախականություն-ների բաշխումը ըստ ամուսնական կարգավիճակի 26
Աղյուսակ 4՝ Հաճախականությունների բաշխումը ըստ ծննդավայրի 26
Աղյուսակ 5՝ Սեռի և ծննդավայրի խաչաձև աղյուսակ 26
Աղյուսակ 6՝ Հաճախականություն-ների բաշխումն ըստ եկամուտի և զբաղմունքի 27
Աղյուսակ 7՝ Հաճախականությունների բաշխումն ըստ տարածքի 27
Աղյուսակ 8՝ Սանդղակներում և ենթասանդղակներում ներառված հարցերի ցանկը 31
Աղյուսակ 9՝ Հարաբերությունների 4 ոլորտների մոտարկված չափորոշիչներ 35
Աղյուսակ 10՝ Հարց 1-ի հաճախականություն-ների բաշխում 40
Աղյուսակ 11՝ Հարց 1-ի և սեռի խաչաձև աղյուսակ 40
Աղյուսակ 12՝ Ըստ սեռի միջին արժեքների տարբերության նշանակալիության թեստ 41
Աղյուսակ 13՝ Հարց 1-ի և ընտրանքի ստրատայի խաչաձև աղյուսակ 41
Աղյուսակ 14՝ Հարց 5_5-ի հաճախականության բաշխում 41
Աղյուսակ 15՝ Հարց 1-ի և ստրատայի խաչաձև աղյուսակ 42
Աղյուսակ 16՝ Հարց 4-ի նկարագրական վերլուծություն 42
Աղյուսակ 17՝ Հ4_1-ի և Հ4_2-ի խաչաձև աղյուսակ 43
Աղյուսակ 18՝ Բնակավայրին և համայնքին մոտ զգալու կորելյացիաները ըստ ստրատաների 44
Աղյուսակ 19՝ Հ5_3, Հ6_3, Հ8_3, Հ10_4, Հ12_4 հարցերի հաճախականություն-ների բաշխում 45
Աղյուսակ 20՝ Հ10_8 հարցի հաճախականություն-ների բաշխում 46
Աղյուսակ 21՝ Հ6_4 և Հ6_6 հարցերի նկարագրական վերլուծություն 48
Աղյուսակ 22՝ Հ6_4 հարցի և սեռի խաչաձև աղյուսակ 48
Աղյուսակ 23՝ «Գեղեցկություն» ենթասանդղակի և Դ3 հարցի նկարագրական վերլուծություն 49
Աղյուսակ 24՝ Հ7 հարցի հաճախականություն-ների բաշխում 50
Աղյուսակ 25՝ Հ7 հարցի և տարիքի խաչաձև աղյուսակ 50
Աղյուսակ 26՝ Հ7 հարցի և տարիքի միջև կորելյացիայի գործակիցներ 50
Աղյուսակ 27՝ Հ7 հարցի և սեռի խաչաձև աղյուսակ 50
Աղյուսակ 28՝ Հ7 հարցի և սեռի միջև կապի Քի քառակուսի (χ^2) գործակիցը և այլ թեստեր 51
Աղյուսակ 29՝ Հ7 հարցի և սեռի միջև կորելյացիայի գործակիցներ 51
Աղյուսակ 30՝ Հ8_2 հարցի հաճախականություն-ների բաշխում 51
Աղյուսակ 31՝ Հ_1, Հ8_4 և Հ8_5 հարցերի նկարագրական վերլուծություն52
Աղյուսակ 32՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ սեռի 52
Աղյուսակ 33՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատաների 53
Աղյուսակ 34՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ եկամտի 53
Աղյուսակ 35՝ «Մյուսների վստահելիության» ANOVA վերլուծությունն ըստ կրթության 54
Աղյուսակ 36՝ Հ3 հարցի հաճախականություն-ների բաշխում 55

Աղյուսակ 37՝ Հ10_1 հարցի ANOVA վերլուծությունն ըստ կրթության 56
Աղյուսակ 38՝ Հ9 հարցի նկարագրական վերլուծություն 57
Աղյուսակ 39՝ Հ9 հարցի ANOVA վերլուծությունն ըստ եկամտի.....57
Աղյուսակ 40՝ Հ10_3 հարցի նկարագրական վերլուծություն 58
Աղյուսակ 41՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի չափորոշիչների ANOVA վերլուծությունն ըստ եկամտի.....60
Աղյուսակ 42՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի չափորոշիչների ANOVA վերլուծությունն ըստ բնակավայրերի.....61
Աղյուսակ 43՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի ANOVA վերլուծությունն ըստ սեռի 62
Աղյուսակ 44՝ «Հարաբերություններ հանրային կառույցների հետ» ոլորտի ANOVA վերլուծությունն ըստ տարիքի 63
Աղյուսակ 45՝ Հ6_1, Հ12_2 և Հ10_2 հարցերի նկարագրական վերլուծություն 64
Աղյուսակ 46՝ Հ6_2 հարցի նկարագրական վերլուծություն 64
Աղյուսակ 47՝ Հ11 հարցի նկարագրական վերլուծություն 65
Աղյուսակ 48՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ տարիքի 66
Աղյուսակ 49՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ զբաղմունքի.....67
Աղյուսակ 50՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատայի 67
Աղյուսակ 51՝ «Համայնքի հանդեպ հոգածության» ANOVA վերլուծությունն ըստ կրթության 68
Աղյուսակ 52՝ Հ5_4 հարցի ANOVA վերլուծությունն ըստ ընտրանքի ստրատաների 68
Աղյուսակ 53՝ Հ5_1 հարցի հաճախականություն-ների բաշխում.....70
Աղյուսակ 54՝ Երկփոփոխական կորելյացիաները Հ5_1 հարցի և Հ5_3, Հ5_4, Հ5_5 հարցերի միջև 71
Աղյուսակ 55՝ Հ5_1 հարցի և մի շարք ենթասանդղակների ու հարցերի միջև երկփոփոխական կորելյացիաները 73
Աղյուսակ 56՝ Հ5_1-ի և սանդղակների միջև երկփոփոխական կորելյացիաները 74
Աղյուսակ 57՝ Քաղաքացիության ինդեքսի գնահատականներ 79

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1՝ Ախուրյան համայնքի բնակավայրերի նախկին սահմանների պատկերը և աշխարհագրությունը.....9
Գծապատկեր 2՝ Տեսական շրջանակ 15
Գծապատկեր 3՝ Ախուրյան խոշորացված համայնքի և դրա՝ երեք ստրատայի դասակարգված բնակավայրերի պատկերը.....20
Գծապատկեր 4՝ Վերանայված տեսական շրջանակ 37
Գծապատկեր 5՝ Քաղաքացիության ինդեքսի գնահատականը.....78

ՀԱՎԵԼՎԱԾ Ա Տվյալների հավաքագրման գործիքի օրինակ

Հարցազրուցավարի ID-ն՝ (հարցազրուցավարների անվանացանկ)

Բնակավայր՝ (35 բնակավայրերի անվանացանկ) **ԱՏՀ կոորդինատներ՝** _____

Ընտանիքի ID-ն՝ ____

Ախուրյան խոշորացված համայնք
Քաղաքացիության ինդեքսի հարցում, հունիս, 2023թ.

Բարև, ես _____ եմ, աշխատում եմ Հայաստանի Ուրբան կայուն զարգացման անկախ հիմնադրամում: Մենք հետազոտություն ենք անցկացնում CapSLoc ծրագրի շրջանակներում՝ Ախուրյան խոշորացված համայնքի համար: Ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի խոշորացված համայնքներում տեղական առաջնորդությամբ ընթացող զարգացումը: Ձեր տնային տնտեսությունը պատահականության սկզբունքով է ընտրվել այս հետազոտության համար: Հարցումն անանուն է: Ձեր պատասխանները ընդհանրացվելու են այլ հարցվողների պատասխանների հետ և դառնալու են տվյալադարանի մի մաս: Հարցազրույցի ընթացքում Ձեր պատասխանները չեն վերագրվելու Ձեր անվանը, Ձեր ճշգրիտ հասցեին/բնակավայրին կամ հեռախոսահամարին: Այսօր ուզում եմ Ձեր կարծիքը հարցնել Ախուրյան խոշորացված համայնքի և բնակավայրի բնակիչների համար կարևոր մի քանի հարցերի շուրջ: Ձեր տնային տնտեսության՝ հարցմանը մասնակցել ցանկացող յուրաքանչյուր չափահաս անդամից կպահանջվի առավելագույնը 10-15 րոպե: Կարո՞ղ եմ սկսել:

Տնային տնտեսություն մուտք գործելու փորձ և տեղեկացված համաձայնություն

1. Տնային տնտեսությունը համաձայնեց մասնակցել հարցմանը
2. Տանը ոչ ոք չկար / Ոչ ոք դուռը չբացեց
3. Տանը չափահաս որևէ մեկը չկար
4. Տնային տնտեսության որևէ անդամ հայերենի չէր տիրապետում
5. Բնակարանին մոտենալ հնարավոր չեղավ
6. Տնային տնտեսությունը մերժեց մասնակցել հարցմանը
7. Հարցվողն ընդհատեց հարցազրույցը

Տնային տնտեսության՝ վերջին 6 ամիսներին մշտապես բնակվող 18 տարին բոլորած
անդամների թիվը՝ _____

Հարցվողի ID-ն՝ ____

Ամսաթիվ՝ ____/____/2023թ.

Հարցազրույցի մեկնարկի ժամը՝ _____:_____

Բաժին 1. Ընդհանուր հարցեր

Հ1. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք հետաքրքրված Ձեր համայնքի կյանքով:

1. Բոլորովին հետաքրքրված չեմ
2. Առանձնապես հետաքրքրված չեմ
3. Որոշ չափով հետաքրքրված եմ
4. Շատ հետաքրքրված եմ

00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Հ2. Երբ ընտրություններ են լինում, Դուք քվեարկում եք մի՞շտ, սովորաբա՞ր, թե՝ երբեք
չեք քվեարկում: Խնդրում եմ պատասխանեք առանձին-առանձին՝ հետևյալ մակարդակներից յուրաքանչյուրի համար:

		Երբեք	Սովորաբար	Միշտ	Մինչ օրս քվեարկելու իրավունք չեմ ունեցել (չկարդալ)	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Չկարդա՛լ)
Հ2.1	**ՏԻՄ ընտրություններ**	1	2	3	98	00
Հ2.2	**Համապետական ընտրություններ**	1	2	3	98	00

Հ3. Ձեր կարծիքով մեր երկրի քաղաքական համակարգը որքանո՞վ է նպաստում, որ Ձեզ նման մարդկանց կարծիքը հաշվի առնվի տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացում:

1. Ընդհանրապես չի նպաստում
2. Շատ քիչ է նպաստում
3. Որոշ չափով է նպաստում
4. Բավականաչափ նպաստում է
5. Զգալի չափով է նպաստում

00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Հ4. Մարդիկ տարբեր պատկերացումներ ունեն իրենք իրենց մասին և այն մասին, թե
ինչպես են հարաբերվում իրենց շրջապատող աշխարհին: Խնդրում եմ գնահատել, թե
որքանով եք Ձեզ մոտ համարում Ձեր բնակավայրին, համայնքին, մարզին, երկրին:
(Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես չեմ առնչվում	Շատ չեմ առնչվում	Առնչվում եմ	Շատ եմ առնչվում	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Չկարդալ)
Հ4.1	Բնակավայրին (անվանե՛ք գյուղը)	1	2	3	4	00
Հ4.2	Համայնքին (Ախուրյան խոշորացված համայնք)	1	2	3	4	00
Հ4.3	Մարզին (Շիրակի մարզ)	1	2	3	4	00
Հ4.4	Երկրին (Հայաստան)	1	2	3	4	00

Հ5. Խնդրում եմ պատասխանել, թե արդյո՞ք համաձայն եք հետևյալ պնդումների հետ: (Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Չկարդալ)
Հ5.1	**Ուրախ եմ, որ ապրում եմ Ախուրյան խոշորացված համայնքում:**	1	2	3	4	5	00
Հ5.2	**Կցանկանայի Ախուրյանի խոշորացված համայնքից տեղափոխվել այլ համայնք, եթե հնարավորություն ունենայի:**	1	2	3	4	5	00
Հ5.3	**Ես գնահատում եմ այն մարդկանց, ովքեր ապրում են Ախուրյան խոշորացված համայնքում:**	1	2	3	4	5	00
Հ5.4	**Ես բավարարված եմ Ախուրյան խոշորացված համայնքի տրամադրած ծառայություններով:**	1	2	3	4	5	00
Հ5.5	**Ես հետաքրքրված եմ Ախուրյան խոշորացված համայնքի ծրագրերով:**						

Բաժին 2. Քաղաքացիության ինդեքսի հարաբերությունների չափում

Հ6. Ես կկարդամ մի քանի պնդում՝ համայնքի մաքրության և գեղեցկության մասին: Խնդրում եմ պատասխանել, թե ի՞նչ եք մտածում Ձեր համայնքի մասին: (Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Չկարդա՛լ)
Հ6.1	**Իմ համայնքի մարդկանց մեծ մասը հարգանքով է վերաբերվում հանրային տարածքներին և հոգ է տանում դրանց մասին:**	1	2	3	4	5	00
Հ6.2	**Համայնքային ծառայությունները բավարար են Ախուրյանի խոշորացված համայնքը մաքուր պահելու համար:**	1	2	3	4	5	00
Հ6.3	**Ընդհանուր առմամբ Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան մաքուր են, որքան իմը:**	1	2	3	4	5	00
Հ6.4	**Եթե ես զբոսաշրջիկ լինեի, շատ ուրախ կլինեի այցելել Ախուրյան խոշորացված համայնք:**	1	2	3	4	5	00
Հ6.5	**Ընդհանրապես Ախուրյան խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերը նույնքան գեղեցիկ են, որքան իմը:**	1	2	3	4	5	00
Հ6.6	**Ես Ախուրյան խոշորացված համայնքը համարում եմ գեղեցիկ:**	1	2	3	4	5	00

Հ7. Առհասարակ ի՞նչ եք կարծում՝ կարելի է վստահել մարդկանց մեծ մասին, թե՝ անհրաժեշտ է շատ զգույշ լինել մարդկանց հետ գործ ունենալիս:

1. Մարդկանց մեծ մասին կարելի է վստահել
2. Անհրաժեշտ է շատ զգույշ լինել

00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Հ8. Այժմ ես կկարդամ մի քանի պնդում՝ ուրիշների հանդեպ վստահության, բարության և քաղաքավարության մասին: Խնդրում եմ պատասխանել, թե ինչ եք մտածում Ձեր համայնքի մասին: (Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Լռկնում է)
Հ8.1	**Բարությունն ու քաղաքավարությունը Ախուրյան խոշորացված համայնքին բնորոշ հատկանիշներ են:**	1	2	3	4	5	00
Հ8.2	**Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ Ախուրյան խոշորացված համայնքում մարդիկ վստահելի են:**	1	2	3	4	5	00
Հ8.3	**Ախուրյան խոշորացված համայնքի այլ բնակավայրերի բնակիչները նույնքան վստահելի են, որքան իմ բնակավայրում ապրողները:**	1	2	3	4	5	00
Հ8.4	**Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները հակված են լավ նպատակի համար կամավոր աշխատանք կատարել:**	1	2	3	4	5	00
Հ8.5	**Տեղացիներն անմիջապես օգնություն կտրամադրեն դժվար կացության մեջ հայտնված զբոսաշրջիկին:**	1	2	3	4	5	00

Հ9. 1-ից մինչև 10-բալանոց սանդղակով, որտեղ 1-ը նշանակում է «Ընդհանրապես բավարարված չեմ», իսկ 10-ը՝ «Լիովին բավարարված եմ», խնդրում եմ գնահատել, թե այս պահի դրությամբ որքանով եք բավարարված Ախուրյան խոշորացված համայնքի տեղական ինքնակառավարման գործընթացով և տեղական պաշտոնյաների աշխատանքով:

		Ընդհանրապես բավարարված չեմ									Լիովին բավարարված եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (չկարդամ!)
Հ9.1	**Տեղական ինքնակառավարմամբ**	1	2	3	4	5	6	7	8	9	10	00
Հ9.2	**Համայնքապետի աշխատանքով**	1	2	3	4	5	6	7	8	9	10	00
Հ9.3	**Համայնքի ավագանու աշխատանքով**	1	2	3	4	5	6	7	8	9	10	00
Հ9.4	**Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքով**	1	2	3	4	5	6	7	8	9	10	00

Հ10. Հիմա կկարդամ մի քանի պնդում՝ հանրային կառույցների հետ բնակիչների հարաբերությունների մասին: Խնդրում եմ պատասխանել, թե ի՞նչ եք մտածում Ձեր համայնքի մասին: (Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (չկարդամ!)
Հ10.1	**Եթե ես բողոքեի հանրային ծառայության ցածր որակից, վստահ եմ, որ իմ բողոքը լուրջ կդիտարկվեր:**	1	2	3	4	5	00
Հ10.2	**Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մեծ մասը հարգում է կանոնները:**	1	2	3	4	5	00
Հ10.3	**Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչների մի մասը պատշաճ կերպով չի վճարում տեղական հարկերն ու տուրքերը:**	1	2	3	4	5	00

Հ10.4	Ընդհանուր առմամբ, մեր բնակավայրի բնակիչներն ավելի շատ են հարգում կանոնները, քան Ախուրյան համայնքի այլ բնակավայրերի բնակիչները:	1	2	3	4	5	00
Հ10.5	Տեղական մակարդակում քաղաքական գործիչ լինելը շատ հետաքրքիր և գրավիչ փորձ է:	1	2	3	4	5	00
Հ 10.6	Ես պատրաստ կլինեի իմ թեկնածությունն առաջադրել հաջորդ ՏԻՄ ընտրություններին:	1	2	3	4	5	00
Հ10.7	Տեղական քաղաքականության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում աշխատում են իրենց անձնական շահերի, ոչ թե հանրային բարօրության համար:	1	2	3	4	5	00
Հ10.8	Համայնքների խոշորացումն ավելի շատ առավելություններ, քան թերություններ բերեց:	1	2	3	4	5	00

Հ11. Ձեր բնակության վայրի համար խնդրում եմ գնահատել, թե որքանով եք բավարարված ստորև թվարկածով: (Ամեն մի ենթահարցից հետո կարդալ պատասխանի բոլոր տարբերակները)

		Ընդհանրապես գոհ չեմ	Գոհ չեմ	Գոհ չեմ, բայց գոհ չեմ նաև գոհ չեմ	Գոհ եմ	Լիովին բավարարված եմ	Կիրառելի չէ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (Լռություն)
Հ11.1	Հանրային տրանսպորտի որակով	1	2	3	4	5	98	00
Հ11.2	Ճանապարհների և մայրուղիների որակով	1	2	3	4	5	98	00
Հ11.3	Կրթության որակով	1	2	3	4	5	98	00
Հ11.4	Օդի որակով	1	2	3	4	5	98	00
Հ11.5	Ջրի որակով	1	2	3	4	5	98	00

Հ11.6	**Առողջապահության որակով**	1	2	3	4	5	98	00
Հ11.7	**Բնակարանային պայմանների որակով**	1	2	3	4	5	98	00

Հ12. Ես կկարդամ մի քանի պնդում՝ համակեցության և բնակավայրերի գերծանրաբեռնվածության պատճառով առաջացած խնդիրների նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մասին: Խնդրում եմ պատասխանել, թե ինչ եք մտածում Ձեր համայնքի մասին:

		Ընդհանրապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Ոչ համաձայն եմ, ոչ էլ համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ	Չգիտեմ/ Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛)
Հ 12.1	**Քաղաքացուց չափազանց երկար ժամանակ է պահանջում Ախուրյանի համայնքապետարանի ց քաղաքաշինական թույլտվություն (շինարարության և քանդման թույլտվություն, ավարտական ակտ և այլն) ստանալու համար:**	1	2	3	4	5	00
Հ12.2	**Ախուրյան խոշորացված համայնքի բնակիչները շատ հարգալից վերաբերմունք են ցուցաբերում շրջակա միջավայրի նկատմամբ (էլեկտրաէներգիայի/ ջրի խնայողություն, թափոնների տեսակավորում և այլն):**	1	2	3	4	5	00
Հ12.3	**Տեղական ինքնակառավարման մարմինը պետք է շատ ավելին անի աղբահանությունը պատշաճ կերպով ապահովելու համար:**	1	2	3	4	5	00

Հ12.4	**Ընդհանուր առմամբ, Ախուրյան խոշորացված համայնքի մյուս բնակավայրերի բնակիչները նույնքան հարգալից են վերաբերվում շրջակա միջավայրին, որքան մեր բնակավայրի բնակիչները:**	1	2	3	4	5	00

Բաժին 3. Ժողովրդագրական հարցեր

Դ1. Տարիքը՝ _____

(Ճշգրտող հարց՝ Ձեր քանի՞ տարին եք բոլորել:)

Դ2. Սեռը՝

1. իգական
2. արական
00. Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Դ3. Այս բնակավայրու՞մ եք ծնվել:

1. Այո
0. Ոչ
00. Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Դ4. Ո՞րն է Ձեր կրթական ամենաբարձր աստիճանը:

1. Թերի տարրական
2. Տարրական
3. Թերի միջնակարգ
4. Միջնակարգ
5. Միջին մասնագիտական
6. Թերի բարձրագույն
7. Բարձրագույն
00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Դ5. Ինչպիսի՞ն է Ձեր ընտանեկան դրությունը:

1. Երբևէ չամուսնացած
2. Ամուսնացած
3. Այրի/կնակորույս
4. Ամուսնալուծված (այդ թվում՝ բաժանված)
00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Դ6. Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր հիմնական զբաղմունքը:

1. Աշխատում եմ մասնավոր ընկերությունում
2. Վճարովի հիմունքներով աշխատում եմ հասարակական կազմակերպությունում
3. Կամավոր հիմունքներով աշխատում եմ հասարակական կազմակերպությունում
4. Վճարովի հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան և այլն)
5. Կամավոր հիմունքներով աշխատում եմ հանրային ոլորտի կառույցում (պետական դպրոց, հիվանդանոց, համայնքապետարան, մարզպետարան և այլն)
6. Ուսանող/աշակերտ եմ
7. Թոշակառու եմ
8. Գործազուրկ եմ
9. Զբաղվում եմ գյուղատնտեսությամբ /վերակոդավորված/
10. Տնային տնտես/տնտեսուհի եմ /վերակոդավորված/

98. Այլ՝ _____ (խնդրում եմ նշել) /վերակոդավորված/

00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Դ7. Ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր տնային տնտեսության ընդհանուր եկամուտը:

1. Բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար
2. Բավարար գումար ունենք սննդի համար, բայց հագուստ գնելը դժվար է
3. Բավարար գումար ունենք սննդի և հագուստի համար, կարողանում ենք խնայել որոշ գումար, բայց չենք կարող թանկարժեք իրեր՝ օր. ավտոմեքենա, գնել
4. Կարող ենք գնել որոշ թանկարժեք իրեր, օրինակ՝ ավտոմեքենա, բայց ոչ բնակարան կամ ամառանոց
5. Կարող ենք գնել այն ամենը, ինչ ցանկանում ենք, ներառյալ բնակարան կամ ամառանոց

00. Չգիտեմ/Հրաժարվում եմ պատասխանել (չկարդա՛լ)

Շատ շնորհակալություն

հարցմանը մասնակցելու համար

Ես կխնդրեմ Ձեզ նաև տրամադրել Ձեր հեռախոսահամարը՝ տվյալների որակի ապահովման և վերահսկման նպատակով: Մեր հետազոտական թիմի անդամները առաջիկա օրերին պատահականության սկզբունքով կընտրեն հարցվածներին և կստուգեն հարցազրույցների և պատասխանների ճշգրտությունը հետզանգերի միջոցով:

Անուն: _____

Հեռախոսահամար

Հարցազրույցի ավարտի ժամը՝ _____:_____

«ՀԿ Կենտրոն»
քաղաքացիական
հասարակության
զարգացման ՀԿ

www.ngoc.am
info@ngoc.am

«Ուրբան» կայուն
զարգացման հիմնադրամ

www.urbanfoundation.am
info@urbanfoundation.am

«Կանայք հանուն
զարգացման» ՀԿ

wfd.am
info@wfd.am

«Հայկական Կարիտաս»
բարեսիրական ՀԿ

www.caritas.am
info@caritas.am

«Կոմպասս»
գիտահետազոտական,
կրթական եւ
խորհրդատվական
կենտրոն» ՀԿ

www.compass-gyumri.am
compassgyumri@gmail.com